ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(79-րդ տարի) Թիվ-1 (1695) Հունվար 2025

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Ազգային համախմբում՝ ծրագրի և ճանապարհային քարտեզի շուրջ (էջ 1-4)

2- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Պատրանքներ. ինքնախաբեության մեխանիզմը և հետևանքները (էջ 5-7)

3- Վարչաքաղաքական

Կարէն Խանլարեան
ՀՅ Դաշնակցութիւնը եւ Հայաստանի դեմարկացիայի առաջին փորձերը (Համառօտ ուսումնասիրութիւն) (էջ 8-19)

4- Աշխարհաքաղաքական

Նարե Գևորգյան
ԻԻՀ դիրքորոշումը Սիրիայում նոր իշխանության ձևավորման վերաբերյալ (էջ 20-22)

Լիանա Պետրոսյան
Սիրիական գործընթացների ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջանի վրա (էջ 23-25)

5- Պատմության լուսարձակ

Վանիկ Վիրաբյան
Հայ-վրացական պաշտպանական միության հարցը 1920 թ. (էջ 26-38)

6- Ընթերցումներ

Մարգարիտա Խաչատրյան
Տորոնտոյի «Արձագանգ» ամսաթերթը Պարույր Սեւակի մասին. (էջ 39-42)

7- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Դիմում՝ լաւ բան մը ընելու (էջ 43)

8- Դաշնակցական բեմ

Պարգեւ Աւագեան
Անձնուրացութի՞ւն, թէ՞ ժողովրդավարութիւն (էջ 44)

Ազգային համախմբում՝ ծրագրի և ճանապարհային քարտեզի շուրջ

Ուտք գործելով 2025 թվական՝ Հայաստանի բնակչությունը բախվեց հարկերի, տուրքերի, զգալի մեծացման, համատարած հայտարարագրման նոր իրողության հետ: Մայրաքաղաքի բնակչության գլխին սպառնալիքի պես կախվեց երթևեկության հանրային միջոցների զգալի թանկացման հեռանկարը: Շատ-շատերն, ովքեր հավատացել էին, թե իրենք այս երկրի 3 մլն վարչապետերի թվում են, սկսում են իրենց հաշիվ տալ, որ 2018 թվականին արված սիրո խոստովանություններից հետո վարչապետ Փաշինյանը, միանձնյա և կուսակցական թիմի անվերապահ համաձայնությամբ, արել է այն, ինչ ցանկացել է՝ թքած ունենալով, թե երկրում ով ինչպես կգնահատի իր գործողությունները, մասնավորապես և այն թե սահմանած հարկատուրքերը ինչպիսի անտանելի բեռ կդառնան ժողովրդի համար: Ընդ որում, հատկանշական է, որ «թավշյա» իշխանությունն իր հակաժողովրդական «բարեփոխումներն» իրականացնում է հատկապես այն ոլորտներում, որոնք ժամանակին ինքը դարձրեց թիրախ նախկիններին հարվածելու և հոգագարության հասած զանգվածներից իշխանության մանդատ կորզելու համար: Հարցն այս դեպքում վերաբերում է ոչ միայն հարկերին, տուրքերին ու համընդհանուր թանկացումներին, այլև օրինակ բնապահպանական խնդիրներին, մայրաքաղաքում ծավալված շինարարությանը:

Նախկինում մեղադրելով իշխանությանը կառավարման բրգաձև համակարգ ձևավորելու մեջ՝ փաշինյանական իշխանությունն իր ձեռքին կենտրոնացրեց ոչ միայն համապետական և տեղական իշխանության մարմինները, այլև տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական և կենսագործունեության մյուս ոլորտների կառավարումը անկախ հանգամանքից, թե մասնագետներին փոխարինող ՔՊ-ականները որքանով էին տիրապետում ստանձնած պարտականություններին: Թիրախ դարձնելով իշխանության թևերի հակակշռելիության և ներքին ժողովրդավարության հարցերը նոր իշխանության ավտորիտար առաջնորդը հլու կամակատարի վերածեց խորհրդարանն ու կառավարությունը, ուժային կառույցներն ու արդարադատության համակարգը՝ Սահմանադրական դատարանով հանդերձ: Արդարադատության և ուժային կառույցները վերածվել են կույր գործիքի, որոնք ժողովրդի նկատմամբ որդեգրել են պատժիչ գործառույթ ու ապահովում են իշխանության անվերահսկելի գործունեությունը, թե՛ երկրի ներքին, և թե՛ արտաքին հարթակներում: Հայաստանի անկախացման օրերից սկսած իրավապահ համակարգը երբեք չի իրականացրել նման զանգվածային և աղաղակող քաղաքական հետապնդումներ: Ավելին, ընտրություններում թիմակիցների պարտության դեպքում, ընտրված պաշտոնյաների նկատմամբ հարուցվում են քրեական գործեր, իրականացվում են բանտարկություններ, այս ճանապարհով հասնելով նրանց հրաժարականին և նույն պաշտոնում ՔՊ-ականի նշանակմանը: Իշխանությանը քննադատող մասնագետները հեռացվում են աշխատանքից, կամ սահմանափակվում է նրանց պաշտոնական գործունեությունը: Կառավարության օրակարգերը քննարկվում են գրեթե ամբողջովին փակ ռեժիմով, գնումներն ու տնտեսական այլ գործարքներն իրականացվում են հանրության աչքից հեռու: Նույն կերպ անվերահսկելիորեն տնօրինվում է պետական բյուջեն, ակնհայտ են կոռուպցիայի խայտառակ դրսևորումները, որոնք իրականացվում են հակակոռուպցիոն պայքարի մեծադողոդ ճառերին զուգահեռ: Աննախադեպ է նաև արտաքին քաղաքական գործընթացների ամբողջովին փակ բնույթը, որոնց մասին ժողովուրդը սովորաբար տեղեկանում է թշնամական ուժերին հերթական զիջումների ժամանակ: Եվ սա մի մարդու «ժողովրդավարական ու թափանցիկ» գործելաձևն է, ով 2018 թվականի օգոստոսին Հայաստանի Հանրապետության բազմամարդ հրապարակում իրեն ճոճելով հայտարարում էր, թե այդուհետ երկրի համար

բոլոր կարևորագույն վճիռները կայացվելու են այդ հրապարակում՝ հանրության հավաքական կամքով: Ասվում և արվում էր առաջին ու վերջին անգամ:

Լրատվամիջոցներն ու ընկերային ցանցերը լի են տեսանյութերով, որոնք ներկայացնում են մինչև իշխանության հասնելը կամ իշխանության առաջին շրջանում երկրի ղեկավարի արած հայտարարություններն ու նույն խնդիրների շուրջ նրա՝ 180 աստիճանով հակառակ բնույթի մեկնաբանությունները հետագա տարիներին: Սա փաստում է, որ այս իշխանությունն, իր առաջնորդի գլխավորությամբ, խորությամբ գիտակցում է այն քայլերի հակապետական ու հակազգային բնույթը, որոնցում նա մեղադրում էր նախկիններին, իսկ այժմ ինքն է իրականացնում՝ փորձելով արդարանալ իրեն հատուկ կեղծ, ճղճղան ու դեմագոգիկ մտավարժանքներով:

Բայց հնարավոր չէ անվերջ անել մեկ բան և ներկայացնել այն մեկ այլ լույսի ներքո: Այս իշխանության դեմքն ու վարած քաղաքականությունը որոշակի հանգամանքների պարտադրմամբ ժամանակի ընթացքում դարձան պարզ ու տեսանելի: Երբ երկիրը ղեկավարվում է մեկ անձի անզսպելի ու անվերահսկելի կամայականությամբ, բռնությամբ ու անօրինականությամբ, կարելի՞ է դեռ պատրանքներ ունենալ արևմուտքի ականջին հաճո ժողովրդավարական բարեփոխումների մասին հայտարարությունների անկեղծության հարցում: Մյուս կողմից ակնհայտ չէ՞, որ Արևմուտքի որդեգրած սկզբունքի համաձայն, ավելի լավ է խամաճիկ հեղինակապետություններում իշխեն իրենց շանորդիները, քան ինքնուրույն, սեփական երկրների շահերով առաջնորդվող ազգային ուժերը: Արդյո՞ք այդ մասին չեն վկայում Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի իրադարձությունները:

Պատերազմում պարտված և պարտության խայտառակ հայտարարություն (իրականում պայմանագիր, որի սահմանադրական ընթացակարգով վավերացման հարցը շրջանցվեց փաստաթղթի վերնագիրը փոխելով) ստորագրած իշխանությունը որքան էլ փորձի նախկինների վրա բարդել դավաճանության մեղքը, կարո՞ղ է արդարանալ, երբ ոչ միայն ամբողջովին հրաժարվեց պաշտպանել Արցախն ու արցախցիներին, այլև վերջիններիս օրինական իրավունքների բարձրաձայնումն արգելում ու հետապնդում է Հայաստանում:

Եթե Ադրբեջանի ղեկավարի հետ հայ ղեկավարը հանցակից չէ նաև Արցախի քաղաքական ու ռազմական ղեկավարների հետապնդման հարցում, ինչո՞ւ նա և ողջ իշխանական համակարգը ծպտուն չեն հանում, երբ Արցախի ղեկավարության նկատմամբ իրականացվում է խայտառակ դատավարություն: Այս հարցում ավելորդ է անգամ կասկածներ ունենալը, եթե նկատի ունենանք, որ Արցախի պաշտպանությանը մասնակցած բարձրաստիճան ռազմական գործիչների մյուս մասն էլ գտնվում է Հայաստանի բանտերում և հալածվում է Հայաստանի իշխանության կողմից: Քրեականի անվան տակ քաղաքական հալածանքների, գործունեության սահմանափակման են ենթարկվում նաև Արցախի վարչական ու քաղաքական ղեկավարները՝ սկսած Արցախի Հանրապետության վերջին նախագահից:

Քաղաքական անօրինական դատավարություն կազմակերպելով Արցախի առաջնորդների դեմ՝ Ադրբեջանի ղեկավարին անհրաժեշտ է արդարացնել իր գործողությունները՝ վերջիններին որակելով անջատողականներ, ահաբեկիչներ, քրեական հանցագործներ:

Այդպես ներկայացնելու համար նրան անհրաժեշտ է խեղաթյուրել այն իրողությունը, որ օրինական հանրաքվեների և ընտրությունների ճանապարհով ինքնորոշված Արցախի Հանրապետությունը փաստացի ճանաչվել է, պաշտոնական փոխհարաբերություններ է իրականացրել բազմաթիվ պետությունների պաշտոնական ներկայացուցիչների հետ, Արցախի վերջնական կարգավիճակի հարցով տարիներ շարունակ գործել է գերտերությունների ու շահագրգիռ մյուս ուժերի կողմից ստեղծված միջազգային միջնորդական խումբ:

Ալիևը պարտադրում է, որ Հայաստանը պահանջի ԵԱՀԿ Մինսկի խմբի լուծարումը և ետ քաշի միջազգային ատյաններից Ադրբեջանի հանցագործությունների դեմ ներկայացված բողոքներն ու իրավական հայցերը: 20 թվականի պարտությունից հետո Ալիևից սարսափած Հայաստանի ղեկավարն անմիջապես արձագանքեց այս պահանջին՝ հայտարարելով, թե այն ճիշտ է և ընդունելի: Ո՞ւմ է ծառայում և ում շահերն է արտահայտում այն իշխանությունը, որը մշտապես արհամարհել է հայ ժողովրդի շահերն ու պահանջները և մշտապես ենթարկվել է թշնամի երկրի ղեկավարի պարտադրանքին և չկա հայկական կողմի ներկայացրած մեկ պահանջ, որը կընդուներ հակառակորդ կողմը: Հայաստանի բարձրագույն ղեկավար կազմում գործում են մարդիկ, ովքեր, ժողովրդի համոզմամբ, օտար երկրների շահերն են արտահայտում, և այդ մարդկանց միջոցով երկիրը, մասնավորապես և նրա արտաքին ու անվտանգային համակարգերը, ղեկավարվում են արտաքին ուժերի կողմից:

Հայաստանի իշխանությունը կայացնելով անհեռանկար ու անմիտ որոշում Եվրամիությանը միանալու մասին, ըստ էության, սկսում է ԵԱՏՄ-ից դուրս գալու գործընթաց: Տնօրինելով երկրի գործերին՝ այս ղեկավարությունը բոլորից լավ գիտի, որ ԵԱՏՄ-ի հետ հարաբերությունները խզելու դեպքում Հայաստանը սոցիալ-տնտեսական ու էներգետիկ առումով ուղղակի կփլուզվի: Ինչո՞ւ է ուրեմն իշխանությունը գնում երկրի համար կործանարար քայլի: Ինչո՞ւ ԱՄՆ հեռացող ղեկավարության հետ այս իշխանությունը կնքեց «Ռազմավարական գործընկերության խարտիա» ըստ որի, ռազմական դիտորդներ պետք է հայտնվեն Հայաստանի սահմանին, սակայն չեն նախատեսվում երկրի դեմ ծառացած սպառնալիքներին հակազդելու իրական մեխանիզմներ: Հենց այս օրերին աչքի առաջ ունենալով աշխարհաքաղաքական հակամարտության արանքում փլուզվող Ուկրաինայի օրինակը, ինչո՞ւ է Հայաստանի իշխանությունը դիմում արտաքին քաղաքական կտրուկ շրջադարձերի և որոշումների, որոնք նրան դարձնում են թիրախ գերտե-

ությունների բախման մեջ, շոշափելի ոչինչ չեն տալիս փոխարեները թշնամացնում են տարածաշրջանում դերակատար և մեզ հետ հիմնարար շահեր ունեցող դաշնակիցների հետ: Հայաստանի իշխանությունը ինչ հաշվարկով է կտրում այն ճյուղը, որի վրա նստած է, դա անում է իր կամքով, թե ենթարկվում է արտաքին այն ուժերի թելադրանքին, որոնց ազդեցությունից չի կարող ձերբազատվել: Ընդհակառակը, նրան ստիպում են անընդհատ փաստարկել, որ ինքը գնում է Ռուսաստանի հետ հարաբերությունների խզման, թույլ չեն տալիս մոտենալու Իրանին, Չինաստանին և այլն: Ընդ որում, պահանջողները Ադրբեջանի ու Թուրքիայի հետ դաշնակից նույն ուժերն են, որոնք Հայաստանի շահերի հաշվին ողջ Անդրկովկասը ձգտում են ենթարկեցնել Թուրքադրբեջանական տանդեմին ստեղծելով տարածաշրջանում իրենց ծրագրերի իրագործման բարենպաստ կացություն: Ակնհայտ է, որ ռուսական զորքը Հայաստանի սահմաններից հեռացնելու պահանջի կատարումից հետո Հայաստանն առանց դիմադրության ընկնելու է Թուրքիայի գերիշխանության տակ: Եվ արդյո՞ք հենց այս հեռանկարը նկատի ունենալով չէ, որ Հայաստանի իշխանությունն այժմվանից հրաժարվում է մեր ինքնության բոլոր հիմնասյուներից՝ սկսած պատմական անցյալից, ցեղասպանության հարցից՝ ազգային կրթությունը, գիտությունը, մշակույթը մերժելուց, հասնելով մինչև ազգային բառից հրաժարմանը:

Այնուամենայնիվ ինչո՞ւ ժողովրդի պետական-անվտանգային հարցերը ոտնահարելու հետ, իշխանությունը շարունակում է խորացնել ու ընդլայնել իր նկատմամբ հանրության անգամ լոյալ շերտերի դժգոհությունը՝ պարտադրելով ներքին կյանքում իրականացվող փոփոխությունների ծանր բեռը: Պետք է ընդունել, որ իշխանությունը չի վախենում ժողովրդի հնարավոր ընդվզումից: Իշխանությունը համարում է, որ ժողովրդական որևէ նոր ընդվզում իր համար վտանգավոր չէ, քանի դեռ այն տարին-տարվա վրա կրկնվում է նույն սցենարով: Երբ հանրության լայն զանգվածները չեն հավատում, թե ազգային ուժերն իրատեսական և ծրագրված գործողություններով կարող են սպառնալ իշխանությանը, իսկ ազգային ուժերն այդ անելու համար անբավարար են համարում ժողովրդական ըմբոստացման թափը և երկու կողմն էլ հայտնվում են փակ պատի առջև: Իշխանությունը տեսնում է, որ ընդդիմադիր դաշտում պայքարի ալաքները ոչ պակաս չափով ուղղված են միմյանց դեմ և անհեռանկար է թվում այս դաշտի համախմբումը: Իշխանությունն իր միջոցներով խորացնում է անվստահության այս մթնոլորտը: «Դրոշակի» տարեվերջյան «Առաջնորդողում» նշել էինք. «Ակնհայտ է, որ մեր գլխավոր խնդիրը մենք ենք՝ հայ ժողովուրդը, որը, կամ հետևելով նիկոլփաշինյանական հավաքական անպատասխանատվության քարոզին, երկրի հետ կգնա կործանման, կամ ճիգ կանի փրկելու իրեն ու երկիրը»:

Մենք տեսնում ենք ինչ ճարպիկ մեթոդներով Նիկոլ Փաշինյանը կարողանում է պահպանել իր ապազգային թիմի ամբողջականությունը և նույն ճարպկությամբ վարկաբեկում, պառակտում է ազգային ճամբարի և երկրի առողջ, մտահոգ մեծամասնությանը, վիժեցնում է համախմբման հնարավորությունը:

Ամեն օր փողոցներում, խանութներում և այլուր լսելի են հասարակական տարբեր շերտերի ներկայացուցիչների համարձակ բողոքները, սակայն փոքր հրաբուխների նմանվող բազմաթիվ ժայթքումները չեն վերածվում մեծ հրաբխի: Ճի՞շտ է արդյոք այն տեսակետը, թե համապատասխան առաջնորդի բացակայությունն է պատճառը: Իսկ ո՞վ է հաղթող առաջնորդը՝ նա, ով հրապարակ է գալիս իրատեսական, հաջորդական քայլերից բաղկացած ծրագրով, ինչպես նաև տարբեր իրավիճակների համար փոփոխվող մարտավարության տարբերակներով: Այո, դժվար է փոխել իշխանությունը, երբ հեղափոխությունը կազմակերպված չէ դրսից և չունի «դրսի» նյութական, քաղաքական և այլ հովանավորությունը, կամ թե չի իրականացվում ներիշխանական պառակտման հետևանքով: Դժվար է երկրում իշխանություն փոխելը, երբ ընտրում ես պայքարի օրինական ճանապարհը, իսկ իշխանությունը քո դեմ պայքարում է՝ ոտնակոխելով օրենքն ու օրինականությունը:

Անցած վեց տարիների ընթացքում մենք մի քանի անգամ տեսել ենք իշխանության խուճապը ժողովրդական ըմբոստացումներից: Նման ընդվզումներին իշխանությունը հակադարձել է քաշվելով պատյանի մեջ և սպասելով մինչև ազգային ուժերը հայտնվելով ուժայինների պատի առջև կսպառեն իրենց անելիքն ու ըմբոստացած զանգվածների համբերությունը: Միաժամանակ իշխանությունը ընտրել է ոչ թե կրավորական սպասման քաղաքականությունը, այլ իր ձեռքն է վերցրել նախաձեռնությունը, այս ու այնտեղ հարվածներ հասցնելով փորձել է զանգվածներին համոզել, թե նրա առաջնորդներն անզոր են իշխանության ուժի առջև և, մյուս կողմից, շեղել է, մասերի է բաժանել ընդդիմադիր ներուժը, ստիպելով գնալու տարբեր խնդիրների ետևից (նորանոր ձերբակալվողների ազատ արձակման պահանջ, բողոքներ ոստիկանների դեմ, արձագանք տարբեր կալիբրի իշխանավորների բարձրաձայնած հերթական անհեթեթություններին, իշխանական «ֆեյքերի» բանակի լայնածավալ հարձակում շարժման դեմ, շարժման առաջնորդների վարկաբեկման արշավ, ուշադրության շեղում դեպի բանակցային, սահմանային և արտաքին քաղաքական այլ խնդիրները):

Երկրի ղեկավարման գործում անկարող, իսկ քաղաքական ինտրիգանության հարցում հաջողակ Փաշինյանը ցայսօր կարողացել է լուծել ազգային ըմբոստացումները լռեցնելու իր խնդիրը, «բլիթի ու ճիպոտի միջոցով» միասնական պահելով իր թիմը և ազգային ճամբարում խաղալով քաղաքական մեծ հավակնություններ ունեցող անհատների, մանր ու մեծ խմբերի թուլությունների վրա, ինչպես և քաղաքական ու հանրային դաշտերի միջև անվստահություն մտցնելու ճանապարհով: Առնվազն ի՞նչ պետք է անեն ազգային ուժերը երկիրը կործանարար այս փակուղուց դուրս բերելու համար:

- Նախ և առաջ պետք է հրաժարվեն նստելուց և սպասելուց, թե երբևէ ողջ ժողովուրդը փողոց դուրս կգա՝ այդպես չի լինում ոչ մի հեղափոխության ժամանակ, այլ ճիշտ հակառակ հաջորդականությամբ: Ժողովրդական էներգիան շոգին է, բայց գնացքը դեպի նախանշված նպատակակետ պետք է առաջնորդի շոգեքարշը: Որքան հստակ լինի շոգեքարշի ընթացքը, այնքան կավելանա շոգու ուժը: Ճահիճը չի կարող ալեկոծվել, և պատը ճեղքեր չի տա եթե նստես ու սպասես դրանց, այդ ամենը հնարավոր է, եթե կան նպատակակետ տանող շղթային մաս կազմող իրարահաջորդ, բազմազան, գործողություններ:

Հայ ժողովուրդը արտաքին հովանավորությամբ պաշտպանված բռնատիրական ռեժիմից կարող է ազատագրվել միմիայն համընդհանուր միասնականությամբ, ընդհանուր նպատակի շուրջ բոլոր քաղաքական և այլ ուժերի համախմբմամբ, ինչն էլ կիրականանա, եթե միջոցն ու նպատակը հստակորեն բանաձևվեն և ամրագրվեն ըստ համապատասխան ճանապարհային քարտեզի: Միաժամանակ ժամանակավորապես հրաժարվելով գաղափարական կամ այլ բնույթի տարակարծություններից, որոնք կարող են հիմնական դաշինքների ձևավորման հիմք դառնալ անցումային փուլից հետո:

- Հասարակական դաշտի միավորումը հնարավոր է, եթե տեղի է ունենում քաղաքական դաշտի, մտավորականության, մշակութային և այլ ոլորտների ներկայացուցիչների համախմբումը: Սա իր հերթին հնարավոր է, եթե ի սկզբանե հստակեցվում է, թե ինչպես է տեղի ունենալու ապագա ազգային իշխանության ձևավորումը: Այս հարցում գյուտեր անելու անհրաժեշտություն չկա՝ դրա օրինական ճիշտ և համընդհանուր մասնակցությամբ իրականացումը հնարավոր է միայն ընտրությունների ճանապարհով: Սակայն, որպեսզի նրանք, ովքեր այսօր առաջին գծում են, վաղը չդառնան նաև ընտրությունների կազմակերպողը, անհրաժեշտ է ի սկզբանե հստակեցնել արդար (հավասար ելակետային հնարավորություններով) ընտրությունների անցկացման մեխանիզմների հարցը:

- Մինչ ընտրությունների անցկացման և իշխանության ձևավորման սահմանագիծը, Սրբազան պայքարը կարող է հանդիսանալ միասնականության և գործակցության ոգով տեղի ունեցող գործընթացների օրինականության գլխավոր երաշխավորը:

- Պետք է հայտարարվի, որ ապազգային իշխանությունների ինքնապահպանմանն ուղղված ապօրինությունների համար իշխանափոխությունից հետո պատասխանատու են լինելու բոլոր նրանք, ովքեր այդ ընթացքում կշարունակեն մաս կազմել հանցավոր թիմին, և պատասխանատվության չեն ենթարկվի նրանք, ովքեր երկրի համար ճակատագրական պահին կլինեն ժողովրդի կողքին:

- Պետք է հայտարարվի, որ տարիներ շարունակ հասարակության մեջ ատելություն սերմանող, կեղծիքներ տարածող, ժողովրդին պառակտող, քաղաքական և հանրային դաշտի ներկայացուցիչներին վարկաբեկող իշխանության ստեղծած ֆեյքերի ֆաբրիկայի ներկայացուցիչներն իշխանափոխությունից հետո խստագույն պատասխանատվության են ենթարկվելու իրենց հանցավոր գործունեությունից օր առաջ չհրաժարվելու դեպքում:

- Անհրաժեշտ է մերկացնել և ամենօրյա պարսավանքի ենթարկել արդարադատության համակարգի և ուժային կառույցների այն ներկայացուցիչների գործունեությունը, որոնք իշխանության հրահանգով մասնակցում են ազգային ուժերի և հասարակական ակտիվիստների նկատմամբ ձեռնարկվող հետապնդումներին, ֆիզիկական բռնություններին և կեղծ դատավարություններին:

- Ազգային ուժերը պետք է վերահաստատեն ավանդական և մնացած դաշնակիցների հետ հավասարակշիռ և կանխատեսելի փոխգործակցությունը շարունակելու հաստատակամությունը:

Կրկնենք, Նիկոլ Փաշինյանի ստեղծած հակապետական հակազգային իշխանությունը շարունակում է գոյատևել իր հաստատած բռնիշխանական համակարգի շնորհիվ, և ազգային ուժերի անմիաբանության, ժողովրդի ու ազգային ուժերի միջև եղած վստահության պակասի պատճառով: Պետք է հասկանալ, որ այս պայմաններում նրանք, ովքեր պետք է իշխանության դեմ պայքարը շեղեն ներազգային և ընդդիմադիր ուժերի միջև պարզաբանումների դաշտ, նրանք, ովքեր օրվա ճակատագրական հարցերը թողած հանրության ուշադրությունը կշեղեն դեպի «նախկիններ» և կխառնեն տարբեր հարցերն իրար, կամա թե ակամա ջուր կլցնեն իշխանության ջրաղացին և կօգնեն երկարաձգելու նրա կործանարար գործունեությունը:

Իհարկե շարադրվածը «Դրօշակի» մոտեցումն է, և մենք չենք հավակնում դիտարկելու դրանք որպես անվերապահորեն ընդունելի կամ ամբողջական դիրքորոշումներ: Գուցեև միասնական ուժերով հնարավոր է ստեղծել տարբեր, մանրամասն և կատարյալին մոտ մի ծրագիր: Գլխավորն ազգային փրկության ծրագրի շուրջ համընդհանուր միասնականության կայացումն է, որի անհրաժեշտության մեջ շահագրգիռ են բոլորը, բացի իշխանություններից, նրանց արբանյակներից և երկրի կործանման հաշվին սեփական կոմֆորտն ապահոված փոքրամասնությունից: Ժամանակի թավալգլոր ընթացքը մեր և մեր պետության օգտին չէ, և ժամանակի հրամայականն է անկումի ընթացքի կասեցումը, երկրի նոր վերածնունդի հիմքերի ձևավորումը:

Մենք այսօր ապրում ենք մի իրականության մեջ, երբ քաղաքական և բարոյական առումով սպառված իշխանությունն արժանանում է համընդհանուր անհանդուրժողության, հեղափոխության ստվերը հետապնդում է սպառված համբերությամբ ժողովրդին, ազգային ուժերը, յուրաքանչյուրն իր զանգակատնից անընդհատ ազդարարում է պայքարի անհրաժեշտության մասին, սակայն բոլոր այս հանգամանքները չեն բորբոքում Սրբազան պայքարը, չեն ծնում հեղափոխություն: Պայքարի անհրաժեշտությունը ոչ թե մենաշնորհ, այլ պարտականություն ու պատասխանատվություն է բոլոր նրանց համար, ովքեր հավակնում են խոսելու պետության և ժողովրդի շահերի պաշտպանության մասին: ■

Պատրանքներ. ինքնախաբեության մեխանիզմը և հետևանքները

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Երբ ուշադիր դիտարկում ենք այն հարցը, թե ի վերջո ի՞նչ է պատրանքը և ի՞նչ է այն տալիս մարդուն, ունենում ենք հետևյալ պատկերը. կյանքն անքննելի ու անկառավարելի երևույթ է: Ցանկացած պահի այն մեզ մատուցում է մեկը մյուսից լավ ու վատ անակնկալներ: Երբ անակնկալը լավն է, մենք գոհ ենք ու երջանիկ, բայց երբ այն վատն է՝ մենք տառապում ենք կամ խուճապի մատնվում: Մարդն իր վիճակը թեթևացնելու համար ակամայից նախընտրում է ապրել նաև զուգահեռ իրականության մեջ: Այս իրականությունը գուցե կեղծ, բայց հաճելի բան է, այն լավն է նրանով, որ կառավարելի է: Պարտություն կրելով իրական կյանքում և հանգամանքներում, մենք ասես փարվում ենք այդ զուգահեռ կամ պատրանքային աշխարհին: Սրանք, ըստ էության, մեր երևակայության խաղերն են: Պատրանքները շատ նման են թմրադեղի: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ այդպես էլ հնարավոր չի լինում մարդկության ձեռքից խլել թմրադեղերը և սպիրտային խմիչքները: Ռուս ականավոր գրող Վասիլի Շուկշինը մի անգամ կատակով նկատել է՝ «Ոչինչ այնքան արագ և հեշտ չի միավորում մարդկանց, որքան խմելու հեռանկարը»: Պատրանքը փախուստն է՝ մարդու վրա ծանրացած և անելանելիության դուռը հասցրած իրականությունից: Իլյուզիաների մեջ հարմար տեղավորված մարդուն թվում է, թե այլևս «ուժեղ է»:

Սա, հոգեբանական կոմֆորտի գոտի է, չի ենթադրում որևէ պատասխանատվություն: Մարդը հորինում է երազանքներ, վերադասավորում իրականությունը և ապրում դրանց մեջ: Նա իր հակառակորդներին ու թշնամիներին ինչպես հարկն է «փռում է» գետնին, իշխում նրանց, ի կատար ածում իր ձգտումներն ու ցանկությունները: Մեծ հաշվով, ինչպես ասացինք, պատրանքը, ըստ սեփական հայեցողության, իրականությունը Կառավարելու երևույթ է: Այո, թող որ սուտ, բայց վստահաբար՝ ապրեցնող: Ընտրությունները և դրանց ընկալումներն ուղղակիորեն և անուղղակիորեն արտացոլում են ինքնախաբեության մեխանիզմը: Դա վերաբերում է թե՛ առանձին մարդուն և թե՛ հանրությանը:

Պատրանքների թեման ավելի նուրբ ու բարդ շերտեր ունեցող բան է՝ ունի նաև պատմական և առասպելաբանական հիմքեր ու հասնում է մինչև ժողովուրդների ու էթնոսների էպոսները, միֆոլոգիան, ազգային հիմնարար նկարագիրը, հոգեբանական հակվածությունը և այլն: Հետազոտողները սրանց մասին հաստատ հետաքրքիր ու արժեքավոր բաներ կունենան ասելու: Այս դեպքում մեր խնդիրը վերաբերում է միայն պատրանքների նորօրյա ընկալումներին: Քաղտեխնոլոգները արձանագրել են հետևյալ իրողությունը. ընտրությունները շատ նման են վիճակախաղի: Վիճակախաղի տոմս գնելիս, մարդու գիտակցությունը նրան ասում է՝ «մեկ է, նույնն է լինելու, ես շահող չեմ…», իսկ ենթագիտակցությունը նույն պահին մեղմ շշնջում է՝ «ո՞վ գիտե, մեկ էլ տեսար, շահեցի…»: Այսպիսով, վիճակախաղի տոմսով մարդը ոչ թե շահումի տեր է դառնում, այլ հույսի: Նա այդ տոմսով, ասես, հույս է գնում կրպակից և մինչև խաղարկությունը, նա իր մտքում «ստանում է» շահումը, ծախսում փողը ուզածի պես: Կյանքը բազմիցս է վկայել, որ ընտրվող իշխանությունները հիմնականում սեփական շահերի ջատագովներն են: Սխալվելու հեռանկարը էական չէ, կարևորը հույս կա, որ մի օր լավ է լինելու: Իզուր չի ասված՝ «Ցանկացած մարդ սխալվելու իրավունք ունի, իսկ որպեսզի նա կարողանա օգտվել այդ իրավունքից, անցկացվում են ընտրություններ»: Ժողովրդավարության հիմնարար թերություններից մեկն էլ այն է, որ «մեծամասնությունը անպատասխանատու լինելու իրավունք ունի»- հեգնանքով նկատել է մի հայտնի գործիչ: Ամենուրեք աշխարհում, այդպես է, այդպես է եղել նաև մեզանում: Հանրային բարեկեցությունը և պետության զարգացումը իրականացվում են այլ

օրենքներով՝ կառավարման համակարգի կատարելագործմամբ, լուրջ տնտեսություն ստեղծելով, երկրի անվտանգային հիմքերի անշեղ ամրապնդմամբ, արտաքին և ներքին ռազմավարությունների խելամիտ կիրառմամբ և այլն: Բայց, միևնույն է, զանգվածների համար գնահատականը միշտ նույնն է՝ «Կառավարությունը չի մտածում ժողովրդի մասին»: Իշխանությունը ինչ էլ անի, պարզ է, զանգվածին չի բավարարելու: Ինչո՞ւ սա հատուկ շեշտեցինք, որովհետև դա այն կետն է, որից սկսվում են իշխանությունների խաբեությունները և իհարկե՝ զանգվածների ինքնախաբեությունը: Կառավարությունները լավ գիտեն, թե իրենք ինչ են անում, ինչու և ինչպես: Իշխանությունները միշտ էլ կարողանում են լինել և՛ առավել մարտունակ և՛, իհարկե, առավել կազմակերպված: Եթե չլինեն Սահմանադրական պահանջները, հազիվ թե հնարավոր լինի իշխողների ձեռքից վերցնել նրանց աթոռները: Նրանք շատ կոնկրետ սեփական շահերն են հետապնդում, իսկ անձնական շահեր հետապնդողները միշտ էլ ավելի ուժեղ են, քան գաղափարների հետևից վազողները: Դրա համար էլ կան մարդկանց պատրանքների տիրույթում պահելու լավ գործիքներ, ճոռոմ գաղափարներ: Ավելորդ չէ մտաբերել Բեռնարդ Շոուի սքանչելի խոսքը՝ «Ժողովրդավարությունը այն գույնզգույն օդապարիկն, որը կախված է մարդկանց գլխավերևում և որից նրանք չեք կարողանում կտրել իրենց հայացքը: Ու քանի դեռ նրանք զմայլված նայում են օդապարիկին, ուրիշները նույն պահին ժողովրդի գրպաններն են դատարկում»: Զանգվածը չի կարողանում պարզորոշ հասկանալ, իսկ ավելի ստույգ՝ չի փորձում ընդունել, որ այն կերը, որով իրեն կերակրում են, թույն է պարունակում: Անգամ, եթե այդ թույնը քաղցրահամ է... Ականավոր հոգեբան Զիգմունդ Ֆրոյդը միանգամայն տեղին նկատել է՝ «Զանգվածները երբեք էլ չեն ունեցել ճշմարտության կարոտ, նրանց ուզածը պատրանքներն են, առանց որոնց նրանք ոչ մի կերպ չեն կարող ապրել...»: Հետաքրքիր է նաև այն իրողությունը, որ ինչքան ուժեղ է պետությունը և կազմակերպված տվյալ հասարակությունը, այնքան թույլ են պատրանքները և ինքնախաբեությունը հասարակության անդամների մեջ: Եվ հակառակը՝ եթե թույլ է պետությունը, իսկ հասարակությունը անկազմակերպ, իլյուզիաները և ինքնախաբեությունը դառնում են կանխորոշող: Օրինակ, եթե ճապոնական կառավարությունը ասի՝ Չինաստանը կամ Ռուսաստանը հարձակվելու են մեզ վրա, կամ՝ շուտով այսինչ լեռան հրաբուխը ժայթքելու է, ճապոնացիները չեն մտածի՝ «մեկ էլ տեսար չհարձակվեցին կամ էլ՝ լեռը չժայթքեց»: Երբ ԱՄՆ կառավարությունից հայտարարություն հնչի, թե՝ «Պատրաստվեք էվակուացիայի, քանի որ Ֆլորիդային նոր փոթորիկ է մոտենում», բնակիչները կասկածի տակ չեն դնի այս տեղեկությունը և չեն ընկղմվի ինքնախաբեության տաք ալիքների մեջ, ասելով՝ «մեկ էլ տեսար փոթորիկը շրջանցեց մեզ...»: Ռուսներն էլ իրենց չեն զցի պատրանքների գիրկը, մտածելով՝ թե «ՆԱՏՕ-ի ի՞նչին է պետք Ռուսաստանի խորքերը մխրճվելը»:

Սա պետության ընկալման խորքային խնդիր է: Միևնույն ժամանակ, նույնիսկ նման ազգերն ու հասարակություններն են կուրորեն մտել պատրանքների ու ինքնախաբեության երախը: Եթե անգամ գերմանացիների պես խիստ ռացիոնալ ազգը տրվեց Ադոլֆ Հիտլերի ցնորքներին, եթե ֆրանսիացիների միտքը մթագնեց, երբ Նապոլեոնը սկսեց իր արշավանքը կամ, ասենք, ռուս ժողովուրդը դարձավ Լենինի և կոմունիզմի սին գաղափարի զոհը, ապա ինչո՞ւ զարմանանք, երբ հայ հանրությունը դարձավ մի դուրսպրծուկի զառանցանքների գերին: Սա, իրոք, հիմնարար հարցերից է և դժվար է գտնել որևէ ազգ ու ժողովուրդ, որը այս կամ այն չափով, պատմության որևէ փուլում չի դարձել պատրանքների խաղալիք: Պատրանքները չունեն չափման որևէ միավոր, նրանց ուժը կարող է կործանել ցանկացած ազգ ու ժողովուրդ: Ուշադրություն դարձրեք բոլոր գունավոր հեղափոխությունների կոչերին, դրած նպատակներին և ապա՝ հետևանքներին: Գեոպոլիտիկ կենտրոնները հիանալի գիտեն տվյալ երկրի, ժողովրդի, հանրության ձգտումներն ու պահանջները: Գեներացվում և տիրաժավորվում են դրանց համարժեք մոբիլիզացնող գաղափարներ: Մարդուն թվում է, թե ինքն է ամեն ինչի կենտրոնը, տեղի է ունենում հատկապես իր պահանջների բավարարման իմիտացիա: Խեղճ, ունեզուրկ ու անտեսված մարդը հրապարակում միանգամից իրեն զգում է կարևորված, նրան կարող է թվալ, թե ինքն է «երկրագնդի պորտը»: Դեռ մեր մեծ առակագիր Վարդան Այգեկցին է ասել՝ «Չափից ավելի ուշադրությունը ավանակին ստիպում է իրեն առյուծ զգալ...»: Ի դեպ, այս բովանդակությամբ առակներ ու ասացվածքներ կան արևելյան և արևմտյան շատ ժողովուրդների մոտ, և դա պատահական չէ: Այս ամենը խոսում է այն մասին, որ երբ զանգվածի համար տրվում է ինքնախաբեության մեկնարկը, նա հիպնոսացած,

ինչպես ճագարը, գնում է դեպի վիշապի երախը: Սրա ականատեսը ինքներս ենք եղել: «Թավշյա հեղափոխություն» կոչվող ամբոխային էքստազի օրերին անձամբ մի քանի անգամ կոնֆլիկտների մեջ եմ հայտնվել հրապարակի մարդկանց հետ, որից մեկի ժամանակ խոսքակռիվը նույնիսկ քաշքշոցի և ձեռնամարտի հասավ: Ասածս ընդամենը մի պարզ բան էր՝ «ուշադիր լսեք, ինքներդ ձեր մտքին ավելի վստահեք, քննեք, թե ինչ է զառանցում ձեր կուռքը...»: Նրանց ագրեսիվ պահվածքը նշանակում էր մի բան, նրանք կարծես ինձ անուղղակիորեն «աղերսում էին»՝ «ձեռքդ հեռու մեր պատրանքներից»: Հիմա, երբ բանը բանից անցել է, երբ սույն «կուռքը» նրանց զրկել է ամեն ինչից, նրանց մնում է միայն շփոթված այս ու այն կողմ նայել, քանի որ երբ մարդը չի ստանում իր ակնկալածը, հետզհետե օտարվում է խոստումներ շռայլողից: Այստեղ բուն խնդիրն այն է, որ ամբոխը երբեք պատասխանատվություն չի ստանձնում, հենց նրան են մեղավորներ պետք: Եթե չկա պատասխանատվության ստանձնում, ինչպե՞ս կարող է լինել ազատություն և ազատագրում: Եվ անչափ դժվար է այս շերտին, որն այլևս շերտ էլ չէ, այլ ենթաշերտ, բացատրել, որ պետք չէ մեղադրել ուրիշին: Ասել է թե՝ «նախ, մեղադրիր ինքդ քեզ, որ հավատացել ես, բայց ոչ նրանց, ովքեր քեզ խաբել են»: Նույնը նաև այսօրվա քաղաքական կողմնորոշումներին և եվրոպական պատրանքներին է վերաբերում: Հայաստանին Եվրոպական միություն չեն հրավիրել, չեն առաջարկել, բայց երկրի ղեկավար տհասները «ջուրը չտեսած բորիկացել են», որովհետև գիտեն, որ մի զանգված կա, որը շարունակում է վայրահաչը՝ «ռուսները մեզ մենակ թողեցին, բայց չէ՞ որ մենք նրանց ֆորպոստն էինք»: Սա ինքնախաբեության նույն մեխանիզմն է առավել վտանգավոր հետևանքներով: Կյանքում, ամենասովորական մարդկային հարբերություններում այս ամենն առկա է: Ինչպես կարելի է նեղանալ մարդուց, որը չարդարացրեց քո ակնկալիքները: Մի՞թե այդքան դժվար է հասկանալ, որ այդ դուք էիք մեղավոր, որ ակնկալում էիք ավելին, քան պետք էր: Ցավոք, հանրային գիտակցության մեջ բույն դրած ապաքաղաքական, բացարձակ իռացիոնալ մտածողությունը իշխանությունների կեղտոտ հաշվարկների զուգորդմամբ, իր զարհուրելի հետքերն է թողնում և պետությանը մղում է դեպի անդունդ: Լավ, ասենք թուրքական սուլթանի հարեմի ներքինիի վերածված վարչապետը և իր նմանները, անձնական շահերի բերումով, իշխանությունից կուրացած գնում են այս ճանապարհով, բայց ինչո՞վ բացատրել այսքան բացահայտ աղետի հանդեպ ժողովրդի մի մեծ հատվածի անտարբերությունը կամ լոյալությունը: Սա ի՞նչ պարադոքս է. իրեն ընտրող ժողովուրդը չկա, համակրանքը չկա, ակնկալիքները չկան, պետություն-համակարգը չկա, հայրենիքի մի մեծ կտորը չկա, բայց ինքը կա: Հիմա արդեն խնդիրն այլ է. շփոթված

ժողովրդին քշել են մի անկյուն և պատերազմի սպառնալիքի ներքո փակել ծուղակում: Եվ որպեսզի այս ամենը շատ տեսանելի չլինի, հիմա էլ հրապարակ է հանվել Հայ-ամերիկյան ռազմավարական համագործակցության պատրանք-փաստաթուղթը, որը կդառնա հերթական փափուկ բարձը հայության գլխի տակ: Իսկ հասարակ մարդիկ գուցե այդպես էլ չհասկանան, որ Հայաստանի պետությունը և ժողովուրդը պառկած են այն սկուտեղի վրա, որը մատուցվել է Թուրքիային: Սա է բուն իրողությունը:

Ավարտելով մեր դիտարկումները պատրանքների և ինքնախաբեության մասին՝ ավելացնենք հետևյալը. այս քվազի-նիկոլական իշխանությունը նման է ժանտախտի: Կարծես մեզ քիչ էին աշխարհաքաղաքական ահավոր անբարենպաստ հանգամանքները, մի ժանտախտ տարածող առնետների ոհմակ էլ ներազգային կյանքն է կրծում և ապականում: Թուրքական հարեմի ներքինին, Անկարայից ու Բաքվից ստանալով հանձնարարականներ, ասում և անում է՝ ինչ պետք է և ապա գնում է հեծանիվ քշելու և ձվածեղ պատրաստելու, իսկ հանրությունն ու ընդդիմադիրները, ասես, դարձել են այս կեղտոտ գործերի վիճակագիրը: Ցավոք, չի գտնվում թունավոր առնետներին շարքից հանելու ճիշտ կերպը, չի տրվում ազատագրվելու մեկնարկը: Ցավոք, մինչ այս պահը, կարծես, հանրությունը պատրանքների բարձերին նստած սպասում է, թե երբ վերջնականապես կհոշոտվեն մեր հայրենիքն ու պետությունը: ■

ՀՅ Դաշնակցութիւնը եւ Հայաստանի դեմարկացիայի առաջին փորձերը
(Համառօտ ուսումնասիրութիւն)

Կարէն Խանլարեան
Տեխնիկական գիտութիւնների դոկտոր, պատմական գիտութիւնների թեկնածու

Նախաբան

Հայ ազգային ազատագրական շարժման մասնակից ուժերը, յատկապէս ՍԴ Հնչակեան կուսակցութիւնը եւ ՀՅ Դաշնակցութիւնը նպատակ էին ճշտել ազատագրելու Հայաստանը, բայց գոյութիւն չունէին քաղաքա-աշխարհագրական եւ իրաւական յստակ հիմնաւորումներ Հայաստանի ոչ արեւմտեան եւ ոչ էլ արեւելեան հատուածների դիրքը սահմանելու համար:

Պատմական տուեալները ցոյց են տալիս, որ 19-րդ դարավերջին Թուրքահայաստանի կամ Արեւմտեան Հայաստանի սահմանները առաւել ճշտորոշ են եղել Ռուսահայաստանի կամ Կովկասեան Հայաստանի համեմատութեամբ: 1877-1878 թթ. ռուս-օսմանեան պատերազմի արդիւնքում կայացած Սան Ստեֆանոյի հաշտութեան պայմանագրում նշւում էր Հայաստան բառը, որն էլ ունէր աշխարհաքաղաքական որոշակի նշանակութիւն: «Նկատի առնելով այն,- նշւում է պայմանագրի 16-րդ յօդուածում,- որ ռուսական զորքերի դուրսբերումը նրանց կողմից գրաւուած ՀԱՅԱՍՏԱՆ-ի՝ Թուրքիային վերադարձուելիք վայրերից, կարող է այնտեղ առիթ տալ բախումների եւ բարդութիւնների, որոնք երկու պետութիւնների բարի յարաբերութիւնների վրայ կ'ունենան վնասակար ազդեցութիւն, Բարձր Դուռը պարտաւորւում է անյապաղ կենսագործել ՀԱՅԱԲՆԱԿ ՄԱՐԶԵՐ-ի տեղական կարիքներից յարուցուող բարելաւումներ եւ բարենորոգութիւններ, եւ հայերի անվտանգութիւնը զերծ պահել քրդերից եւ չերքէզներից» (ընդգծումները մերն են – Կ.Խ.):



Նկար 1

Այսպիսով Օսմանեան կայսրութեան մաս կազմող Հայաստանը պարզապէս նոյնականացւում էր՝ օսմանեան երեք վիլայէթների՝ Էրզրումի (Կարին), Վանի, Բիթլիսի (Բաղեշ) հետ ամբողջապէս եւ չորս վիլայէթների՝ Դիարբեքիրի (Տիգրանակերտ), Խարբերդի, Սըվասի (Սեբաստիա) եւ Տրապիզոնի որոշակի մասերի հետ (տես՝ նկար 1):

Առաւել խրթին եւ տարաբնոյթ բարդութիւններով լի էր ընդհանրապէս Անդրկովկասի վարչատարածքային բաժանումը եւ մասնաւորաբար Ռուսահայաստանի աշխարհագրական սահմանումը:

Անդրկովկասին, 1903 թ. դրութեամբ, մաս էին կազմում չորս նահանգ կամ գուբերնիա (Թիֆլիս, Երեւան, Ելիզաւէտպոլ, Բաքու), մէկ մարզ կամ օբլաստ (Կարս) եւ չորս վարչատարածքային առանձին շրջան կամ օկրուգ, (Սուխումի, Բաթումի, Արդուին, Ձաքաթալի) (տես՝ նկար 2):

Թիֆլիսի, Երեւանի, Ելիզաւէտպոլի (Գանձակ), Բաքուի գուբերնիաները եւ Կարսի օբլաստը բաժանուած էին ներքին գաւառների (տես՝ նկար 3):

Նկար 2

Նկար 3

***

Օսմանյան քարտէզներում, մինչեւ 1880-ականի կէսերը, նշւում էր Հայաստանի անունը, իսկ Անդրկովկասի 19-րդ դարավերջի 20-րդ դարասկզբի վարչատարածքային բաժանումներում չէր յիշատակւում Հայաստանը:

Այսպիսով ՀՅ Դաշնակցութեան համար անհրաժեշտութիւն էր համարւում ճշտորոշել Միացեալ Հայաստանի քաղաքական քարտէզը, մանաւանդ այն հանգամանքից ելնելով, որ նա ձգտում էր իրականացնել Օսմանեան Հայաստանի ինքնավարութիւնը մէկ կողմից եւ միւս կողմից՝ Անդրկովկասի ֆեդերատիւ դեմոկրատական հանրապետութիւնը, իր էթնօգրաֆիկական հիմունքներով եւ տեղական լայն ինքնավարութեամբ օժտուած աւտօնոմ (ինքնավար, ինքնիշխան) ԿԱՆՏՕՆ-ներով, այդ թւում՝ նաեւ ՌՈՒՍԱՀԱՅԱՍՏԱՆ-ով:

ՀՅ Դաշնակցութեան 3-րդ Ընդհանուր Ժողովը գումարուեց 1904 թ. սկզբին եւ որոշում ընդունեց Կովկասեան յեղափոխական շարժմանը ՀՅԴ շարքերի եւ մարմինների մասնակցութեան մասին: Սոյն որոշման լոյսի տակ 1905 թ. յունիսին կայացաւ ՀՅԴ Կովկասեան Ռայոնական Ժողովը, ուր որդեգրուեց գործունէութեան լրացուցիչ մի ծրագիր, որն յայտնի է, որպէս՝ «Կովկասեան Նախագիծ»:

Այս նախագծով առաջադրւում էր. «1. *Ֆեդերատիւ դեմոկրատական հանրապետութիւն Անդրկովկասի համար, հիմնուած ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի ձայնատուութեան (քուէարկութեան) վրայ»,- ապա եւ ամրագրում էր այն, որ.* «11. Անդրկովկասը բաժանւում է գաւառների, որոնք վայելում են ամենալայն տեղական ինքնավարութիւն: Գաւառների սահմանները գծագրելիս՝ ի նկատի պիտի առնել ազգաբնակութեան ցեղագրական *(կրպագրական այլ կարբերակներում նշուած է՝ ազգագրական – Կ.Խ.)* եւ կուլտուրական կազմը, ըստ կարելւոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար»[1]:

ՀՅԴ քաղաքական սոյն պահանջին դէմ էին հայ մարքսիստները իրենց երեք գլխաւոր հոսանքներով՝ «Ռուսական Սոցիալ-դեմոկրատական բանուորական կուսակցութեան» մենշեւիկ ու բոլշեւիկ հատուածները եւ «Սոցիալ-դեմոկրատական բանուորական հայ կազմակերպութիւն»-ը (սպեցիֆիկները): Իսկ հայ ԷսԷռ-ները, ելնելով մայր գաղափարակցութեան՝ Ռուսաստանի սոցիալիստ յեղափոխական կուսակցութեան նպատակային հիմադրոյթներից, թէեւ տեսականօրէն ընդունում էին Անդրկովկասում ֆեդերատիւ դեմոկրատական հանրապետութիւն ստեղծելու գաղափարը, այդուհանդերձ խիստ պասիւ էին Դաշնակցութեան տուեալ պահանջատիրութեան նկատմամբ, նրա մէջ տեսնելով՝ մրցակցին կրեդիտներ տալու սխալ քայլ:

Հայ մարքսիստ, սպեցիֆիկ սոց-դեմոկրատ, բժիշկ՝ Տիգրան Իսախանեանը, Genosse[2] ծածկանուամբ, գրում էր. «Հայ իրականութեան մէջ գործող քաղաքական կուսակցութիւններից Դաշնակցութիւնը իր minimum ծրագրի մէջ մտցրած ունի Անդրկովկասի ֆեդերացիայի խնդիրը: Մինչդեռ սրան հակառակ դիրք է բռնած Սօցիալ-դեմօկրատ կուսակցութիւնը, մասնաւորապէս ՍԴԲ Հայ Կազմակերպութիւնը, որը Ռուսաստանի ապագայ քաղաքական կազմի նկատմամբ իրագործելի ու միանգամայն բաւական է համարում, պրոլետարիատի դասակարգային շահերի տեսակէտից տեղական ու շրջանային լայն ինքնավարութիւնը»[3]:

Մի այլ հայ մարքսիստ, բոլշեւիկամէտ սոցիալ-դեմոկրատ՝ Աշոտ Աթանասեանը, նոյն ինքը «Զանգակ»-ն[4], իր դաւադրութեան տեսութեամբ բուռ քննադատութիւն էր հնչեցնում Դաշնակցութեան հասցէին, ասելով, որ. «Դաշնակցութեան ֆեդերացիան ազգային է լինելու... Ահա որտեղ է թաղուած շունը՝ այս նոր գաւառների մէջ, եւ կարող է լինել այնպէս, որ ողջ Անդրկովկասը կը սկսուի բաժանուել նոր ադմինիստրատիւ գաւառական մասերի այս կամ այն ազգին պատկանող ազգաբնակչութեան համե-



Դաւիթ Անանուն

մատ, որով եւ հրապարակ կը գայ կռուախնձորը, որը այնպէս գաղտնի է պահում դաշնակցութիւնը իր «ամենալայն տեղական ինքնավարութիւն» բառերի վերմակի տակ»[5]:

«Միայն եւ միայն, - եզրակացնում էր Աթանասեանը,- համառուսական հիմնադիր ժողովը իրաւունք ունի դնելու այդպիսի խնդիրներ, քննադատելու, առաջարկելու եւ լուծելու այնպէս, որպէս որ այդ կը համապատասխանի ողջ պետութեան եւ նրա մէջ ապրող ազգութիւնների շահերին եւ առաջադիմութեանը՝ որպէս ռուս քաղաքացիների... Սա է այն միակ, այն ուղիղ, այն հարազատ ճանապարհը, որով գնալու է ամեն մի զուտ յեղափոխական կուսակցութիւն, որը յետին մտքեր չունի, որը չէ ուզում «պօլիտիկոսութեամբ» պարապել: Իսկ Դաշնակցութիւնը ամենից շատ եւ ամենից հեշտ պօլիտիկոսութիւնով է պարապում»[6]:

Սպեցիֆիկներն առաւել տրամաբանական էին իրենց քննադատութիւններում:

Նոյն Տիգրան Իսախանեանը կամ Genosse-ը շատ պարզ հարց էր բարձրացնում. «Նախ մի նկատողութիւն. ամիսներ ու տարիներ անցան այն օրուանից, երբ Դաշնակցութիւնը ծնեց իր այդ հռչակաւոր Անդրկովկասեան կանտոնները, բայց այս ամբողջ ժամանակամիջոցում սա չկարողացաւ մեզ տալ մի քարտէզ, որի վրայ նա Անդրկովկասը բաժանած լինէր ըստ իր բարեհաճ հայեցողութեան մի քանի տասնեակ կամ հարիւր կանտոնների: Դաշնակցութիւնը այդ մինչ օրս ոչ միայն չարաւ, այլ այսօր էլ հեռացնում է իրանից այդ պարտականութիւնը... Նա չկարողացաւ մինչ այսօր ասել, թէ որոնք են այդ կանտոնները, որպէս զի կարելի լինէր քննել նրանց իրագործուելու հաւանական լինելը: Կրկնում ենք, որ այս տեղի է ունենում մի հարցի վերաբերեալ, որի ամեն մի մանրամասնութիւնը նա արդէն վաղուց պիտի պարզած լինէր»[7]:

Սակայն ՀՅԴ-ի համար Անդրկովկասի վերաբաժանումների ճշտորոշման եւ դրանից բխող կոնկրետ առաջադրանքի ձեւաւորման հարցը, այլեւայլ բարդութիւններից բացի, կախում ունէր մէկ այլ հանգամանքից նաեւ: Անդրկովկասի վերաբերեալ ծրագրային մինիմալ պահանջը պետք է հաստատուէր կուսակցական բարձրագոյն ժողովում, ինչին սպասում էին դաշնակցական տեսաբանները:

Հայ մարքսիստ, սպեցիֆիկ սոց-դեմոկրատ՝ Դաւիթ Անանունն աւելի ուշ գրում էր. «Այս հեռանկարի դիմաց, որ միջցեղային կռիւ ու անհամաձայնութիւն էր, հայ մարքսիստները դէմ էին արտայայտւում Անդրկովկասի ֆեդերացիային: Բայց մարքսիստների կարծիքը պարտադիր չէր դաշնակցականների համար, եւ նրանք շարունակեցին Ռուսական Հայաստանի տեղն ու դիրքը որոշել»[8]:

ՀՅԴ 4-րդ Ընդհանուր Ժողովը գումարւում է Վիեննայում, 1907 թ. փետրուար եւ մարտ ամիսների ընթացքում: Այդ ժողովում ընդունւում է նոր ծրագիր, իր մաքսիմալ (ընդհանուր տեսութիւն) եւ մինիմալ (քաղաքական պահանջներ, տնտեսական պահանջներ) բաժիններով: Քաղաքական պահանջների Անդրկովկասի մասով անփոփոխ է մնում ֆեդերատիւ դեմոկրատական հանրապետութիւն առաջադրանքը, սակայն ի տարբերութիւն «Կովկասեան նախագծի» 11-րդ յօդուածի, նոր ծրագրում, ըստ հետեւեալի, ընդունւում է երկու յօդուած, որտեղ ԳԱԻԱՌ-ների փոխարէն առաջ է քաշւում ԿԱՆՏՈՆ-ների գաղափարը. «8) Անդրկովկասեան Հանրապետութիւնը բաժանւում է կանտոնների, որոնք վայելում են տեղական լայն ինքնավարութիւն: Համայնքները նոյնպէս վայելում են ինքնավարութիւն՝ զուտ համայնական խնդիրներում: 9) Կանտոնների սահմանները որոշելիս պէտք է նկատի առնել ազգագրական, տեղագրական եւ կուլտուրական առանձնայատկութիւնները, ըստ կարելոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար»[9]:

Այսպիսով «ցեղագրական եւ կուլտուրական»-ին փոխարինեցին «ազգագրական, տեղագրական եւ կուլտուրական առանձնայատկութիւնները», որպէս վերաբաժանման տեսական հիմունքներ:

Նոր ծրագրում ամրագրուած Կանտոնների սահմանագծման գործում թերեւս առաջին քայլը կատարել է Գարեգին Խաժակը, ով իր «Դէպի ֆեդերացիա» աշխատութիւնում, վիճակագրական զանազան տուեալները քննութեան ենթարկելով եւ Անդրկովկասի քարտէզը նոր սահմանաբաժանումներով ձեւափոխելով, ընդհանուր գծերով բնորոշել է ռուսական Հայաստանը: «Ախալցխայի գաւառի հարաւային մասը,- գրել է նա,- Գանձակի եւ Թարթառի կամ Ջիվանշիրի գաւառների լեռնային մասերը, Շուշու եւ Զանգեզուրի գաւառները, հետը միացրած Ջիբրա-

Արտաշէս Աբեղեան

Եղիշէ Թոփչեան

յէլի հայկական շրջանը, Նոր Բայազէտի, Երեւանի, Էջմիածնի եւ Ալեքսանդրապոլի գաւառները, Կարսի եւ Կաղզուանի շրջանները, Շարուր-Դարալագեազի եւ Նախիջեւանի գաւառների լեռնային մասերը: Այս շրջանը կազմում է մի ամբողջական բնակավայր, որի մէջ մօտաւորապէս 55-65 առ հարիւրը կազմում են հայերը»[10]:

Խաժակի սահմանագծած անդրկովկասեան Հայաստանում այդ ժամանակ ապրում էին 6-7 հարիւր հազար հայեր, այսինքն՝ Անդրկովկասի 1,312,000 հայերի ստուար մասը: Իսկ վրացիները եւ թաթարներն էլ մեծամասնութիւն են կազմում իրենց ազգային տերիտորիալ սահմաններում:

ՀՅԴ գործիչ, մտաւորական՝ Արտաշէս Աբեղեանն այսպէս է գնահատել Գարեգին Խաժակի կատարած գործը. «իր աշխատութեան մէջ Խաժակը արծարծել եւ պաշտպանել է մի տեսակէտ, մի սկզբունք, որ յետագային հրապարակ եկաւ աւելի սուր կերպարանքով, որի յաջող լուծումը համարուեց միակ գրաւականը՝ անդրկովկասեան ժողովուրդների խաղաղ համակեցութեան, քաղաքական միութեան համար»[11]:

Խաժակի աշխատութեանն առընթեր, ՀՅԴ գործիչ, գաղափարախօս Եղիշէ Թոփչեանը եւս անդրադարձել է Անդրկովկասեան ֆեդերացիայի հարցին եւ իր հոետորական հարցադրմամբ վերնագրուած՝ «Արդեօք հնարաւո՞ր է ֆեդերացիան» յօդուածում, տալիս է վիճակագրական պատկերներ Հարաւային Կովկասի հայաբնակ շրջաններից. «... Վերջին վիճակագրական տեղեկութիւններից երեւում է, որ միայն Կովկասում 1,312,000 հայ կայ, այն է.

«1. Երեւանի նահանգում	510,975
«2. Կարսի նահանգում	92,497
«3. Բաթումի նահանգում	27,670
«4. Քութայիսի նահանգում	3,824
«5. Բաքուի նահանգում	88,520
«6. Սեւ Ծովեան նահանգում	7,689
«7. Թիֆլիսի նահանգում	265,985
«8. Գանձակի նահանգում	309,858
«9. Դաղստանի նահանգում	3,066
«10. Զաքաթալի նահանգում	2,500
«Ընդամենը	1,312,584

«Նոյն այդ տեղեկութիւնների համեմատ,- շարունակում է նա,- հայերը բացարձակ մեծամասնութիւն են կազմում հետեւեալ գաւառներում.

«1. Ալեքսանդրապոլի գաւառում	135,004
«2. Նոր-Բայազէտի գաւառում	82,815
«3. Էջմիածնի գաւառում	86,069
«4. Կարսի գաւառում	31,375
«5. Կաղզուանի գաւառում	24,391
«6. Ախալքալաքի գաւառում	56,562
«7. Բորչալուի գաւառում	47,053
«8. Շուշիի գաւառում	59,231
«9. Զանգեզուրի գաւառում	77,986
«10. Ղազախի գաւառում	44,411
«Ընդամենը	645,197

«Դա թէեւ մի ուրուագիծ է, որ կարօտ է ուղղումների ու մշակման, բայց եւ այնպէս գալիս է որ պատասխանելու մեր դրած հարցին, թէ «արդեօք հնարաւո՞ր է ֆեդերացիան»: Այո հնարաւոր է նա եւ անհրաժեշտ՝

Միրական Տիգրանեան

Աւետիք Շահխաթունեան

ազգային ամեն տեսակի անարդարութիւններ ու անհաւասարութիւններ վերացնելու եւ բոլոր այլացեղ ժողովուրդների անկաշկանդ զարգացումը ապահովելու համար:

«Inter arma silent ieges - զէնքերի շաչիւնից լռում են օրէնքները, ասում է լատինական առածը, որ այնպէս ճշտօրէն բնորոշում է մեր իրականութիւնը: Այո՛, զէնքերի շաչիւնով, ֆիզիքական կոպիտ ոյժով կարելի է լռեցնել ամեն ինչ, բայց կորստաբեր է այդպիսի լռութիւնը: Պետութեան ոյժը դրա վրայ յենուած չպէտք է լինի, այլ ազատութեան ու հաւասարութեան անխորտակելի պատուանդանի վրայ...»

«Ֆեդերացիան,- եզրակացնում է Թոփչեանը,- այդ պատուանդանի խոշոր անկիւնաքարերից մէկն է, ուստի եւ պետք է ձգտել նրա իրականացմանը»[12]:

Իսկ ՀՅԴ մտաւորական, գործիչ եւ ղեկավար մարմինների անդամ Աւետիք Շահխաթունեանը, ում Հայաստանի սահմանագծման նշանակալի գործունէութեանը դեռ կ'անդրադառնանք, իր «Ֆեդերալիզմ եւ դեմոկրատիա» աշխատութեան մէջ, վիճակագրական ամփոփ պատկերացում է տալիս Անդրկովկասի էթնոգրաֆիկական կազմի վերաբերեալ. «.. Երեւանեան նահանգի մեծ մասը, Թիֆլիզի նահանգից՝ Ախալքալաքի, Ախալցխայի, Բորչալուի գաւառների մեծ մասը, Գանձակի, Ղարաբաղի լեռնաշղթայի Երեւանի սահմանին յենող մասերը ներկայացնում են մի շարք գաւառներ, որտեղ հայ ազգաբնակութիւնը 90, 80, 65/%-ն է կազմում»[13]:

ՀՅ Դաշնակցութեան տերիտորիալ որոնումների մասին առանձին մի այլ արտայայտութիւն է հրապարակուել ՀՅԴ քաղաքական գործիչ, Ռուսաստանի պետական երկրորդ Դումայի պատգամաւոր՝ Միրական Տիգրանեանի միջոցով, 1910 թ., ռուսերէն յօդուածի մէջ, ուր նա լայն քննութեան է ենթարկում հայերի վիճակն ու զբաղեցրած բնակավայրը Անդրկովկասում: Սոյն յոյժ կարեւոր յօդուածը տպագրուել է Կաստելյանսկիի խմբագրած «Формы национального движения в современных государствах» (Ազգային շարժման ձեւերը ժամանակակից պետութիւններում) վերտառութեամբ հաւաքածոյի «Հայերը» գլխի տակ: Տուեալ յօդուածում Տիգրանեանը փաստօրէն կոնկրետ սահմանների մէջ էր ամփոփում Ռուսահայաստանը, թէեւ հենց սկզբից շեշտում է, որ հայերը Ռուսաստանում հարց չեն բարձրացնում տերիտորիալ աւտոնոմիայի ուղղութեամբ:

«Ընդհանուր մարդահամարի տուեալներով,- գրում է Միրական Տիգրանեանը,- 1897 թ. Ռուսաստանում կար 1,173,471 հայ: Դրանցից հիմնական զանգուածը կենտրոնացած է հարաւային Կովկասում: Կովկասում ապրող 1,120,000 հայերից միայն 31 հազարն է բնակւում հիւսիսային Կովկասում (1897 թ.): Անդրկովկասի միւս երկու նշանակալից ազգութիւնների՝ վրացիների եւ թաթարների համեմատութեամբ, հայերն առաւել ցրուած ազգն են: Այնուամենայնիւ, մենք հնարաւորութիւն ունենք ուրուագծելու հայ բնակչութեան շարունակական տարածքն, իր թուային գերակշռութեամբ, մի կողմ թողնելով գոյութիւն ունեցող վարչատարածքային ֆորմալ բաժանումները, որը քիչ է համապատասխանում ցեղային (племенного) իրական սահմաններին»:

«Հայ բնակչութեան կենտրոնը Երեւան գուբերնիան է:- Շարունակում է Տիգրանեանը,- Այստեղ է գտնւում Կովկասի ողջ հայութեան կէսից մի փոքր պակաս մասը, որը կազմում է նահանգի բնակչութեան 55%-ը (գուբերնիայում թաթարները կազմում են մօտաւորապէս 38%, քրդերը՝ 6%): Երեւան նահանգի շուրջը, որպէս հայերի ամենամեծ կենտրոն, գտնւում են բոլոր կողմերից անմիջապէս նրան կից՝ շարունակական շերտեր՝ ազգագրականօրէն հայկական տարածքներ՝ Ելիզավէտպոլի եւ Թիֆլիսի նահանգների եւ Կարսի շրջանի հարեւանութեամբ: Ելիզավէտպոլ նահանգը կը բաժանուի երկու մասի՝ ազգագրական կազմով միմեանցից կտրուկ տարբերուող. արեւելեան եւ հիւսիսային (հարթավայրային եւ Կուռ) գոտին գրեթէ բացառապէս բնակեցուած է թաթարներով, ամբողջ արեւմտեան եւ հարաւային, այսինքն՝ յարակից Երեւան գաւառին, որը լեռնային եւ նախալեռնային հայերի գերակշռող տարածքն է, ուր հայերը կազմում են տեղի բնակչութեան աւելի քան 70%-ը: Թիֆլիսի նահանգում հայերը հիմնականում բնակւում են նրա հարաւ-արեւմտեան հատուածում: Այս գաւառի բնակչութեան 230 հազար մարդուց հայերից կազմում են 200 հազարը, որոնք կենտրոնացած են այստեղ՝ կազմելով հայ ժողովրդի գերակշռութեան գոտի Երեւան նահանգին անմիջապէս կից Ախալքալաքի եւ Բորչալուի շրջանները, ինչպէս նաեւ Թիֆլիսի հարաւային եւ արեւելեան Ախալցխայի գաւառը: Ախալքալաքի գաւառում հայերը կազմում են ողջ բնակչութիւնը, Բորչալուի մէջ 35%-ը (թաթարներ 30%-ը, վրացիներ 5%-ը եւ ռուսներ 6%-ը): Թիֆլիսի գաւառում ապրող 16 հազար հայերից աւելի քան 14 հազարը կենտրոնացած են նրա արեւմտեան մասի հարաւային գոտու՝ Բորչալուի գաւառի կից տարածքում: Կարսի օբլաստը ցեղային կազմով ամենատարբերն է Հարաւային Կովկասում: Այստեղ ամենաշատը հայերն են (25%) եւ թուրքերը (21%): Եթե նայենք շրջանի առանձին հատուածներին, ապա կը ստացուի, որ թուրքերի հիմնական մասը կենտրոնացած է արեւմտեան շրջանում (Օլթիի եւ Արտահանի շրջաններ-օկրուգներ): Հայերը հիմնականում գտնւում են արեւելքում (Կարս եւ Կաղզուան գաւառներ), որոնք կտրուկ գերակշռում են այլ ազգութիւնների նկատմամբ (այստեղ հայերը կազմում են 35%, իսկ մնացած 65%-ը բաժանուած է՝ քրդերի՝ 19%, յոյների՝ 12%, ռուսների՝ 11%, թուրքերի՝ 8% եւ այլն)»:

«Իսկ Կարսի մարզի հայկական այս հատուածը,- ամրագրում է Տիգրանեանը,- արեւմուտքից ուղղակիօրէն յարում է Երեւան նահանգին՝ նրա հետ կազմելով մէկ շարունակական տարածք՝ գերակշռող հայ բնակչութեամբ: Այսպիսով, Անդրկովկասի կենտրոնական մասում առաջանում է աշխարհագրական առումով կոմպակտ, շարունակական տարածաշրջան՝ հայ ժողովրդի թուային գերակշռութեամբ: Այնուամենայնիւ, համեմատած հարաւային Կովկասի երկու այլ ազգային շրջանների՝ վրացական հիւսիս-

Նկար 4

արեւմուտքում եւ թաթարական հարաւ-արեւելքում, ռուսաստանեան Հայաստանը դեռեւս ամենատարբերն է բնակչութեան ազգագրական կազմով»:

«Ընդհանուր առմամբ,- եզրակացնում է Տիգրանեանը,- ռուսական Հայաստանը՝ զբաղեցնելով մօտ 70,000 քառակուսի վերստ (մօտաւորապէս՝ 79,000 քկ – Կ.Խ.) տարածք, ըստ վերջին վիճակագրական տուեալների, ունի մօտաւորապէս երկու միլիոն բնակչութիւն, որոնցից զգալիօրէն աւելի քան մէկ միլիոնը՝ մօտ 55%-ը, հայեր են (Ռուսաստանի հայութեան ողջ բնակչութեան մօտ 70%-ը): Հայերից յետոյ յաջորդ ամենամեծ ազգը թաթարներն են, որոնք կազմում են տեղի բնակչութեան 28%-ը»[14]:

Ի տես նման մօտեցումների, սպեցիֆիկ սոցիալ-դեմոկրատ՝ Դաւիթ Անանունը, ֆեդերացիայի գաղափարին կատեգորիկ հակառակ լինելով հանդերձ, տարիներ յետոյ բարձր գնահատեց Տիգրանեանի վերոյիշեալ գիտական յօդուածը, ասելով, որ. «Սա ազգահաւաքման այն ձեւերից մէկն էր՝ որ հայրենիքի եւ նրա պետականութեան գործերին մասնակից էր անում ազգի 2/3-ին»[15]:

Նշենք, որ 1910-ականների կէսին մասնակի փոփոխութիւններ տեղի ունեցան Անդրկովկասի վարչատարածքային բաժանումների մէջ: Այսպէս. Բաթումիի եւ Արդուինի օկրուգները միացում եւ կազմում են Բաթումիի օբլաստը, եւ Անդրկովկասի կազմին աւելացում էին Չերնամորսկի (Սեւ- ծովեան) գուբերնիան եւ Դաղստանի օբլաստը (տես՝ նկար 4):

Իհարկէ այս փոփոխութիւնները էականապէս փոփոխութեան չէին մատնում Ռուսական Հայաստանի աշխարհագրական դիրքը:

***

1916 թ. մահացաւ Կովկասի փոխարքայ՝ Կոմս Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովը եւ Ցարի կողմից Կովկասի կուսակալ նշանակուեց՝ Մեծ դուքս Նիկոլայ Նիկոլաեւիչ Ռոմանով կրտսերը: Նրա կուսակալութեան շրջանում քննարկուել է Կովկասում զեմստուօ[16] (տեղական ինքնակառավարման համակարգ) մտցնե-

լու հարցը, որի համար էլ 1916 թ. Թիֆլիսում հրաւիրուել է շրջանային (ծայրամասային) ժողով:

Նոյն թուականի յունուարի 8-ին մինիստրների խորհուրդը պէտք է քննարկէր Անդրկովկասում զեմստուոի կարգեր հաստատելու խնդիրը, որ առաջադրուել էր Պետական Դումայի 72 պատգամաւորների կողմից: Այս մասին Կովկասի կուսակալը մինիստրների նախագահին ուղղած իր նամակում հետեւեալ կարծիքն է յայտնում. «Ծանօթանալով իմ կառավարութեան յանձնած երկրի վիճակին՝ ես համոզուեցի, որ ժամանակն է Անդրկովկասում զեմստուային հիմնարկութիւններ մտցնել որոշ իրաւունքներով ու պարտականութիւններով. բնակչութեան անհրաժեշտ ինքնաշխատութեան հասունութիւնը՝ տնտեսական եւ այլ տեղական շահերի ըմբռնման շրջանակում՝ արդէն նկատել է իմ նախորդը (Վորոնցով-Դաշկովը – Կ.Խ)»:

«Նրա օրով,- շարունակում է Նիկոլայ Նիկոլայեւիչ կրտսերը,- սկսուել են նախնական աշխատանքներն այդ ուղղութեամբ, որոնք շարունակւում են եւ կ'աւարտուեն շուտով, որից յետոյ միայն կը պարզուի զեմստուոի ձեւը: Վերջացնելով նամակս՝ ես միանգամ եւս կամենում եմ պնդել, որ Անդրկովկասում զեմստուо մտցնելը համարում եմ առաջնակարգ կարեւորութիւն ունեցող խնդիր եւ միջոցներ ձեռք կ'առնեմ արագ մշակելու բարենորոգութիւնը»[17]:

1916 թ. ձմռանը Թիֆլիսում Կովկասի Փոխարքայի հրաւէրով տեղի ունեցաւ խորհրդակցութիւն Անդրկովկասեան Զեմստուոի խնդիրը քննարկելու նպատակով: Յայտնի է, որ այդ խորհրդակցութիւնը, իր կանխորոշուած կազմով, բաժանուած է եղել երկու տեսակէտի՝ մեծամասնութիւն եւ փոքրամասնութիւն:

Մեծամասնութիւնը բաղկացած էր թուրք բէկերից եւ վրացի ազնուականներից, իսկ փոքրամասնութիւնը՝ գլխաւորապէս քաղաքաբնակ ազգաբնակութեան եւ առեւտրա-արդիւնաբերական շրջանների ներկայացուցիչներից, համարեայ բոլորն էլ հայազգի: Հայերից այդ խորհրդակցութեանը մասնակցում էին Արտեմի Փիրալեանը, Ալեքսանդր Խատիսեանը եւ Վերմիշեանը:

«Բացակայում էին բուն գիւղացիութեան ներկայացուցիչները: - Գրում էր ՀՅԴ պաշտօնաթերթ «Հորիզոն»-ի խմբագրականը,- Ուրիշ խօսքով՝ խորհրդակցութեանը մասնակցելու եւ իր ձայնը լսելի դարձնելու հնարաւորութիւնից զրկուած էր այն հոծ ազգաբնակութիւնը, այն տարրը, որին նախ եւ առաւելապէս, եթէ չասենք բացառապէս, վերաբերելու է նկատի առնուած ռեֆորմը»[18]:

Այդ ժամանակ Անդրկովկասի շուրջ վաթսուն օկրուգներից եւ ույեզդներից (գաւառներից) միայն եօթում էին հայերը մեծամասնութիւն կազմում: Խորհրդակցական ժողովը որոշեց բաժանումները բարեփոխել այնպիսի ձեւով, որ հայաշատ գաւառները միացուին եւ այդպիսով աւելանայ հայկական գաւառների թուաքանակը: Ձեւաւորուեց սահմանագծման մի յանձնաժողով, որի կազմում էին Փիրալեանը, Աւետիք Շահխաթունեանը, Գէորգ Խատիսեանը եւ Վերմիշեանը[19]: Սոյն յանձնաժողովի մշակած նախագծում Ղարաբաղը, Լոռին եւ Ախալքալաքը նկատի էին առնուել հայկական նահանգների կազմում: Նշենք, որ սոյն նախագիծը, յետագայում հիմք հանդիսացաւ Անդրկովկասի նոր սահմանագծման ՀՅԴ նախագծի, որը ներկայացուեց 1917 թ. Ռուսական մեծ յեղափոխութիւնից յետոյ իշխանութեան անցած Կերենսկու կառավարութեան ներքին գործերի նախարարութեանը: Այս մասին դեռ կ'անդրադառնանք հանգամանօրէն:

Խորհրդակցութիւնների ընթացքում վրաց ազգայնականները անհանգստացած էին, առ այն, որ գալիք զեմստուոյական համակարգը կարող է յանգեցնել անդրկովկասեան նահանգների եւ գաւառների վարչական նոր բաժանումների, յարմարեցուելով գիւղատնտեսական եւ ցեղագրական պայմաններին: Վրացի եւ թաթար նացիոնալիստների դրութիւնը այդ տեսակէտից բաւական խախուտ էր, նրանք չէին կարողանում ապացուցել, թէ օրինակ Ախալքալաքը կամ Լոռին տնտեսական եւ սոցիալական յարաբերութիւնների առումով նմանութիւն ունեն վրացական գաւառներին, կամ Ղարաբաղի լեռնային տնտեսութիւնը նոյնն է, ինչ Նուխու եւ առհասարակ Կուրի տափաստանների, գիւղատնտեսական միջավայրը: Նրանց պէտք էր զանազան խարդաւանքներով պահպանել մինչ այդ առկայ վարչատարածքային անարդար բաժանումները եւ վրացա-թաթարական գերիշխանութիւնը հայահոծ գաւառների վրայ:

Նշեալ խորհրդակցական հանդիպմանը քննարկուած թեմաները կուսակալ Նիկոլայ Ռոմանովի կարգադրութեամբ փոխանցւում են Կովկասի փոխարքայի դիւանատան յատուկ հանձնաժողովին՝ Անդրկովկասեան Զեմստուոի օրինագիծը պատրաստելու նպատակով: Օրինագիծը պատրաստուեց հաշուի առնելով բացառապէս մեծամասնութեան, այսինքն վրացի ազնուականների եւ թաթար բեկերի կարծիքը, եւ ամբողջապէս ի վնաս Անդրկովկասի ողջ ազգաբնակութեան զգալի մասը կազմող հայութեան:

Հին բաժանումներում եւ քուէրկութեան համակարգում մի քանի մասնակի միջամտութիւններով, նախագիծը առաջադրում էր այնպիսի վիճակ, ուր լաւագոյն դէպքում հայերը մեծամասնութիւն կ'ունենային միմիայն երեք գաւառներում՝ Ալեքսանդրապոլում, Էջմիածնում եւ Նոր Բայազէտում (Սեւանի աւազան): Իսկ Երեւանի նահանգում, ուր հայութիւնը մեծամասնութիւն էր կազմում, նահանգական զեմստուային ժողովում ներկայացուած պէտք է լինէր շատ համեստ փոքրամասնութեամբ: Հայերը բնաւ ներկայացուցչութիւն չէին ունենալու Շարուր-Դարալագեազի (Վայք եւ Հայոց Ձոր) եւ Նախիջեւանի գաւառական զեմստուային ժողովներում, եւ միայն մի աննշան փոքրամասնութիւն կը կազմէին Սուրմալուի եւ Երեւանի գաւառական ժողովներում: Այսպէս էր նախատեսուած դեռ Երեւանի նահանգում, ուր հայութիւնը կազմում է մեծամասնութիւնը:

Վիճակը շատ աւելի վատ էր միւս նահանգներում եւ նրանց գաւառներում: Օրինակ Թիֆլիսի նահանգի կազմի մէջ Ախալքալաքի գաւառում, ուր հայ տարրը կազմում էր բնակչութեան 2/3 մասը, զեմստուային ժո-

ղովում ներկայացուելու է իբրեւ փոքրամասնութիւն: Իսկ Գանձակի նահանգում, ուր ապրում էին մօտ 400 հազար հայ եւ 700 հազար մահմեդական, հայերը անկախ իրենց պատկառելի թուից, չէին ունենալու եւ ոչ մի ներկայացուցիչ նահանգական եւ վեց գաւառական զեմստուային ժողովներում:

Շուշիի եւ Զանգեզուրի գաւառական ժողովներում էլ նրանք, չնչին փոքրամասնութիւն էին կազմելու, չնայած որ Շուշիի գաւառում հայերը կազմում էին բնակչութեան մօտ 53%-ը, իսկ Զանգեզուրի գաւառում համարեայ՝ կէսը:

Արդիւնքում վրացիները մեծամասնութիւն կը կազմէին Թիֆլիսի, Քութայիսիի, Բաթումիի եւ Սուխումիի նահանգական-շրջանային զեմստուային ժողովներում, եւ Մահմեդականները մեծամասնութիւն կը կազմէին Բաքուի, Գանձակի, Երեւանի, Դաղստանի, հաւանօրէն նաեւ Կարսի նահանգական ժողովներում, ինչպէս նաեւ նրանց բոլոր գաւառական ժողովներում, բացառութեամբ՝ միայն երեքի[20]:

ՀՅԴ մի շարք մտաւորականներ բուռն կերպով հակազդեցին Անդրկովկասեան Զեմստուօի Նիկոլայ Ռոմանովի օրինագծին:

ՀՅԴ քաղաքական գործիչ, Մանուկ Աբեղեանի կրտսեր եղբայր՝ Արտաշէս Աբեղեանը քննադատում էր փոխարքայի օրինագիծը մայրէնի լեզուի անտեսման առումով. «Համաձայն մեր ունեցած տեղեկութեան,- գրում էր Արտաշէս Աբեղեանը,- Անդրկովկասեան Զեմստուօի բոլոր աստիճաններում եւ բոլոր հաստատութիւններում միակ գործածելին պիտի լինի պետական լեզուն՝ ռուսերէնը: Գաւառական եւ նահանգական զեմստուային ժողովներում իրաւասուները արտայայտել կարող են իրենց մտքերը, միայն այդ լեզուով. այդ լեզուով առաջ պիտի տարուեն նաեւ վիճաբանութիւնները, արձանագրութիւնները ու ամեն տեսակ գործառնութիւն՝ յարաբերութեանց համար: Բացառիկ դէպքերում, ըստ օրինագծի, երբ որեւէ իրաւասու չէ կարող իր մտքերը ռուսերէն լեզուով արտայայտել, նրան տրւում է իրաւունք արտայայտուելու մայրենի լեզուով, պայմանով սակայն, որ նրա ասածը անմիջապէս երդուեալ թարգմանի կողմից ռուսերէնի փոխադրուի, որը պիտի մտնի արձանագրութեան մէջ: Պաշտօնական յարաբերութիւնների եւ գրագրութիւնների մէջ նաեւ չէ արուած եւ ոչ մի բացառութիւն»:

«Բացատրելու կարիք չկայ, թէ դրանով ի՞նչ իրաւազուրկ վիճակ է ստեղծւում կովկասեան լեզուների համար եւ թէ ինչ գործնական դժուարութիւնների առաջ պիտի իրեն կանգնած տեսնի, հենց առաջին օրերից սկսած, նորաստեղծ Անդրկովկասեան Զեմստուօն: Օրինագծի այս թերութիւնը շօշափում է արդէն անխտիր Անդրկովկասի բոլոր՝ առաւել երեք - հայ, վրացի եւ թուրք ազգութիւնների կենսական շահերը: ...Չպէտք է անտեսել կենդանի լեզուները, կենդանի ոյժերը եւ գործոնները»[21]:

ՀՅԴ արեւելեան բիւրոյի անդամ Աւետիք Շահխաթունեանը քննադատում էր փոխարքայի նախագծի խիստ դասակարգային, յետադէմ բնոյթը. «...Կովկասում, արդիւնաբերողներին զատելով հողատէրերից, այնուամենայնիւ, 2-3 գաւառների սակաւ բացառութեամբ, ամենուրեք գերակշռութիւնը պատկանում է կալուածատէրերին (ասել է ազնուականներին), հանդէպ բազմամիլիոն գիւղացիութեան, որ գերակշռում է ազնուականութեանը թէ հողերի տարածութեամբ եւ թէ զեմստուային տուրքի քանակով: Ուստի եւ թոյլատրելի է պնդել, որ կովկասեան Զեմստուօն, ըստ իր նախագծի, յետադէմ պէտք է լինի, ոչ միայն 1912 թ. զեմստուօների համեմատ, այլեւ 1890 թ. կանոնադրութեան համաձայն գոյութիւն ունեցող զեմստուօներից շատերի նկատմամբ»[22]:

Նիկոլայ Նիկոլայեւիչ Ռոմանով փոխարքայի դիւանատան յատուկ հանձնաժողովի կողմից պատրաստուած այս անարդար, խտրական եւ յետադիմական օրինագիծը, հակառակ Ալեքսանդր Խատիսեանի բուռն բողոքների եւ առարկումների, վերջնականացաւ 1916 թ. դեկտեմբերի 4-ին, եւ որոշուեց անյապաղ այն ուղարկել մինիստրական խորհուրդ, որը որպէս օրինագիծ այն Պետական Դումայի վաւերացմանը պէտք է յանձներ 1917 թ. մարտին: Վրայ հասաւ, սակայն, Ռուսաստանի փետրուարեան յեղափոխութիւնը եւ ցարական բիւրոկրատիայի այս ոչ-հայանպաստ նախաձեռնութիւնն ի չիք դարձաւ[23]:

***

1917 թ. Մարտի 9-ին լուծարուեց Կովկասի փոխարքայութեան ինստիտուտը եւ նրան փոխարինեց Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէն՝ «Օզակոմ»-ը (Особый Закавказский Комитет), որին անդամակցում էին Անդրկովկասի երեք ազգութիւնները ներկայացնող Պետական Դումայի հինգ պատգամաւորներ: Ժամանակաւոր կառավարութեան հռչակած ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքն Անդրկովկասի ազգային-քաղաքական կուսակցութիւններին հնարաւորութիւն ընձեռեց քննարկելու երկրամասի ազգութիւններին հետաքրքրող հիմնախնդիրները, այդ թւում՝ ազգային, ագրարային, սոցիալական եւ յատկապես վարչատարածքային, որը չափազանց մեծ կարեւորութիւն ունէր[24]:

1917 թ. ապրիլի 6-12-ը տեղի ունեցաւ ՀՅԴ Ռայոնական Ժողովը, ուր խորքային ձեւով քննարկուեցին Անդրկովկասի ֆեդերատիւ դեմոկրատական հանրապետութեան ստեղծման խնդիրները՝ Առաջին աշխարհամարտի եւ ռուսական յեղափոխութեան հետեւանքով ստեղծուած աշխարհաքաղաքական եւ սոցիալ-տնտեսական նոր պայմանների լոյսի տակ:

Այսպիսով Ռուսաստանի Սահմանադիր վերահաս Ժողովի գումարմանը ընդառաջ, Ռայոնական Ժողովը որոշեց. «...Սահմանադիր Ժողովում առաջ մղել կուսակցութեան նուազագոյն ծրագիրն ամբողջովին, ռայոնական ժողովը հրահանգում է ծրագրային բոլոր հարցերը դարձնել գրաւոր եւ բանաւոր պրոպագանդի առարկայ: Իսկ մինչեւ Սահմանադիր Ժողովը իրականացնել այն պահանջները, որ չեն կարող սուր պայքար յարուցանել ազգերի եւ հասարակութեան տարբեր խաւերի միջեւ: Այդպիսի պահանջներ ռայոնական ժողովը ճանաչում է՝ 1. Անդրկովկասի վարչական բաժա-

նումների փոփոխութիւնը, որն իրականացնելու համար Արեւելեան Բիւրօն եւ Կ. Կոմիտէները ոչ մի ջանք չպիտի խնայեն»[25]:

Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման խնդիրը սերտօրէն առնչուած էր զեմստուոյի վերաձեւաւորման հարցին: Հետեւաբար խնդիրը լուծելու նպատակով Կերենսկու կառավարութիւնը որոշեց ներքին գործերի նախարարութեանը կից կեանքի կոչել տեղական ինքնակառավարման նոր նախագիծը մշակող յանձնախումբ՝ Բ. Վեսելովսկու նախագահութեամբ:

Որոշուած էր, որ տուեալ յանձնախմբի մշակած նախագիծը յանձնուէր Օզակոմին վերջնական եզրայանգման համար: Թերեւս հենց այս էր պատճառը, որ Վեսելովսկին առանձին մի հեռագրով ցանկութիւն էր յայտնում Օզակոմին՝ վերջինս յատուկ ներկայացուցչով ներկայ լինէր յանձնախմբի աշխատանքներին ու քննարկումներին[26]:

Օգտուելով առիթից՝ Վեսելովսկին խորհրդակցութեան հրաւիրեց Պետրոգրադում գտնուող անդրկովկասցի գործիչներին՝ Անդրկովկասի զեմստուոյական հարցը քննելու նպատակով: Հայերից այդ խորհրդակցութեանը մասնակցեցին ՀՅԴ գործիչներ՝ Աւետիք Շահխաթունեանը եւ Գէորգ Խատիսեանը, որոնք կարողացան համոզել Վեսելովսկուն զեմստուо մտցնելուց առաջ Անդրկովկասը ենթարկել վարչական նոր բաժանման:

Այսպիսով քննութեան առարկայ դարձաւ ՀՅԴ առաջարկած նախագիծը, որն իր ընդհանուր գծերով, ըստ Սիմոն Վրացեանի, հետեւեալն էր. «Արեւելեան Անդրկովկասը բաժանւում էր երկու մասի՝ թրքական եւ հայկական: Հայկական մասի մէջ մտնելու էին Ղազախ, Գանձակ, Ջիւանշիր եւ Շուշի գաւառների լեռնային հայաբնակ մասերը եւ ամբողջ Զանգեզուրը, բացի Բարգուշատի հովտի մի քանի թուրք գիւղական հասարակութիւններից, որոնք միացուելու էին Կարեագինի թրքական գաւառին: Գանձակ քաղաքը բաժանուելու էր երկու մասի՝ թրքական եւ հայկական: Ախալքալաքը, Լոռին ու Ծալկայի հայկական մասը պէտք է միացուէին նոր կազմուելիք Ալեքսանդրապոլի նահանգին»[27]: Վեսելովսկուն յանձնած ՀՅ Դաշնակցութեան նախագիծը, հակառակ մանաւանդ վրաց կողմի առարկութիւններին, հաւանութեան արժանացաւ Վեսելովսկու յանձնախմբի կողմից եւ ընդունուեց, որպես կառավարական օրինագիծ[28]:

Նշուած նախագիծը «Административный передѣлъ и земство въ Закавказьѣ» (Անդրկովկասի վարչական վերաբաժանումը եւ զեմստուо) խորագրով հրապարակուել է «Армянскій вѣстникъ» (Հայկական լրաբեր հանդէս, Մոսկուա, 1917 թ. դեկտեմբեր): Իսկ նախագծի բացատրական գրքոյկը՝ «Административный передел Закавказского края» (Անդրկովկասի տարածաշրջանի վարչական վերաբաժանումը) վերնագրով եւ Աւետիք Շահխաթունեանի հեղինակութեամբ, հրատարակուել է, Թիֆլիսում, 1918 թ.: ՀՅԴ ներկայացրած նախագծի նախաբանում ասւում էր. «Վարչական բաժանումների բարեփոխումը վերջնականապես հոչակուեց Օզակոմի հրամանագրով, որը նախապայման դարձաւ Զեմստուо հաստատութիւնների մասին գործող դրոյթները Անդրկովկասի վրայ տարածելու համար: Վարչական բարեփոխումն ընդգրկում է մի քանի գաւառներ՝ Երեւան նահանգը, Թիֆլիս նահանգի հայերով բնակեցուած հարաւային բաժնի՝ Ախալքալաք եւ Բորչալու գաւառների մի մասը, Ելիզաւէտպոլի նահանգի արեւմտեան, լեռնային մասը եւ Կարսի գրեթէ ողջ օբլաստը: Այս նորաստեղծ տարածքում,- շարունակում է նախագիծը,- որտեղ մեծամասնութիւն են կազմում ազգութեամբ հայերը, օրինագիծը նախատեսում է ձեւաւորել հայկական երեք նահանգ, ըստ հետեւեալի[29].

«1. Ալեքսանդրապոլի նահանգ

	Հազար մարդ-տոկոս			
Գաւառ	**հայ**	**մուսուլման**	**այլ**	**ընդամենը**
Ալեքսանդրապոլ	170-83%	22-11%	12-6%	204
Կարս	83-43%	49-25%	61-32%	193
Կաղզուան	35-43%	26-32%	21-25%	82
Լոռի	92-77%	14-12%	14-11%	120
Ախալքալաք	94-79%	10-8%	16-13%	120
Ընդամենը	474-66%	121-17%	124-17%	719

«2. Գանձակի նահանգ

	Հազար մարդ-տոկոս			
Գաւառ	**հայ**	**մուսուլման**	**այլ**	**ընդամենը**
Քարվանսարա	61-83%	9-11%	4-5%	74
Գանձակ	67-59%	29-25%	18-16%	114
Շուշի	150-70%	58-27%	5-3%	213
Զանգեզուր	88-69%	38-30%	1-1%	127
Ընդամենը	**366-70%**	**134-25%**	**28-5%**	**528**

«3. Երեւանի նահանգ

	Հազար մարդ-տոկոս			
Գաւառ	**հայ**	**մուսուլման**	**այլ**	**ընդամենը**
Նոր Բայազետ	100-68%	45-32%	1-1%	146
Նախիջևան	58-41%	84-58%	1-1%	143
Շարուր	18-19%	80-81%	-	98
Էջմիածին	95-72%	36-27%	1-1%	122
Երևան	154-65%	73-31%	11-4%	238
Ընդամենը	**459-53%**	**381-44%**	**26-3%**	**866**

«Տարածքային վերաբաժանումը դեռեւս վարչական է,- ամրագրուել է ՀՅԴ նախագծի աւարտին,- որը հիմք է ստեղծում բոլոր ազգութիւնների տեղական զեմստուային հիմնարկութիւնների ազատ զարգացման համար: Այն կ'ապահովի ոչ միայն իւրաքանչիւր ազգի ազգային ինքնութիւնը, այլեւ ճանապարհ կը հարթի կովկասեան ազգերի մօտակայ պետական ինքնուրոյնութեան, հնարաւոր անկախութեան համար, որը միաժամանակ լայն շրջանակներ է տալիս իւրաքանչիւր ազգի

ազգային զարգացմանը: Այն միեւնույն ժամանակ կարելիութիւն կ'ընձեռի բոլոր ազգերի իրաւահաւասարութեանը վերաբերող հարցերում՝ ընդհանուր պետական կազմակերպութեան շրջանակում համատեղ գործելու՝ հանուն ընդհանուր եւ հաւասարապես բոլորին հարազատ նպատակների»[30]:

ՀՅԴ նախագծում «հնարաւոր անկախութեան» շեշտադրումը պատահական երեւոյթ չէր, եւ սկիզբ էր առնում կուսակցութեան մէջ վաղուց ձեւաւորուած Հայաստանի կատարեալ ազատագրման գաղափարից, որը եւ Ռուսաստանի յեղափոխութեան ալիքների վրայ, ինքնարձարձման հնարաւորութիւն էր ստացել՝ ազգային աւտոնոմիայի ձեւաչափով:

ՀՅԴ Ռայոնական ժողովում, 1917 հոկտեմբերի 1-ին, Աւետիք Շահխաթունեանը ստեղծուած իրադարձութիւնների լոյսի տակ, այսպէս էր վերլուծում Անդրկովկասեան ֆեդերացիայի եւ վարչատարածքային վերաբաժանման հիմնահարցերն ու պահանջները եւ դրանք Ռուսաստանի Սահմանադիր Ժողովում բարձրացնելու անհրաժեշտութեան հարցը. «Յեղափոխական կուսակցութիւնները երկրի կազմակերպութեան խնդրում բաժանած են եղել երկու մասի, մի մասը ապակենտրոնացման կողմնակիցներ, միւս մասը կենտրոնացման: ՀՅ Դաշնակցութիւնը ապակենտրոնացումն է ընդունել իբր պետութեան կազմակերպութեան հիմնարար, որի համար ենթարկուել է ամենախիստ քննադատութեան, նամանաւանդ սոցդէմոկրատների կողմից: Վերջիններս դեռ 1905 թուին ոչ մի կերպ չէին ցանկանում լսել ապակենտրոնացման մասին, սակայն կեանքը ցոյց տուեց ապակենտրոնացման անհրաժեշտութիւնը եւ Ռուսաստանում գործող բոլոր կուսակցութիւնները՝ թէ ապակենտրոնացման կողմնակիցները, թէ հակառակորդները լռելեան համաձայնեցին այդ գաղափարին եւ այժմս չկայ ոչ մէկը, որը հակառակ խօսի ապակենտրոնացման: Եթէ ամբողջ Ռուսաստանի համար ընդունւում է ֆեդերատիւ հանրապետութեան գաղափարը, ապա ուրեմն ժամանակ է, որ մենք էլ առաջադրենք Սահմանադիր ժողովի առաջ մեր ծրագրի հիմնական կէտերից մէկը՝ ԱՒՏՈՆՈՄԻԱՅԻ գաղավարը»[31] (ընդգծումը մերն է – Կ.Խ.):

Հենց այս տիրական գաղափարով էր շարժւում յեղեղափոխական շրջանի դաշնակցութեան ղեկավարութիւնը, այդ թւում ինքն՝ Աւետիք Շահխաթունեանը, ով իր գրքոյկում այսպէս էր բնութագրում. «Ապշեցուցիչ է արեւելեան հարթավայրի եւ հայկական լեռնաշխարհի տոպոգրաֆիկական տարբերութիւնը: Եթե Հայաստանի եւ Վրաստանի միջեւ որոշ տեղերում լինեն անցումային տարածքներ, ինչպէս, օրինակ Բորչալուի եւ Ախալցխայի շրջանները, ապա Հայաստանի եւ Արեւելեան հարթավայրի միջեւ մշտական անցում գրեթէ գոյութիւն չունի: Այս հարթավայրի վերեւում բարձրանում են Հայաստանի ծայրամասային լեռները»[32]:

Հետաքրքրականը այն է նաեւ, որ Շահխաթունեանն իրերը կոչել է իրենց անունով՝ Հայաստան, Վրաստան, իսկ պատմականօրէն գոյութիւն չունեցող «Ադրբեջան»-ը՝ «Արեւելեան հարթավայր»:

«Հայկական լեռնաշխարհը,- գրում է Շահխաթունեանը,- անկախ վարչական բաժանումներից, համախմբուած է: Ելիզաւէտպոլի նահանգը սակայն զրկուած է արժեքաւոր արդիւնաբերութեան համար անհրաժեշտ բնական պայմաններից: Օրինակ՝ այնտեղ հնարաւոր չէ գտնել բամբակի արտեր... Միայն Զանգեզուրի գաւառի երկու գետերի խոր կիրճերում կարելի է հանդիպել բամբակի փոքր արտերի: Մինչդեռ հարթավայրերում կան աւելի քան 46,000 հեկտար բամբակի արտեր: Նահանգի ողջ հայկական բաժինը հացահատիկ արտադրող երկիր է, ինչպես Հայկական լեռնաշխարհի միւս բոլոր մասերը: Թիֆլիսի նահանգի հայկական մասում այլեւս հնարաւոր չէ գտնել բամբակով կամ այլ արժէքաւոր բոյսերով զբաղուած թեկուզ տաս մարդ: Եւ այս առումով Ախալքալաքն ու Լոռին Երեւան նահանգի եւ Կարսի օբլաստի շարունակութիւնն են»[33]:

Նման խորքային սոցիալ-տնտեսական եւ ազգագրական վերլուծութիւնների հենքի վրայ, ՀՅԴ արեւելեան բիւրոյի անդամը վիճակագրական թարմացուած պատկեր է տալիս առաջադրուող երեք հայկական նահանգների (կանտոնների) համար[34].

«1. Գանձակի նահանգ

Գաւառ	հայ	մուսուլման	այլ	ընդամենը
Քարվանսարա	66 (79 %)	14 (16 %)	4 (5 %)	84
Գանձակ	79 (60 %)	42 (31%)	13 (9 %)	134
Շուշի	150 (71%)	60 (28%)	2 (1%)	212
Զանգեզուր	88 (66%)	46 (34%)	2 (1%)	136
Ընդամենը	**383 (68%)**	**162 (28 %)**	**21 (4%)**	**566**

«2. Երեւանի նահանգ

Գաւառ	հայ	մուսուլման	այլ	ընդամենը
Նոր Բայազետ	107 (60%)	69 (38%)	3 (2 %)	179
Նախիջեւան	58 (42%)	77 (57%)	1 (1%)	136
Շարուր	13 (14%)	78 (86%)	1 (1%)	92
Էջմիածին	130 (71%)	47 (26%)	6 (3%)	183
Երեւան	140 (64%)	70 (32%)	10 (4%)	220
Ընդամենը	**448 (55%)**	**341 (42%)**	**21 (3%)**	**810**

«3. Ալեքսանդրապոլի նահանգ

Գաւառ	հայ	մուսուլման	այլ	ընդամենը
Ալեքսանդրապոլ	176 (92%)	3 (2%)	12 (6%)	191
Կողբ	28 (30%)	21 (29%)	35 (41%)	84
Կարս	83 (43%)	49 (25%)	61 (32%)	193
Կաղզուան	25 (35%)	13 (18%)	33 (47%)	71
Լոռի	86 (77)	10 (9%)	16 (14)	112
Ախալքալաք	89 (74%)	8 (7%)	23 (19%)	120
Ընդամենը	484 (63%)	107 (14%)	180 (23%)	771
Երեք նահանգներ	1315 (61%)	610 (28%)	222 (11%)	2147

Գրքոյկում լրացուցիչ հետաքրքրական բացատրու-

Նկար 5

թիւն է տալիս դարձեալ Շահխաթունեանն, այն մասին, թէ ինչու Արդահանի եւ Օլթիի օկրուգները չեն բերուել հայկական նահանգների կազմ: «Մենք անջատեցինք Արտահանի եւ Օլթիի շրջանները,- գրում է նա,- քանի որ դրանք գտնւում են բարձրավանդակի եզրին եւ չունեն հայկական մեծամասնութիւն (129,000 բնակչի դիմաց հայերի թուաքանակը կազել է՝ 8,000 մարդ – Կ.Խ.): Բայց եթէ վերցնենք ամբողջ բարձրավանդակն էլ, անկախ քաղաքական մոմենտից, մենք դեռ կ'ունենանք հայութեան բացարձակ մեծամասնութիւն: Այսպէս նշված նահանգների ընդհանուր թիւը կը կազմի 2,276,000 մարդ (= 2,147,000 + 129,000), որից հայերի թիւն է՝ 1,323,000 մարդ (= 1,315,000 + 8,000), այսինքն ողջ բնակչութեան 58%-ը»[35]:

ՀՅԴ նախագծում եւ Աւետիք Շահխաթունեանի լրացուցիչ գրքոյկում նշուած հիմնաւորումները հաշուի առնելով, կարելի է առաջադրուած հայկական երեք նահանգները մօտաւոր կերպով պատկերացնել հետեւեալ քարտէզում (տես՝ նկար 5):

Շատ տեղին էր նկատել տալիս Արտաշէս Աբեղեանն, ասելով որ. «Այս հիմնական միտքն ապացուցելու համար Ա. Շահխաթունեան խնդրին մօտենում է ոչ թէ դիլետանտի աչքով եւ ոչ էլ պոլիտիկոսի դերի մէջ, այլ իբրեւ լուրջ եւ բարեխիղճ ուսումնասիրող՝ մէկ կողմից, եւ միւս կողմից իբրեւ ռէալ, իրատես քաղաքականութեան հետեւող: Հեշտ չէր ի հարկէ լուծել առաջադրուած խնդիրը Կովկասեան պայմաններում, ուր ուսումնասիրողի առաջ անգամ բաց չէին պատմական վաւերագրերի դիւանները»[36]:

Այս առումով չափազանց մեծ է Շահխաթունեանի կատարածը. «Նա,- գրել է Սիմոն Վրացեանը,- գերազանցապէս տեսական միտք էր: Անդրկովկասի եւ հայ տնտեսական, ազգագրական, վարչական գործերի ծանօթութեան տեսակէտից նա գրեթէ մրցակից չունէր»[37]:

Նիկոլ Աղբալեանը Շահխաթունեանի մասին ասել է. «Պէտք է յիշատակեմ մեր ընկեր Աւետիք Շահխաթունեանին, զոր կարելի է անուանել ՀՅ Դաշնակցութեան իտէալներու ձեւակերպիչը»[38]: Եւ նշում է մի կարեւոր կէտ Շահխաթունեանի կատարած գործի մասին. «Մահը չթողեց, որ նա գրաւոր ձեւակերպում տայ տաճկապատկան Հայաստանի մասին, ինչպէս արել էր իր գրքով ռուսապատկան Հայաստանի վերաբերմամբ»[39]:

Շահխաթունեանի գրքի իրաւա-քաղաքական նշանակութիւնն ապացուցում է նաեւ Աւետիս Ահարոնեանի Հայոց ազգային խորհրդին ուղղուած, 1918 թ. յուլիսի 23 թուակիր հեռագրից, ուր Փարիզի խաղաղութեան կոնֆերանսի շրջանակներում ներկայացնելու համար պահանջում էր, առաջին յարմար առիթով, ուղարկել Ա. Շահխաթունեանի գրքի 10 օրինակ[40]:

Արդէն օրինագծային իրաւական նշանակութիւն ստացած՝ ՀՅԴ նախագիծը ուղարկուեց Թիֆլիս՝ Օզակոմին՝ մեկ ամսվա ընթացքում վերջնական որոշմամբ հետ վերադարձնելու նպատակով[41]: Այդտեղ նախագծի քննութիւնը տրուեց մէկ այլ մասնագիտական առանձին յանձնաժողովի՝ Նոյ Ժորդանիայի նախագահութեամբ[42]: Վրացական ազգային-դեմոկրատները շեշտում էին, որ չի կարելի փոխել 1783 թ. Գէորգիեւսկի պայմանագիրը եւ Վրաստանից անջատել Բորչալուի եւ Ախալքալաքի շրջանները:

Այնոյետ բոլշեւիկների հոկտեմբերյան յեղաշրջմամբ, քաղաքական միանգամայն նոր պայմաններում ակնյայտօրէն սրուեցին անդրկովկասեան երեք ազգութեան քաղաքական էլիտաների միջեւ փոխյարաբերութիւնները:

Շահխաթունեանն իր գրքոյկի վերջաբանում, դիպուկ բացատրութիւն է տալիս ՀՅԴ նախագծի ճակատագրի մասին. «Բոլորը գիտեն,- ասում է նա,- որ այս հարցը չի կարելի յետաձգել: Բայց տարբեր տակտիկական նկատառումներն ու տուեալ քաղաքական իրավիճակի չհասկացուած պայմանները մեզ ստիպեցին յետաձգել այս հարցի լուծումը: Եւ կարելի է հանգիստ ասել, որ դա տեղի ունեցաւ իրենց «չեզոք ինտերնացիոնալիստ» համարողների մեղքով: Ժամանակն է, որ նրանք հասկանան, որ ոչ մի մարտավարական քայլ չի կարող հանգստացնել մեր հասարակութեանը, որը այս հարցի լուծումից է ակնկալում նորմալ կեանքի հաստատում եւ միջազգային յարաբերութիւնների բարելաւում,- եւ վերջում հաւաստիացնում է Շահխաթունեանը,- Հայ հասարակութիւնը վարչական վերաբաշխումը համարում է օրինաչափ խնդիր եւ սպասում է դրա լուծմանը»[43]:

Այս բոլորից դատելով, պէտք է ասել, որ Հայաստանի դեմարկացիայի ուղղութեամբ դաշնակցական մտաւորականների եւ գործիչների կատարած ուսումնասիրութիւններն ու քայլերն ունեն պատմա-քաղաքական, գաղափարաբանական եւ իրաւական կոնկրետ կշիռ ու նշանակութիւն: Այս առնչութեամբ դիպուկ գնահատական է տալիս Դաւիթ Անանունը, ով որպէս երդուեալ մարքսիստ եւ հայկական սոցիալ-դեմոկրատիայի կարկառուն տեսաբան, տարիներ շարունակ քննադատաբար էր մօտեցել ՀՅԴ քաղաքական ձգտումներին՝ Հայաստանի կատարեալ ազատագրման գաղափարներին:

Դաւիթ Անանունի հետեւեալ գնահատմամբ էլ վերջացնում ենք մեր այս համառօտ ուսումնասիրութիւնը. «Ահա այսպէս,- գրում է Անանունը,- ազգաշինութեան գաղափարն ու ծրագիրը Դաշնակցութեան շարքերում նուաճեց ամուր հող: Մի կողմից նա կերպարանաւորուեց իբրեւ ազգային կուլտուրական ինքնօրէնութիւն՝ խարսխուած անձային կապի վրայ, միւս կողմից դարձաւ տերիտորիայի եւ հայրենիքի որոնումն Ռուսական Հայաստանում: Ազգային հարցը յուզական էր հայ ժողովրդի համար: Մնացած քաղաքական հոսանքները կամ նոր բան չէին ասում նրա հոգուն ու սրտին, կամ հինը կրկնելով, նրա ձգտումները մաշում էին չափաւորութեան ուղիներում, եւ այսպիսով չէին կարողանում տիրանալ նրա հասարակական համակրանքներին: Միայն Դաշնակցութիւնն էր, որ չէր հրաժարւում որոնումներից եւ ինքնամփոփ հայրենիքի հեռանկար էր բանում հայութեան առաջ»[44]:

Հղումներ

1 Նախագիծ Կովկասեան գործունէութեան, տպարան ՀՅ Դաշնակցութեան, Ժնեւ, 1906, էջ 14:

2 «Genosse»-ն բժիշկ Տիգրան Իսախանեանի գրական ծածկանունն է (տես Հովակիմյան Բախտիար, Հայոց ծածկանունների բառարան, Երեւան, ԵՊՀ հրատ., 2005, էջ 120):

3 «Կեանք», քաղաքական, հասարակական, տնտեսական օրգան, Թիֆլիս, թիւ 10, 1906 մայիսի 20, էջ 152:

4 «Զանգակ»-ը սովետական յայտնի գործիչ՝ Աշոտ Աթանասեանի գրական ծածկանուններից է (տես Հովակիմյան Բախտիար, Հայոց ծածկանունների բառարան, Երեւան, ԵՊՀ հրատ., 2005, էջ 550):

5 «Աշխատանք», ժողովրդական, տնտեսական, գիւղացիական շաբաթաթերթ, Թիֆլիս, 1906 սեպտեմբերի 23, թիւ 33, էջ 518:

6 Նոյնը, էջ 519:

7 «Կեանք», քաղաքական, հասարակական, տնտեսական օրգան, Թիֆլիս, թիւ 11, 1906 մայիսի 27, էջ 170:

8 Անանուն Դաւիթ, Ռուսահայերի հասարակական զարգացումը, 3-րդ հատոր, Վենետիկ, 1926, էջ 417:

9 Նիւթեր ՀՅԴ պատմութեան համար, հատոր Գ, Բէյրութ, 2007, էջ 325:

10 Խաժակ Գարեգին, Դէպի ֆեդերացիա, Թիֆլիս, 1907, էջ 316:

11 Աբեղեան Արտաշէս, Գարեգին Խաժակի երկերը-Մաս 3, «Հայրենիք» ամսագիր, 1925 ապրիլ, էջ 101:

12 Թոփչեան Եղիշէ, Արդեօք հնարաւո՞ր է ֆեդերացիան, «Ժայռ», Թիֆլիս, 1907 յունիսի 16, էջ 2:

13 Շահխաթունեան Աւետիք, Ֆէդէրալիզմ եւ դեմօկրատիա, Թիֆլիս, 1907, էջ 117:

14 Кастелянский А.И., Формы национального движения в современных государствах, Санкт-Петербург, 1910, Страница, էջ 501-502:

15 Անանուն Դաւիթ, Ռուսահայերի հասարակական զարգացումը, Երրորդ հատոր, Վենետիկ, 1926, էջ 417:

16 Земство, Զեմստւո բառը թարգմանուել է տարբեր կերպ՝ «հողապետութիւն», «համայնավարութիւն», «տեղավարութիւն», սակայն ժամանակին Մանուկ Աբեղեանն առաջարկել էր օգտագործել «տեղական ինքնավարութիւն» եզրոյթը («Յառաջ», Երեւան, 5 մարտի, 1920, «Աշխատաւոր», Թիֆլիս, 22 փետրուարի, 1919): Զեմստւօներն ունէին տարատեսակներ՝ նահանգային, գաւառային եւ համայնքային (վոլոստային) տեղական ինքնավարութեան մարմիններ: Հայկական սկզբնաղբիւրներում դրանք կոչւում էին նահանգային եւ գաւառային ինքնավարութիւններ, հանդիպում ենք նաեւ «տեղավարութիւն» եզրոյթին (Տես Ասատրյան Անանա Է., Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինները 1918-1920 թթ., ՎԷՄ, 2018. թիւ 1, էջ 225): Կարծում ենք մերօրեայ տերմինաբանութեան լոյսի տակ զեմստւօն հոմանիշ է տեղական ինքնակառավարմանը:

17 «Արեւ» գրական, հասարակական եւ քաղաքական օրաթերթ, Բաքու, 1916 յունուարի 13, էջ 3:

18 «Հորիզոն» հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 1916 նոյեմբերի 24, էջ 2:

19 Տես «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1926 մարտի 25, էջ 3:

20 Տես «Հորիզոն» հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 1916 նոյեմբերի 27, էջ 2:

21 «Հորիզոն» հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 1917 յունուարի 11, Ա էջ:

22 «Հորիզոն» հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 1917 փետրուարի 3, էջ 3:

23 Տես նոյնը, 1917 մայիսի 25, Ա էջ:

24 Տես Հովհաննիսյան Գայանե, Ելիզավետպոլի նահանգը Անդրկովկասի վարչատարածքային բաժանումներում (1917թ. փետրվար - 1918թ. հունվար), Գիտական Արցախ, № 1(4), 2020, էջ 74-75:

25 ՀՅ Դաշնակցութեան Ռայոնական Ժողովը եւ նրա որոշումները, «Յառաջ»-ի գրադարան թիւ 67, Թիֆլիս, 1917, էջ 16-17:

26 «Հորիզոն» հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 1917 յուլիսի 4, էջ 2:

27 Վրացեան Սիմոն, Հայաստանի Հանրապետութիւն, Բ.տպ., Բէյրութ, 1958, էջ 22:

28 Տես Հովհաննիսյան Գայանե, Ելիզավետպոլի նահանգը Անդրկովկասի վարչատարածքային բաժանումներում (1917թ. փետրվար - 1918 թ. հունվար), Գիտական Արցախ, № 1(4), 2020, էջ 75:

29 Армянскій вѣстникъ, Москва, 1917 декабрь, No. 50-51-52, с. 12-13.

30 Армянскій вѣстникъ, Москва, 1917 декабрь, No. 50-51-52, с. 12.

31 «Յառաջ», ՀՅԴ պաշտօնաթերթ, Բաքու, 1917 հոկտեմբերի 22, էջ 2-3:

32 Шахатунян Аветик Тигранович, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 2.

33 Шахатунян Аветик Тигранович, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 31.

34 Նոյնը, с. 150-151:

35 Шахатунян Аветик Тигранович, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 75:

36 «Հորիզոն» հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 1918 հոկտեմբերի 30, էջ 2:

37 ՎԷՄ, Փարիզ, 1933 սեպտ-հոկտ, թիւ 1, էջ 127:

38 «Ասպարէզ», եռօրեայ թերթ, Ֆրէզնօ, 1919 դեկտ. 19, Ա էջ:

39 «Հորիզոն», Հասարակական, գրական, քաղաքական օրաթերթ, Թիֆլիս, 1918 հոկտեմբերի 27, էջ 2:

40 Տես https://hy.wikisource.org/wiki:

41 Տես Հովհաննիսյան Գայանե, Ելիզավետպոլի նահանգը Անդրկովկասի վարչատարածքային բաժանումներում (1917թ. փետրվար - 1918 թ. հունվար), Գիտական Արցախ, № 1(4), 2020, էջ 75:

42 Տես՝ https://geghard-saf.am/242/1917-թվականի-Անդրկովկասի-ազգային-տարածքային-տարանջատման-հիմնախնդիրը/:

43 Шахатунян Аветик Тигранович, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 206:

44 Անանուն Դաւիթ, Ռուսահայերի հասարակական զարգացումը, 3-րդ հատոր, Վենետիկ, 1926, էջ 419:

ԻԻՀ դիրքորոշումը Սիրիայում նոր իշխանության ձևավորման վերաբերյալ

Նարե Գևորգյան
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս

2024 թ. դեկտեմբերի 8-ին Բաշար Ասադի կառավարությունը փլուզվեց ընդդիմադիր ուժերի լայնածավալ հարձակման ժամանակ: Հարձակումը ղեկավարում էր «Հայաթ Թահրիր աշ-Շամը» (HTS)՝ զինյալների ջիհադական խմբավորումը, որն ուժ էր հավաքում Սիրիայում քաղաքացիական պատերազմի ողջ ընթացքում:

Իշխանության անկումը տեղի ունեցավ մի քանի ամիս տևած կատաղի մարտերից և Ասադի ուժերի վրա աճող ճնշումներից հետո: ՀԹՇ-ն, ընդդիմադիր այլ խմբերի հետ միասին, կարողացել է գրավել ռազմավարական առանցքային դիրքերն ու հենակետերը՝ թուլացնելով վարչախմբի դիրքերն իշխանության մեջ:

Երբ Ասադին տապալելու մասին լուրը տարածվեց, միջազգային հանրությունը ոչ միանշանակ արձագանքեց: Մինչ որոշ երկրներ ողջունել են իշխանության փոփոխությունը և հույս հայտնել ավելի կայուն և խաղաղ Սիրիայի համար, մյուսները մտահոգություն են հայտնել «Իսլամական պետության» ակտիվության աճի և բռնության ու անկայունության շարունակման հավանականության վերաբերյալ:

Ասադի տապալումից հետո առաջին օրերին ջանքեր գործադրվեցին անցումային կառավարություն ստեղծելու և Սիրիայի վերականգնման գործընթաց սկսելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, իրավիճակը մնաց անկայուն, քանի որ տարբեր խմբավորումներ պայքարում էին նոր ազատագրված երկրում իշխանության և ազդեցության համար:

Բաշար Ասադի տապալումից հետո Սիրիայի նոր կառավարությունը, ամենայն հավանականությամբ, կներկայացնի տարբեր ընդդիմադիր խմբերի կոալիցիա, ներառելով ինչպես քաղաքական կուսակցությունները, այնպես էլ ապստամբ խմբավորումները:

Ընդհանուր առմամբ, Մերձավոր Արևելքի և ոչ մի պետություն այնքան բան չուներ կորցնելու Սիրիայում Բաշար Ասադի իշանության տապալումից հետո, որքան Իրանը: Սիրիան ոչ միայն համարվում էր նրա միակ դաշնակիցը սկսած 1979-ի հեղափոխությունից (և՛ Հաֆեզ Ասադի, և՛ նրա որդի Բաշար Ասադի օրոք), այլև աշխարհագրորեն ապահովում էր Թեհրանի կապը լիբանանյան շիական «Հեզբոլլահ» խմբավորման հետ, որի ստեղծումը դարձել էր հետհեղափոխական Իրանի գլխավոր ձեռքբերումներից մեկը: Սիրիան և «Հեզբոլլահ»-ը ԱՄՆ-ի և Իսրայելի իրանական «դիմադրության առանցքի» կարևոր էլեմենտներն են և «Հեզբոլլահ»-ի ունեցած զինամթերքի մեծ մասը Իրանը փոխանցում էր Դամասկոսի օդանավակայանով: Այս «կամուրջը», առանց Բաշար Ասադի, կփակվի:

Վերջին տասներեք տարիների ընթացքում Իրանը Սիրիայում ներդրել է մոտ 30-50 միլիարդ դոլար, ինչն ընդգծում էր Բաշար Ասադի իշխանության գոյատևումն ապահովելու նրա անսասան հանձնառությունը: Իրանի խորհրդականները, մասնավորապես «Ղոդս» ռազմական ստորաբաժանումից, վճռորոշ դեր են խաղացել Սիրիայի քաղաքացիական պատերազմի ժամանակ Ասադի կառավարության անվտանգության ապահովման գործում: Իրանը նաև սերտ կապեր է պահպանել սիրիական բանակի որոշ ստորաբաժանումների, մասնավորապես, 4-րդ զրահատանկային դիվիզիայի և Հանրապետական գվարդիայի հետ: 4-րդ զրահատանկային դիվիզիան, որը ղեկավարում էր Մահեր ալ-Ասադը՝ Բաշարի եղբայրը, իրանական պատրաստվածության, սպառազինության և ֆինանսական օգնության սիրված վայրն էր՝ շնորհիվ իր հուսալիության և արդյունավետության մեծ հարձակումների դեպքում[1]:

Իրանը նաև Սիրիայի նախագահ Բաշար Ասադի ուժերին տրամադրել է ռազմական պատրաստություն, զենք և մարտիկներ: Իրանի ռազմական խորհրդականներն ուղարկվել են Սիրիա՝ օգնելու սիրիական բանակին՝ համակարգելու ապստամբական խմբա-

վորումների դեմ ռազմական գործողությունները: Բացի այդ, Իրանն աջակցել է Լիբանանից, Իրաքից և Աֆղանստանից շիա աշխարհազորայինների տեղակայմանը՝ Սիրիայի կառավարական զորքերի հետ կողք-կողքի մարտական գործողություններին մասնակցելու համար:

Տնտեսական առումով Իրանը Սիրիային տրամադրել է ֆինանսական օգնություն, վարկային գծեր և նավթի մատակարարումներ՝ շարունակվող հակամարտության հետևանքով առաջացած տնտեսական դժվարությունները մեղմելու համար: Իրանը նաև ներդրումներ է կատարել Սիրիայի ենթակառուցվածքային նախագծերում, ինչպիսիք են պատերազմից ավերված շրջանների վերականգնումը և ձեռնարկությունների ստեղծումը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են էներգետիկան, հեռահաղորդակցությունը և շինարարությունը:

Ընդհանուր առմամբ, 2013 թ. ի վեր Իրանի կողմից Սիրիային ցուցաբերվող ռազմական և տնտեսական օգնությունը զգալի դեր է խաղացել Ասադի իշխանությանն աջակցելու և ներքին ու արտաքին սպառնալիքների պայմաններում նրա գոյատևումն ապահովելու գործում:

Ուստի, տրամաբանական է դառնում, որ Սիրիայում նոր իշխանության հաստատումը, այսպես կոչված, ԻԻՀ մերձավորարևելյան քաղաքականության տապալումներից է, որի հետևանքները գուցե դեռ երկար բացասական ազդեցություն ունենան վերջինիս տարածաշրջանային ազդեցության հաստատման փորձերի վրա:

Սիրիայում Բաշար Ասադի վարչակարգի տապալումից հետո Իրանի քաղաքական շրջանակներում հակասական արձագանքներ եղան: Որոշ պաշտոնյաներ մտահոգություն են հայտնել տարածաշրջանում Իրանի շահերի համար հնարավոր հետևանքների վերաբերյալ, իսկ մյուսները ողջունել են դա որպես փոփոխությունների հնարավորություն:

ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին, դեկտեմբերի սկզբին տված իր հարցազրույցներից մեկում, առաջին անգամ խոսելով այդ մասին, հստակ նշել է, որ Սիրիայում տեղի ունեցածը, անկասկած, Ամերիկա-սիոնիստական համատեղ դավադրության հետևանք է: Ընդգծելով, որ գլխավոր դավադիրները եղել են ԱՄՆ-ն և Իսրայելը, Խամենեին նաև հիշատակել է «Սիրիայի հարևան պետության» դերակատարության մասին. «Հարևան երկիրը հստակ դեր է խաղացել և շարունակում է խաղալ այն: Իրաքը, Իսրայելը, Հորդանանը, Լիբանանը և Թուրքիան սահմանակից են Սիրիային: Այդ հարևաններից Թուրքիան երկար ժամանակ աջակցում էր սիրիական ընդդիմության որոշակի ուժերին: Խամենեին նաև հայտարարել է, որ իրանական հետախուզությունը վերջին երեք ամիսների ընթացքում զգուշացրել է Սիրիայի կառավարությանը կայունությանը սպառնալիքների մասին՝ հավելելով, որ Դամասկոսը «անտեսել է թշնամուն»[2]:

2024 թ. դեկտեմբերի 10-ին տված հարցազրույցում Իրանի փոխնախագահ և արտաքին գործերի նախկին նախարար Մոհամմադ Ջավադ Զարիֆը հայտարարել է, որ Բաշար Ասադի կառավարությունը պետք է կանխատեսեր իր անկումը: Նա բացատրել է, որ մարտի դաշտում ընդդիմությանը հաղթելուց հետո ռեժիմը պետք է երկխոսության մեջ մտներ նրա հետ: Զարիֆն ընդգծել է, որ մեծամտությունը անկման առանցքային կատալիզատորն է, և որ այդ խնդիրը միայն Ասադին բնորոշ չէ: Նա նաև նշել է, որ Իրանը Ասադի վարչակարգին խորհուրդ էր տալիս բանակցություններ վարել ընդդիմության հետ, սակայն դա չանելը հանգեցրել է կարճատև հաղթանակների: Զարիֆը հայտնել է Սիրիայի հաջորդ կառավարության հետ լավ հարաբերություններ հաստատելու Իրանի պատրաստակամությունը՝ հաստատելով, որ Իրանը միշտ պաշտպանել է Սիրիան ԻՊ-ից, որը մշտական սպառնալիք է ներկայացնում: Նա նաև նշել է, որ Սիրիայում Թուրքիայի երկարաժամկետ շահերին լավագույնս կհամապատասխանի բոլոր խմբերը ներկայացնող և բնակչության լայն աջակցությունը վայելող ներառական կառավարությունը:

Նա նաև ընդգծել է. «Իսլամական Հանրապետությունը անկախ տարածաշրջանային գերտերություն է, և իր ազգային հզորության հիման վրա Իրանը կա-

րող է հայտարարել, որ ոչ ոք չպետք է որևէ ծրագիր ունենա Իսլամական Հանրապետության դեմ: Իրանը պատրաստ է լավ հարաբերություններ պահպանել Սիրիայի հաջորդ կառավարության հետ: Մենք միշտ պաշտպանել ենք Սիրիայի ժողովրդին ԴԱԻՇ-ի ահաբեկիչների սպառնալիքից: Մենք կարծում ենք, որ այդ վտանգը դեռ սպառնում է Սիրիային: Նրանք, ովքեր վերահսկում են Սիրիան, պետք է մտահոգվեն, և Իրանի հետ պետք է գնան համագործակցության ճանապարհով»[3]:

Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի նախկին քարտուղար Ալի Շամխանին ևս անհանգստություն է հայտնել այս կապակցությամբ: Նա զգուշացրել է, որ Ասադի վարչակարգի տապալումը անկայունություն կստեղծի տարածաշրջանում և կարող է հանգեցնել ահաբեկչության տարածմանը:

ԻԻՀ արտգործնախարար Աբբաս Արաղչին իր թելեգրամյան ալիքում տեղադրել է իր հարցազրույցի մի կարճ հատված, որտեղ նշում է. «Ինչ վերաբերում է Սիրիայի ապագային, ապա դեռ վաղ է դատել: Կան բազմաթիվ գործոններ, որոնք ազդում են Սիրիայի վրա, որոնք ազդում են նրա ապագայի վրա: Մեծ փոփոխություններ են սպասվում, դեռ վաղ է դատել և՛ մեզ, և՛ մյուսներին»[4]:

Ընդհանուր առմամբ, իրանական քաղաքական շրջանակներում արձագանքները տարբեր են՝ կախված պաշտոնյայի և Սիրիայում տիրող իրավիճակի վերաբերյալ նրանց տեսակետից:

Դժվար է ճշգրիտ կանխատեսել, թե ինչպիսին կլինի Իրանի դիրքորոշումը Սիրիայում Բաշար Ասադի վարչակարգի տապալումից հետո, քանի որ գոյություն ունեն մի շարք գործոններ:

Հնարավոր արդյունքներից մեկն այն է, որ Իրանը կփորձի պահպանել իր ազդեցությունը Սիրիայում՝ աջակցելով նոր կառավարությանը, որը բարեկամ է իր շահերին: Սա կարող է ներառել նոր առաջնորդի կամ քաղաքական խմբավորման աջակցությունը, որը համահունչ է տարածաշրջանում Իրանի նպատակներին, ինչպիսիք են Սիրիայում իր ներկայության պահպանմանը՝ աջակցելու իր վստահված զինյալներին և շարունակելու իր ազդեցությունը տարածաշրջանում:

Որպես այլընտրանք, Իրանը կարող է հակազդել Սիրիային, եթե Ասադի վարչակարգի տապալումը հանգեցնի նոր կառավարության, որը թշնամաբար կտրամադրվի Իրանին: Այս սցենարում Իրանին կարող է անհրաժեշտ լինել վերագնահատել Սիրիայում իր ռազմավարությունը և հնարավոր է դադարեցնի աջակցությունը որոշ խմբավորումների՝ հետագա հակամարտությունից խուսափելու համար:

Ընդհանուր առմամբ, Իրանի դիրքորոշումը Սիրիայում Ասադի վարչակարգի անկումից հետո կախված կլինի տարածաշրջանում տարբեր դերակատարների գործողություններից և սիրիական հակամարտության դինամիկայից: Իրանը, ամենայն հավանականությամբ, կշարունակի զգալի դեր խաղալ երկրում, սակայն նրա ներգրավվածության հստակ բնույթը կախված կլինի Սիրիայում և ավելի լայն Մերձավոր Արևելքում քաղաքական լանդշաֆտից:

Հղումներ

1. https://carnegieendowment.org/middle-east/diwan/2024/12/why-did-iran-allow-assads-downfall?lang=en (13.01.2025)
2. https://www.irna.ir/news/85686965/%D9%86%D9%82%D8%B4%D9%87-%D9%85%D8%B4%D8%AA%D8%B1%DA%A9-%D8%A2%D9%85%D8%B1%DB%8C%DA%A9%D8%A7-%D9%88-%D8%A7%D8%B3%D8%B1%D8%A7%D8%A6%DB%8C%D9%84-%D8%AF%D8%B1-%D8%AA%D8%AD%D9%88%D9%84%D8%A7%D8%AA-%D8%B3%D9%88%D8%B1%DB%8C%D9%87-%D9%85%D8%AD%D9%88%D8%B1-%D8%A7%D8%B5%D9%84%DB%8C-%D8%A8%-DB%8C%D8%A7%D9%86%D8%A7%D8%AA (13.01.2025)
3. https://www.memri.org/tv/iranian-vp-and-former-fm-mohammad-javad-zarif-assad-should-have-heeded-irans-advice-engage (13.01.2025)
4. https://t.me/s_a_araghchi/4824 (13.01.2025)

Սիրիական գործընթացների ազդեցությունը հարավկովկասյան տարածաշրջանի վրա

Լիանա Պետրոսյան
Պատմ. գիտ. թեկնածու, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ավագ լաբորանտ, դասախոս

2024 թ. Հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի համար խիստ լարված ու փոփոխական տարի էր, որտեղ երկարատև հակամարտությունները և արտաքին ուժերի պայքարը զգալիորեն ազդել էին տարածաշրջանային երկրների անվտանգության, տնտեսական և քաղաքական գործընթացների վրա:

Մերձավոր Արևելքում 2024 թ. տեղի ունեցած խոշորագույն իրադարձություններից էին Սիրիայում իշխող վարչակարգի տապալումն ու դրա հետևանքով նոր իրողությունների ստեղծումը: Տարվա ընթացքում Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադը պահպանում էր իր իշխանությունը և ամուր կապերը Ռուսաստանի և Իրանի հետ: Սիրիայի կառավարության վերահսկողությունը տարածվել էր գրեթե ողջ երկրում, թեպետ որոշ հատվածներում դեռևս շարունակվում էին զինված բախումներն ահաբեկչական խմբավորումների հետ:

2024 թ. ընթացքում թուրք-սիրիական հարաբերությունները այնտեղ էին հասել, որ փորձագետները խոսում էին երկու երկրների միջև առկա պատնեշի վերացման հնարավորության մասին: Հարաբերությունների բարելավման գործընթացը տեղի էր ունենում ռուսական միջնորդությամբ՝ հետպատերազմյան հետևանքների վերականգնման և հնարավոր խաղաղության համաձայնությունների կնքման շուրջ:

Միևնույն ժամանակ, Սիրիայի զինված ուժերը և դաշնակիցները, ներառյալ Իրանը և Ռուսաստանը, շարունակում էին ակտիվորեն պայքարել Սիրիայի տարբեր շրջաններում գործող ահաբեկչական խմբավորումների դեմ:

2024 թ. տարածաշրջանային ու համաշխարհային դերակատարներն առավել ակտիվացրին Սիրիայի քաղաքական գործընթացներին իրենց ներգրավվածությունը: Ռուսաստանը, Իրանը և Թուրքիան շարունակում էին կարևոր ազդեցություն ունենալ Սիրիայի վրա, ԱՄՆ-ն ու ԵՄ-ը փորձում էին պահպանել իրենց դիրքերը՝ հիմնվելով հիմնականում ահաբեկչության դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության խոսույթների վրա: Այնուամենայնիվ, Սիրիայում խաղաղության հասնելու գործընթացը դեռևս բարդ էր: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ ԱՄՆ-ն որոշել էր կրճատել իր ռազմական ներկայությունը Սիրիայում՝ կենտրոնանալով սիրիական քրդերին աջակցության վրա:

Արդեն 2024 թ. դեկտեմբերի 8-ին Սիրիայի հակակառավարական ուժերը հարձակման անցան և մտան մայրաքաղաք Դամասկոս: Զինյալները պետական հեռուստատեսության ուղիղ եթերում հայտարարեցին, որ նախագահ Բաշար Ասադի վարչակարգը տապալվել է, և նա փախել է երկրից:

Բ. Ասադի վարչակարգի տապալումը թեև թվում է տեղային իրադարձություն, բայց կարող է լուրջ հետևանքներ ունենալ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական դինամիկայի վրա, մի տարածաշրջան, որն արդեն բնութագրվում է եռացող լարվածությամբ և միջպետական բարդ հարաբերություններով: Այս իրադարձությունների պոտենցիալ հետևանքների վերլուծությունը պահանջում է ներառել ինչպես տարբեր դերակատարների, այդ թվում՝ տարածաշրջանային տերությունների, ինչպիսիք են Թուրքիան, Ռուսաստանը և Իրանը, փոխազդեցությունը, այնպես էլ ահաբեկչական խմբավորումների, փախստականների հոսքերի և ընդհանուր տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության ներուժը:

Ասվածի համատեքստում կարևոր խնդիրներից մեկը վերաբերում է Թուրքիայի ազդեցությանը: Բ. Ասադից հետո Սիրիան կարող է զգալիորեն փոխել Թուրքիայի ռազմավարական հաշվարկը: Թուրքիայի ներգրավվածությունը Սիրիայում թեև բարդ է և երբեմն հակասական, սակայն հիմնականում ուղղված է եղել իր տարածքին սահմանակից քրդական ինքնավար գոտու ստեղծումը կանխելուն և քրդական խմբավորումների

Հեղափոխությունը Սիրիայում

ազդեցությանը հակազդելուն, որոնք նա համարում է ահաբեկչական կազմակերպություններ: Բ. Ասադի տապալումը հանգեցրել է թուրքական ուղղակի միջամտության մեծացմանը, ինչն էլ իր հերթին, կարող է ապակայունացնել Հարավային Կովկասի առանց այն էլ փխրուն իրադրությունը, հատկապես հաշվի առնելով Ադրբեջանի հետ Թուրքիայի եղբայրությունը: Տարածաշրջանում թուրքական ազդեցության սրումը կարող է հանգեցնել Հայաստանի հետ լարվածության աճին և ավելի բարդացնել 44-օրյա պատերազմից հետո ձևավորված իրադրությունը՝ նախադրյալներ ստեղծելով ռազմական գործողությունների վերսկսման համար:

Փաստ է, որ Սիրիայում Բ. Ասադի վարչակարգի տապալումը դարձել է Հարավային Կովկասի հերթական լուրջ մարտահրավերը: Ադրբեջանը գոհ է եղբայրական Թուրքիայի վերջին հաջողությունից, որն ակնհայտորեն որոշիչ դեր է խաղացել Սիրիայում տեղի ունեցող իրադարձություններում, և ակնկալում է նրա հետագա ամրապնդումը տարածաշրջանում:

Հարավային Կովկասի վրա մերձավորարևելյան գործընթացների ազդեցության մասին են վկայում նաև թուրքական կողմից հնչող հայտարարությունները: Մասնավորապես, «Ատլաս» քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Էլհան Շահինսոյլուն ակնկալում է, որ Թուրքիան և նրա հետ մեկտեղ Ադրբեջանը կամրապնդեն իրենց ազդեցությունը տարածաշրջանում, մինչդեռ Հայաստանի համար Բ. Ասադի վարչակարգի տապալումը հերթական պարտությունն է դարձել: «Բ. Ասադի վարչակարգն աջակցել է Հայաստանին արցախյան երկրորդ պատերազմում: 2020 թ. Սիրիայի խորհրդարանը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև է ընդունել: Այս տեսանկյունից նրա վարչակարգի տապալումը և Թուրքիայի դիրքերի ամրապնդումը Սիրիայում բխում է Ադրբեջանի շահերից»,- կարծում է Շահինսոյլուն: Բացի այդ, փորձագետն ակնկալում է, որ այժմ Թուրքիայի և Ադրբեջանի համար ավելի հեշտ կլինի ստիպել Հայաստանին խաղաղության պայմանագիր կնքել[1]:

Իրանը եղել է Բ. Ասադի վարչակարգի հավատարիմ աջակիցը, որը ռազմական և ֆինանսական օգնություն է ցուցաբերել՝ նրան իշխանության ղեկին պահելու համար: Իրանի աջակցությունը Բ. Ասադին կարելի էր դիտարկել որպես տարածաշրջանում սեփական ազդեցությունը պահպանելու և իր տարածաշրջանային մրցակցի՝ Սաուդյան Արաբիայի ազդեցությանը դիմակայելու ավելի լայն ռազմավարության մաս: Բ. Ասադի վարչակարգի տապալումը մեծ հարված է Մերձավոր Արևելքում Իրանի ռազմավարական շահերին, քանի որ նա փաստացի կորցրել է տարածաշրջանում առանցքային դաշնակցին: Սա կարող է հանգեցնել Իրանի արտաքին քաղաքականության փոփոխությանը, քանի որ նա ձգտում է տարածաշրջանում նոր գործընկերներ գտնել իր ազդեցությունը պահպանելու համար:

Իրանա-սիրիական ջերմ հարաբերությունները քննարկումների տեղիք են տվել նաև հարավ-կովկասյան տարածաշրջանում, քանի որ Ադրբեջանը քննադատաբար է վերաբերվել Բ. Ասադին Իրանի աջակցությանը՝ Իրանի ներգրավվածությունը համարելով ապակայունացնող և սեփական անվտանգությանը սպառնալիք:

Հայաստանը, ընդհակառակը, աջակցել է Իրանի դիրքորոշմանը Սիրիայի հարցում, քանի որ Ադրբեջանի հետ տարածաշրջանային լարվածության պայմաններում նա նաև ապավինել է Իրանի աջակցությանը:

Բ. Ասադից հետո Իրանը կարող է բախվել տարածաշրջանում իր ազդեցության նվազմանը: Կախված Սիրիայում նոր վարչակարգի բնույթից՝ կարող են լարվել Իրանի և տարածաշրջանային որոշ երկրների հարաբերությունները՝ սրելով առկա լարվածությունը կամ Հարավային Կովկասում ստեղծելով նորերը: Ավելին, սուննի ծայրահեղական խմբավորումների հնարավոր աճը Բ. Ասադից հետո կարող է նրանց ուղղորդել դեպի Հարավային Կովկաս՝ էլ ավելի ապակայունացնելով տարածաշրջանը:

Տարածաշրջանային դերակատարներից Ռուսաստանը ևս եղել է Բ. Ասադի վարչակարգի առանցքային դաշնակիցը, որը ռազմական և դիվանագիտական աջակցություն է տրամադրել նրան իշխանությունը պահպանելու համար: Ռուսաստանի ներգրավվածությունը Սիրիայում կարող է դիտվել որպես տարածաշրջանում սեփական ազդեցությունը հաստատելու և ԱՄՆ ազդեցությանը հակազդելու ավելի լայն ռազմավարության մաս: Բ. Ասադի տապալումը հարված է նաև Ռուսաստանի ռազմավարական շահերին, քանի որ նա կկորցնի տարածաշրջանում առանցքային դաշնակցին և կարող է թուլանալ նրա ազդեցությունը Մերձավոր Արևելքում:

Մինչ 44-օրյա պատերազմը՝ Ռուսաստանը ռազմաքաղաքական դաշինքի մեջ էր Հայաստանի հետ, սակայն վերջին շրջանում հայ-ռուսական հարաբե-

Հեղափոխության մեջ ակնհայտ է թուրքական ազդեցությունը

Քրդական հարցը կրկին գալիս է առաջին պլան

րությունները զգալի ճաքեր են տվել: Ուստի Մերձավոր Արևելքում Ռուսաստանի դիրքերի թուլացումը կարող է նպաստել Հարավային Կովկասում Թուրքիայի և ԱՄՆ-ի դերակատարության աճին, ինչն էլ իր հերթին, ուժային նոր մրցավազքի պատճառ կհանդիսանա: Սա կարող է դրսևորվել ինչպես ռազմական գործողություններով, այնպես էլ լոկալ հակամարտությունների սրումով կամ կովկասյան պետությունների ներքին քաղաքականությանը միջամտությամբ:

Չպետք է աչքաթող անել նաև տեղահանությունների և փախստականների հոսքերի մեծացման հնարավորությունը: Դեռևս 2000-ականներից սիրիական հակամարտությունն արդեն իսկ փախստականների զանգվածային ճգնաժամի պատճառ է հանդիսացել: Բ. Ասադի վարչակարգի փլուզումից հետո ստեղծվել է մի իրավիճակ, երբ նոր հնարավորությունների տիրապետող երկրի ահաբեկչական խմբավորումների ղեկավարների թվացյալ «հանդուրժողականություն»-ը լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Մի կողմից նրանք խոսում են մարդու իրավունքների և ազատությունների մասին, մյուս կողմից սիրիական տարբեր բնակավայրերում տեղի բնակիչները բռնության և դաժան մահապատժի են ենթարկվում: Ակնհայտ է, որ դիրքերի ամրապնդման պարագայում ահաբեկչական խմբավորման անդամները երկրի ներսում բնակչության համար անտանելի պայմաններ են ստեղծելու, ինչն էլ ստիպելու է բնակչությանը արտագաղթելու, որի ուղղություններից մեկն էլ Հարավային Կովկաս է լինելու: Սա կարող է տարածաշրջանային երկրներում սրել առկա սոցիալական և տնտեսական խնդիրները՝ հող ստեղծելով անկայունության և նոր հակամարտությունների համար:

Վերջապես, ծայրահեղական ջիհադիստական խմբավորումների հնարավոր վերելքը խիստ մտահոգիչ է: Սիրիան, փաստացի, բազմաթիվ ծայրահեղական կազմակերպությունների գործունեության կենտրոն է եղել: Բ. Ասադի վարչակարգի փլուզումը կարող է իշխանության վակուումի հանգեցնել, որը թույլ կտա այս խմբերին ընդլայնելու իրենց գործունեությունը և, հնարավոր է, ներթափանցեն Հարավային Կովկաս՝ սրելով առկա կրոնական և էթնիկական լարվածությունը: Չպետք է նաև մոռանալ, որ հենց այս խմբավորման անդամներն են 44-օրյա պատերազմի ընթացքում կռվել թուրք-ադրբեջանական տանդեմի զինված ուժերի կազմում:

Եզրափակելով, պետք է նշել, որ Բաշար Ասադի վարչակարգի տապալումը զգալի ազդեցություն կարող է ունենալ հարավկովկասյան գործընթացների վրա, սակայն այստեղ էական է այն, թե ինչ բնույթ և առաջնահերթություններ կունենա Սիրիայի նոր կառավարությունը, ինչպիսին կլինի տարածաշրջանային և միջազգային դերակատարների արձագանքը և, թե ինչպես կդիմակայեն այս ամենին հարավկովկասյան պետությունները:

Ըստ էության, Սիրիայում Բաշար Ասադի վարչակարգի տապալումը էական ազդեցություն կունենա հարավկովկասյան տարածաշրջանում Իրանի և Ռուսաստանի քաղաքականության վրա: Երկու երկրներն էլ կբախվեն մարտահրավերների՝ մի կողմից տարածաշրջանում իրենց ազդեցությունը պահպանելու տեսանկյունից, մյուս կողմից՝ իրենց արտաքին քաղաքական ռազմավարությունը վերագնահատելու անհրաժեշտությունից ելնելով: ■

Հղում

[1] Селезнёв И., Крах режима Асада грозит Южному Кавказу новой войной, https://www.ng.ru/cis/2024-12-10/1_9153_region.html, 10.12.2024, (д/в. 12.01.2025).

Հայ-վրացական պաշտպանական միության հարցը 1920 թ.

Վանիկ Վիրաբյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս

Հայաստանի Հանրապետությունում 1920 թ. աշնանը ստեղծված իրավիճակը՝ կապված Թուրքիայի սանձազերծած պատերազմական գործողությունների հետ, կառավարությանը պարտադրեց Վրաստանի հետ ռազմաքաղաքական դաշինք ձևավորելու հապճեպ քայլեր ձեռնարկել: Դա այն պարագայում, երբ, ինչպես նշել է Ալ. Խատիսյանը, դաշնակիցները մեկը մյուսի ետևից լքեցին Հայաստանը[1]: Գործնականում անհաջող ընթացք ստացան ՀՀ հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ, և մասնավորապես ձախողվեցին հայկական կողմի բանակցությունները ՌԽՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ: Դա այն պարագայում, երբ դաշնակիցներից ակնկալվող օգնության բոլոր հույսերն ի դերև եղան, և Հայաստանը հայտնվեց աշխարհաքաղաքական փակուղում: Օգնության միակ հնարավոր սպասելիքները Վրաստանից էին, եթե իհարկե, ՀՀ կառավարությանը հաջողվեր վերջինիս հետ ձևավորել պաշտպանական-քաղաքական դաշինք: 1918 թ. պատերազմից հետո որոշակի ջանքեր գործադրվեցին հայ-վրացական հարաբերություններում առկա լարվածությունը վերացնելու ուղղությամբ: Պայմանավորվածություն ձեռք բերվեց բոլոր վիճելի հարցերը լուծել բանակցությունների միջոցով, հաջողվեց տրանզիտի վերաբերյալ կնքել պայմանագիր, ապահովել հաղորդակցության ուղիների գրեթե անխափան աշխատանքը, և, անշուշտ, փորձեր արվեցին միավորելու ջանքերն ընդհանուր թշնամու դեմ[2]:

Դեռ 1920 թ. փետրվարի 4-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական հավատարմատար Եվանգուլյանը Խատիսյանին ուղղված գրությամբ՝ հայտնելով Վրաստանի ԱԳ նախարար Գեգեչկորուն և Մախարաձեին կատարած իր այցի մասին, կարևորում էր Վրաստանի հետ դաշինքի անհրաժեշտությունը, ելնելով այն իրողությունից, որ բոլշևիկներն անուժ են և հեռու, ինչը հավատարմատարի թերագնահատման հետևանք էր, իսկ միակ ուժը, որի հետ պետք է կարևորվեր ընդհանուր դաշտը, Վրաստանն էր, որը անգլիացիների հեռանալուց հետո դարձել էր Բաթումիի և Փոթիի տերը և մեծ վստահություն էր ձեռք բերել[3]: 1920 թ. փետրվարի 8-ին ՀՀ ԱԳ նախարարության գլխավոր քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը Լ. Եվանգուլյանին ուղղված նամակով տեղեկացնում էր, որ իրենք ստացել են նրա՝ փետրվարի 5-ի զեկույցը, որով հայտնվում էր, որ ՀՀ կառավարությունը չի առարկում Վրաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքին: Միաժամանակ կասկած էր հայտնվում, թե դաշինքի գաղափարը արդյո՞ք վրացական կառավարության դիվանագիտական մանևրումը չէ այս ճանապարհով ՀՀ-ին հարկադրելու զիջել Ալավերդին: Այդ կասկածներից ելնելով, առաջարկվում էր պարզել Վրաստանի կառավարության իսկական և խորքային մտադրությունները[4]:

Արդեն 1920 թ. փետրվարի 12-ին ԱԳ նախարար Ալ. Խատիսյանին ուղղված Վրաստանում ՀՀ դեսպան Տիգրան Բեկզադյանի շտապ ճեպագրից տեղեկանում ենք Վրաստանի ԱԳ մինիստր Եվգ. Գեգեչկորու, Երևանում՝ Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Գ. Մախարաձեի, ռազմական մինիստր Լորդկիպանիձեի հետ ունեցած հանդիպման մասին: Հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել թուրքական վերահաս վտանգին և դրա հետ կապված Վրաստանի ու Հայաստանի միջև ռազմական դաշինքի անհրաժեշտությանը և, ըստ երևույթին, քննարկվել է նաև Ալավերդին իրենց զիջելու հարցը:

ՀՅԴ խմբակցության նախաձեռնությամբ այդ հարցը քննարկվեց կառավարության և պառլամենտի նիստերում, որոնց ժամանակ հիմնականում անհանգստություն հայտնվեց, թե արդյո՞ք Վրաստանի կողմից առաջարկված դաշինքի հիմքում ընկած չեն տարածքային զիջումները և Արդահան 300 հոգանոց զորք մտցնելու հարցը՝ որպես նախապայման, քանզի, ի հակառակ պայմանագրի, շարունակվել է վրաց զորագումարտակի ներկայությունը Արդահանի հայկական մասում[5]: ՀՅԴ խմբակցությունը՝ 26 ձայնով, ընդդեմ 3 ձեռնպահի, ՀՀ կառավարությանը պարտավորեցնում է հասնելու վրացական զորաջոկատի տեղափոխմանը դեպի Արդահանի հյուսիսային

Տիգրան Բեկզադյան

Ալեքսանդր Խատիսյան

մասը, ելնելով այն բանից, որ նահանգապետ Ստ. Ղորղանյանը և օկրուգի պետ Կադիմովն Արդահանի հարավային մասում վրացական զորամասերի գտնվելը համարել են ծայրահեղ վտանգալից հայկական շահերի համար: Ըստ այդմ անհրաժեշտ էր նկատվել, վրացիներին ներկայացնել մի շարք առաջարկներ, այն է՝ 1) Վրաստանի կողմից վագոններով մազութ, և այլ ձևերով ՀՀ անխափան մատակարարում: Դա կարող էր նպաստել ՀՀ ուժեղացմանը, ինչն ուղղակի բխում էր Վրաստանի շահերից, նկատի ունենալով ընդհանուր թշնամուն՝ Թուրքիային, որը ջարդելով հայերին, այնուհետև կջախջախեր և Վրաստանին, 2) ռազմատնտեսական փոխադարձ ծառայությունների մատուցում. 3) համատեղ ելույթներով հանդես գալ բոլոր ճակատներում: Ընդգծվում էր, որ հայկական կողմը հակված է առաջին և երկրորդ ձևերի իրականացման օգտին, ներկայացնելով ՀՀ Նախարարների խորհրդի և պառլամենտի ՀՅԴ խմբակցության համատեղ որոշումը Վրաստանի հետ ռազմական դաշինքի վերաբերյալ. 1) Վրաստանի և Հայաստանի միջև ռազմական դաշինքի կնքումն օգտակար համարել, իսկ սահմանները հաստատել Վրաստանի կառավարության հետ բանակցային ուղիով և վերջինիս տեսակետը պարզելուց հետո: Արդյունքների մասին հաղորդել՝ ՀՀ Նախարարների խորհրդում քննարկելու և պառլամենտի կողմից հաստատելու համար. 2) ոչ մի նոր տարածքային զիջում Վրաստանին չկատարել: Վրաստանի կառավարության համաձայնության դեպքում, ՀՀ հետ ռազմապաշտպանական դաշինք կնքելու համար տարվող բանակցությունների ժամանակ ընդունել ՀՀ կառավարության անփոփոխելի պայմանները տարածքային սահմանազատման մասին, 3) Արդահանում վրացական պահակազորի ուժեղացման հարցը դիտարկել բացառապես Վրաստանի հետ ռազմական դաշինքի կնքման տիրույթում, սեպարատ համաձայնություն չկնքել, ի հակառակ դրա՝ պնդել Արդահանի հարավային մասից վրացական զորքերի դուրսբերման հարցում:

Ալ. Խատիսյանը նաև առաջարկել էր դիվանագիտական հավատարմատարին հնարավոր ռազմական դաշինքի կնքման մասին որոշումը քննարկել Թիֆլիսի հայկական պատվիրակության հետ, բանակցելով Վրաստանի կառավարության հետ, և այն մասին, թե դրա համար պատրաստ հող կա կամ չկա՝ նախապես հայտնել ունեցած կարծիքը[6]:

ՀՀ ԱԳ նախարար Ալ. Խատիսյանին ուղարկված 1920 թ. փետրվարի 18-ի զեկուցագրից պարզ են դառնում սահմանավեճերի և հայ-վրացական ռազմաքաղաքական դաշինքի հնարավորության հարցում դիրքորոշումների որոշ նրբերանգներ: Լ. Եվանգուլյանը ԱԳ նախարարի 1920 թ. փետրվարի 8-ի գաղտնի նամակին ի պատասխան հայտնում է, որ իրենց վեճը ոչ մի վճռական վերաբերմունք չի կարող ունենալ Ալավերդու շրջանի հարցում և չի կարող դիտարկվել որպես նախապայման Վրաստանի հետ տարածքային հարցը վերջնականապես լուծելու համար: Լ. Եվանգուլյանը դրանից ենթադրել էր, որ չի կարող որևիցե կապ լինել Ալավերդու գործարանի և շատ ավելի հեռու գտնվող Զանգեզուրի ու Արդահանի միջև, դիտարկելով դա որպես վրացիների կողմից քողածածկված մոտե-

Համո Օհանջանյան

ցում և պլան՝ ողջ Արդահանը գրավելու համար: Լ. Եվանգուլյանը կարծում էր, որ դեռ բավականաչափ փաստեր չունի վրացական կողմի իրական մտադրությունների մասին, և իրենք Արդահանին տիրելու վրացիների ցանկության վերաբերյալ արդեն նախադեպ ունեն, ավելացնելով նաև, որ վրաց կառավարությունը շահարկում է ՀՀ-ի համար իրապես մեծ սպառնալիք ներկայացնող թուրքական վտանգի փաստը: Անդրադառնալով Վրաստանի հետ պաշտպանական դաշինքի հնարավորության խնդրին, ասվում էր, որ ի պատասխան արված առաջարկների, Վրաստանի կողմից դեռ պաշտոնական առաջարկ չունեն և խնդրվում էր հնարավոր նոր զարգացումների պայմաններում վերջնական դիրքորոշման համար լրացուցիչ հրահանգներ ուղարկել[7]:

Այդ նույն խնդիրներն են արծարծվում Եվանգուլյանի կողմից Ալ. Խատիսյանին ուղարկված 1920 թ. փետրվարի 24-ի գաղտնի գրությունում, որում Վրաստանի հետ ռազմապաշտպանական միության հարցերը ներկայացվում են Ալավերդու գործարանի շուրջ առաջացած վեճի տիրույթում, գտնելով, որ այն չի կարող դիտարկվել որպես տարածքային հարցի վերջնական հանգուցալուծման նախապայման: Անվստահություն էր հայտնվում, թե զիջելու պարագայում ինչքանո՞վ է իրական հայ-վրացական ռազմական միությունը, որ Ռամիշվիլին բազմիցս հայտարարել է իրենց պատրաստակամությունը աջակցություն ցուցաբերելու հայերի ռազմական դրությունն ուժեղացնելու համար, ի հակառակ Ադրբեջանի հետ իրենց ունեցած դաշինքի, խոստումներ տալով, որ կաջակցեն ռազմական բեռների փոխադրման խնդրում և, ըստ Եվանգուլյանի, միայն իր անփութության պատճառով հայկական կողմը չի կարողացել օգտվել այդ իրավունքից, ինչպես նաև Դենիկինից չստանալով փամփուշտների և ռազմամթերքի հասանելիք բաժինը: Եվանգուլյանը միաժամանակ խոստովանում էր, որ, անշուշտ, իրենց չի ուրախացնում վրացիների թուրքական կողմնորոշումը, և խոստովանում Վրաստանի հետ դաշինքի վերաբերյալ իր՝ դեռևս ոչ վերջնականապես ձևավորված տպավորության մասին, միաժամանակ այն խիստ ցանկալի համարելով[8]: Եվանգուլյանին ուղղված 1920 թ. փետրվարի 25-ի գրությամբ Խատիսյանը տեղեկացնում էր Կարսի նահանգապետ Ղորղանյանից ստացած գրության մասին, ըստ որի վրացիներն Արդահանի հյուսիսային և հարավային հատվածներն են ուղարկում մեծաքանակ զորամասեր: Խատիսյանը խնդրում էր ստուգել փաստերը և բողոք հայտնել հարավային մասի առնչությամբ, որը Հայաստանին էր պատկանում, հյուսիսայինի առումով, որտեղ վրացիք իրավունք ունեին պահելու ընդամենը 100 հոգանոց զորաջոկատ, միաժամանակ տեղեկացնել, թե ինչ է ասել Գեգեչկորին Օլթի զորքեր ուղարկելու հարցով՝ ավելացնելով, որ ընդհանրապես այդ շրջաններում նկատելի են հայկական շարժումներ՝ կապված Բաթումիի հարցի հետ[9]:

Այս ուղղությամբ քայլեր են արվել նաև 1920 թ. մայիսի սկզբին, երբ կառավարությունը զգալի ջանքեր գործադրեց ճնշելու բոլշևիկների հակապետական խռովությունները: 1920 թ. մայիսի 6-ին ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանը հեռագրում է Տ. Բեկզադյանին, առ այն, որ վճռականորեն է տրամադրված պաշտպանելու երկրի սահմանները բոլոր թշնամիներից, շարունակելով ռազմական գործողությունները Ադրբեջանի դեմ Ղարաբաղում և այլ վայրերում, վճռականորեն պայքարելով նաև ներքին հակապետական թշնամիների դեմ: Օհանջանյանը եզրահանգել էր, որ *պատրաստ է համագործակցել Վրաստանի հետ*[10]: Այդ հարցն է բարձրացվում Օհանջանյանի կողմից Բեկզադյանին ուղարկված 1920 թ. մայիսի 10-ի պաշտոնագրում, ցանկանալով տեղեկանալ վերջին նորություններին[11]:

1920 թ. մայիսի 13-ին Տ. Բեկզադյանը ԱԳ նախարարին հայտնում է հայ-վրացական ռազմական միության շուրջ տարվող բանակցությունների ընթացքի մասին, ինչպես նաև վրացիների պատրաստակամության մասին՝ «1) բաց թողնել Հայաստանին 1600 հատ «Լեբելի» հրացան, փոխարինաբար Վրաստանին տալով շրապնելների և պարկուճների մեծ մասը, 2) տրանզիտային բոլոր բեռներն անարգել բաց թողնել, 3) Վրաստանի համաձայնությամբ արգելք չի հարուցվի այն հայերի առաջ, ովքեր կցանկանան զենքով Փոթիով անցնել Հայաստան, սակայն զենքերը պետք է ուղարկվեն նրանցից առանձին՝ որպես ապրանք, 4) Վրաստանը պատրաստակամություն էր հայտնել համաձայնեցված զինվորական գործողություններ ձեռնարկել հարավային ճակատում, առաջարկելով դրա համար ունենալ հատուկ մարմին՝ զինվորական մասնագետների մասնակցությամբ»: Եվանգուլյանը

հայտնում էր, որ բանակցությունների արդյունքների մասին հաղորդվել է գեներալ Քիշմիշյանին և Եղիազարյանին[12]:

1920 թ. մայիսի 19-ին ՀՀ ԱԳ նախարար Հ. Օհանջանյանը Տ. Բեկզադյանին ուղղված դիմումագրում հայտնում էր, որ կառավարությանը խորապես հետաքրքրում է Վրաստանի հետ ռազմական-պաշտպանական միության հարցը, որը սակայն առ այսօր մնացել է անորոշ: Օհանջանյանը հայտնում էր, որ վրացիների բանավոր առաջարկի հիման վրա մշտապես բանակցություններ են տարվել Հայաստանի և Վրաստանի զորքերի Գլխավոր շտաբների միջև՝ երկու երկրների ռազմական գործողություններն ուղղորդելու համար: Օհանջանյանը դա անբավարար էր համարում, գտնելով, որ այդ առաջարկը պետք է լինի գրավոր ձևակերպված, որ կառավարությունը վստահություն չունի վրացիների կողմից արված առաջարկի նկատմամբ, խնդրելով պարզել վրացական կողմի առաջարկի կոնկրետ իմաստը, ի՞նչ են վրացիները մտածում[13]: 1920 թ. մայիսի 20-ին Վարչապետին և ԱԳ նախարարին ուղղված թիֆլիսյան հեռագրից տեղեկանում ենք, որ Խատիսյանը խորհրդակցություն է ունեցել Գեգեչկորու և Լորդկիպանիձեի հետ, ըստ որի, տպավորություն է ստեղծվել, որ վրացական կողմը խուսափում է պատասխան տալ ռազմական դաշինքին միանալու հարցին, որ հարցեր կան Վրաստանով զենքի ու զինամթերքի տեղափոխման խնդրում[14]:

1920 թ. օգոստոսի 3-ին ոչ պաշտոնական այցով Երևան է գալիս Լոնդոնում Վրաստանի ներկայացուցիչ Դ. Գամբաշիձեն, հանդիպում վարչապետ Հ. Օհանջանյանի հետ, և նշելով տաճկապավոնական (ռուսական – Ա. Ղ.) մերձեցման մասին, գտնում, որ «այդ վտանգի դեմն առնելու համար երկու երկրները պետք է զինվորական դաշինք կնքեն և դրանով հող նախապատրաստեն ֆեդերացիա կամ կոնֆեդերացիա ստեղծելու համար»[15], միաժամանակ կարծիք հայտնելով, թե Վրաստանի ներկայացուցիչները Սան-Ռեմոյում շատ մեծ սխալ են գործել՝ բռնելով Բաթումիի հարցում անզիջում դիրքորոշում, որ դա վատ տպավորություն է թողել վեհաժողովի վրա, Քերզոնի վրա, և ինքն այն կարծիքն է կազմել, որ վրացիք չեն կամենում հայերին ելք տալ դեպի ծով, գտնելով, որ Բաթումին, ըստ Գամբաշիձեի, պետք է լինի *portofranco, որ ինքն աշխատում է այդ ուղղությամբ համոզել ընկերներին,* իսկ Կարս-Բաթումիի երկաթուղագծի հարցում կարծիք հայտնել, թե Վրաստանը համաձայն է թույլ տալ անցկացնել այդ գիծը՝ մշտական կապալի իրավունքով[16], ինչը սակայն իրողություն չի դառնում:

Սակայն, ինչպես պարզվում է, դրան Օհանջանյանի պատասխանը կարելի է ասել՝ հիմնավորված չի եղել, քանզի վերջինս գտել է, որ դեռ վաղ է այդ հարցով բանակցելը[17], ինչը կարելի է ասել՝ վատ հաշվարկ էր, անկախ նրանից, թե ինչքանով էր լուրջ վրացական կողմի առաջարկը, որի ուղղությամբ այդ օրերին աշխատում էր նաև Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Ջախարիաձեն: Սակայն տեղեկություններ ստանալով Ղազախում բոլշևիկյան

Եվգենի Գեգեչկորի

զորքերի կուտակումների մասին, որը տագնապ է ներշնչում Վրաստանին և Հայաստանին սպառնացող վտանգի առումով, 1920 թ. օգոստոսի 18-ին վարչապետ Օհանջանյանը հեռագրում է Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչին, այն մասին որ կառավարությունը սկզբունքորեն համաձայն է համաձայնություն կնքելու վրացիների հետ, հայտնելով նաև, որ բանակցություններ սկսելու տեղի ու ժամանակի մասին Բեկզադյանի կողմից ձեռքբերվելիք պայմանավորվածության մասին որոշումը հավանության կարժանանա կառավարության կողմից[18]: Սակայն Բեկզադյանի առաջարկն այս անգամ անհրաժեշտ արձագանքը չի գտնում վրացական իշխանությունների մոտ, քանզի վերջիններս սկսում են ձգձգել պատասխանը կամ էլ առաջարկում հայ-վրացական դաշինք ընդդեմ Ադրբեջանի, կամ էլ դաշինք ձևավորել ընդդեմ բոլշևիկյան վտանգի, սակայն այս առաջարկներից ոչ մեկն էլ լուծում չի գտնում: Ի վերջո Տ. Բեկզադյանն օգոստոսի վերջերին պատասխան է պահանջում Վրաստանի ԱԳ նախարարից, և ստանում է պատասխան, թե իրենց համար պարզ չի հայկական կողմի առաջարկը, ո՞ւմ դեմ է դաշինք առաջարկվում՝ ռուսների, թե՞ տաճիկների[19], պահանջելով պաշտոնական դիմում: Հավանաբար, վրացական կողմի այս հապաղումները և, ի վերջո, դաշինքի ձևավորման հարցում ձգձգումները պայմանավորված էին նաև 1920 թ. մայիսի 7-ի ռուս-վրացական պայմանագրով, որով ճանաչվել էր Վրաստանի անկախությունը: Այդուհանդերձ, Բեկզադյանը շարունակում է այդ ուղղությամբ ջանքեր գործադրել՝ ակնկալելով, որ ի վերջո հնարավոր կլինի հասնել հայ-վրացական

Ռոբերտ Տեր-Մինասյան

ռազմական դաշինքի կնքմանը, սակայն չփայփայելով առանձնապես մեծ հույսեր: Բեկզադյանը, հաշվի էր առնում նաև այն հանգամանքը, որ այդ պահին աշխատանքից ազատվում էր դաշինքի կողմնակից զինվորական նախարար Գեորգաձեն, և այդպիսով պարզորոշ էր դառնում դաշինքի ձախողման ևս մեկ փաստարկ, չնայած ուզում էր հավատացած լինել, որ ի վերջո կհաջողվի ներդաշնակեցնել երկու ժողովուրդների շահերը. «Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա մենք ձգտում ենք ստեղծել մտերիմ փոխհարաբերություններ, մինչև նույնիսկ դաշնագրություն: Վրաց ղեկավար շրջաններն այժմ պարզ գիտակցում են, որ այն օրը, երբ Հայաստանում բոլշևիկյան իշխանություն եղավ, կորած է Հայաստանի անկախության հետ և իրենց անկախությունը, այդ պատճառով անկեղծորեն փարած են մեր անկախությանը: Պետք է, որ Սովետական իշխանությունը համոզվի, որ մենք երկուսս էլ այնքան ուժեղ ենք փարված մեր անկախությանը, որ պատրաստ ենք միասին դիմադրել այն դաշինքին, որը ձեռք կտա մեր անկախությանը»[20]:

1920 թ. կեսերին հայ և վրացական կյանքն ալեկոծված էր թուրք-բոլշևիկյան վտանգի մասին քաղաքական վեճերով, երբ տարբեր կուսակցական-քաղաքական ուժեր դրանց շուրջ թե՛ ճամարտակումներ էին անում, և թե՛ որոշ դեպքերում՝ ոչ արդյունավետ լուծումներ առաջարկում: Դա բոլորից լավ զգում էին Տ. Բեկզադյանը և նրա զինակիցները, որոնք գործելով Թիֆլիսում, տեսնում էին այն իրական վտանգները և քաղաքական-դիվանագիտական զարգացումների հասկանալի և անհասկանալի խորքերն ու ելևէջումները Հայաստանի շուրջ և այդ իրավիճակում հնչող հայ-վրացական դաշինքի ստեղծման կոչերը՝ ընդդեմ ընդհանուր վտանգի:

Խնդիրը սակայն այն էր, որ Վրաստանի մամուլը, քաղաքական գործիչներն աղմկարարությամբ զբաղվեցին մինչև այն պահը, երբ գործնականում համոզվեցին, որ վրաց պետությանը վտանգ չի սպառնում[21]: Առավել ևս, երբ Վրաստանը որոշակի երաշխիքներ ստացավ իր տարածքների անձեռնմխելիության մասին, որից հետո մերժեց քեմալական Թուրքիայի կամ բոլշևիկյան Ռուսաստանի դեմ ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու ՀՀ բոլոր առաջարկները:

1920 թ. ապրիլյան անդրկովկասյան վեհաժողովից հետո գործնականում հօդս ցնդեց Գեգեչկորու հռչակած ընդհանուր վտանգի դեմ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև համագործակցության կամ դաշինքի ձևավորման անհրաժեշտությունը, ինչը կանխվեց Ադրբեջանի խորհրդայնացմամբ: Այդ իրավիճակում խնդիրը տեղափոխվեց հայ-վրացական դաշինքի լինել-չլինելու դաշտ: 1920 թ. մայիսի 7-ին կնքված վրաց-ռուսական պայմանագիրը ևս մի գործոն ավելացրեց, և պատահական չէ, որ հունիսի 11-ին ՀՀ կառավարությունը բողոքեց այդ դաշնագրի դեմ, որով Ռուսաստանը պարտավորվում էր ճանաչել Վրաստանի իրավասությունը Թիֆլիսի նահանգի և ողջ Բաթումիի մարզի նկատմամբ, ինչով դժվարացնում էր հայ-վրացական դաշինքի հնարավորությունը:

Եվ դեռ ավելին, ելնելով 1920 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Արևելքի ժողովուրդների համագումարի կողմից ՀՀ-ի դեմ որդեգրվեց չափազանց ագրեսիվ կուրս վարելու դիրքորոշում, որի պայմաններում Թուրքիային անհրաժեշտ էր ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանի զորակցությունը, այլև մենշևիկյան Վրաստանի չեզոքությունը: Այդ մասին պարզ ասված էր նաև Արևելքի ժողովուրդների համագումարի կողմից սեպտեմբերի 17-ին ընդունված փաստաթղթում: Վրաստանը կատարեց իր ընտրությունը: Հայաստանը մեկուսացվեց, և կառավարության ջանքերն անարդյունավետ դուրս եկան, քանզի վրաց կառավարությունը, ելնելով իր շահերից և հավատալով Վրաստանի անկախությանը ձեռք չտալու Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հավաստիացումներին, համաձայնվեց չեզոք դիրք գրավել, և այդ իրողությունից ելնելով Թիֆլիսում գաղտնի պայմանագիր ստորագրեց քեմալականների հետ[22], հրաժարվելով Հայաստանի հետ զինակցելու և պաշտպանական-ռազմական դաշինքի մտադրությունից:

Այդ ամենին զուգահեռ, ինչպես պնդում են Կ. Սարդարյանը[23] և ուրիշներ, ՀՀ կառավարությունը տեղեկություններ չուներ քեմալական ռազմուժի մասին, ինչը նաև, օրինակ ամրապնդվեց Օրջոնիկիձեի կողմից 1920 թ. հունիսի 18-ին Բաքվում ՀՀ ներկայացուցիչ Մ. Հարությունյանին հրամցված թյուր կարծիքով, թե քեմալականներն անկարող են հարձակվել Հայաստանի վրա[24]: Այս տեսակետը հերքվում է հեղինակիս (Վա-

նիկ Վիրաբյան) ներկայացրած ՀՀ հետախուզական ծառայության հայթայթած բազմաթիվ և տարաբնույթ անառարկելի փաստերով[25], Թուրքիայի և հայկական սահմանի ողջ երկայնքով թուրքական զորքերի տեղաշարժերի և վերախմբավորումների մասին: Առավել ևս, որ ՀՀ դաշնակից Մեծ Բրիտանիան այդպես էլ չզինաթափեց Թուրքիային:

Այս պայմաններում Ռուբեն Տեր-Մինասյանի, Տիգրան Բեկզադյանի կողմից ամեն դեպքում որոշակի անկեղծ ջանքեր գործադրվեցին Վրաստանի հետ դաշինք ստեղծելու համար, որոնք ընթացան նոր իրողությունների պայմաններում: Որոշվում է Ռ. Տեր-Մինասյանի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Վրաստան, որը Թիֆլիս է մեկնում հոկտեմբերի 17-ին, իսկ ըստ Ալ. Խատիսյանի՝ հոկտեմբերի 18-ին՝ «համոզելու համար Վրաց կառավարութիւնը, որ համաձայնութեան գայ Հայաստանի կառավարութեան հետ միացած ուժերով կռուելու Հայաստանին եւ Վրաստանին սպառնացող կրկնակի վտանգներուն դէմ. Հայկական կառավարութիւնը յանձն կառնէր պահել թրքական ճակատը, իսկ վրացիք պէտք է ետ մղէին բոլշեւիկյան վտանգը… Հայերը իրենց առաջարկը կը հիմնաւորեէին այն ապագայ վտանգով, որ Վրաստանի համար հերթական պիտի դառնար Հայաստանի հնարաւոր անկումէն յետոյ: Վրացիք կը տատամսէին եւ չէին համարձակեր չէզոքութենէ դուրս գալ»[26]: Նա այնտեղ մնում է մինչև հոկտեմբերի 22-ը, իսկ բանակցությունները գործնականում ձախողվում են, ոչ մի արդյունք չի ստացվում և Ռ. Տեր-Մինասյանի պատվիրակությունը ձեռնունայն վերադառնում է Երևան:

Անօգուտ է լինում նաև բրիտանական կոմիսար Քլոդ Ստոքսի միջամտությունը, որին Վրաստանի կառավարությունը չի արձագանքում: Այն բանից հետո, երբ բրիտանական կոմիսար Ք. Ստոքսի խորհրդատվությամբ Լեգրանի գլխավորած պատվիակությանը անընդունելի պայմաններ են առաջադրվում, և խնդիրն առժամանակ փակուղի է մտնում, ՀՀ կառավարությանն ուղղորդում են սնամեջ բանակցություններ վարելու Վրաստանի հետ՝ հայ-վրացական ռազմական դաշինք ձևավորելու համար՝ ուղղված Խորհրդային Ռուսաստանի դեմ, խոստանալով աջակցել նավթի և ռազմամթերքի հարցում, ինչպես նաև Վրաստանին համոզել զինակցելու ՀՀ-ի հետ, որոնք սակայն արվել էին՝ առանց Վրաստանի իրական դիրքորոշումը պարզելու:

Դեռևս հոկտեմբերի 18-ին Ք. Ստոքսն իր զեկուցագրերից մեկում նշել էր, թե վրացական իշխանությունները ձեռնարկել են բոլշևիկների դեմ պաշտպանական գաղտնի պայմանագրի մասին ՀՀ կառավարության խնդրագրի քննարկումը, միաժամանակ նշելով, որ հապշտապ որոշում չի կայացվել՝ մինչև Եվրոպայից ԱԳ նախարար Եվգ. Գեգեչկորու վերադարձը: Այդուհանդերձ, ԱԳ նախարարի պաշտոնակատար Կ. Սաբախտարաշվիլին վստահեցրել էր Ռ. Տեր-Մինասյանին, որ կօգնեն Հայաստանին՝ թույլ տալով կամավորներ հավաքագրել Վրաստանում և

Նոյ Ռամիշվիլի

խոչընդոտներ չեն հարուցի ռազմական առաքումների դեպքում: Դրա հետ մեկտեղ Սաբախտարաշվիլին հայտարարել էր, որ պատրաստ են պաշտպանվելու բոլշևիկյան հարձակումից, սակայն չեն կարող պարզապես Հայաստանին օգնելու համար պատերազմի դուրս գալ Ռուսաստանի դեմ[27]: Բեկզադյանը այս կարևոր գրության մեջ հաղորդում է նաև հոկտեմբերի 22-ի տեսակցության մասին Ստոքսի հետ, հայտնելով իր տպավորությունները վրացիների հետ ընդհանուր գործակցության մասին, որ այդ ուղղությամբ առանձին հույսեր չի տածում, որ վրացիները հայերի հետ կգործակցեն միայն այն դեպքում, եթե իրերի դասավորությամբ ստիպված լինեն, իսկ Լեհաստանի և Ադրբեջանի կողմից մենք ոչ միայն ակնկալություններ չպիտի ունենանք, այլ նույնիսկ կարող ենք հանդիպել թշնամական վերաբերմունքի Ադրբեջանի կողմից[28]: Միաժամանակ ներկայացվում են նույն օրը Ռամիշվիլու հետ Մամիկոնյանի և Խաչատրյանի ունեցած հանդիպման որոշ կարևոր մանրամասներ. առաջարկ էր եղել արագացված տեմպով բանակցել հայկական պատվիրակության հետ, և փոխադարձ համաձայնությամբ որոշել էին առաջին նիստը նշանակել հոկտեմբերի 24-ին: Բեկզադյանը Ռամիշվիլուն հիշեցնում է, որ ՀՀ կառավարությունը հարցապնդումներ է արել վրացիների վերջնական դիրքորոշման վերաբերյալ ընդհանուր գործակցության առիթով՝ ակնկալելով շուտափույթ պատասխան: Սրա պատասխանն էլ եղել էր այն, թե հարցն արդեն որոշված է, և պատասխանը կստանան Ժորդանիայից, սակայն իբր թե վերջինիս հիվան-

Ախթալայի վանքը. Լոռի

դության պատճառով տեսակցությունը խանգարվել է[29]: Բեկզադյանը տեղեկացնում է նաև իրեն այցելած Կորբեյլի հետ ունեցած հանդիպման մասին, որին ևս «*հետաքրքրել է*», թե վրացիները ի՞նչ են պատասխանել հնարավոր հայ-վրացական զինակցության մասին: Բեկզադյանը, սակայն, Կորբեյլին տեղեկացնում է, որ իրենք մեծամասնականների և տաճիկների դեմ կռվում վրացիներից ավելին, քան բարյացակամ չեզոքությունը չեն կարող ակնկալել՝ չժխտելով այն հանգամանքը, որ վրացական կողմը, մասնավոր դեպքերում, իհարկե կարող է և աջակցել: Իրենք ունեն որոշ տեղեկություններ, որոնք թույլ են տալիս պնդելու, որ հնարավոր է վրացիները Բաթումիից բաց չթողնեն զինվորական կարիքների համար անհրաժեշտ ապրանքները[30]: Բեկզադյանը նշում է, որ իբր թե վշտացած է այդ տեղեկությունից, Կորբեյլը խոստացել է իսկույնևեթ տեսակցություն ունենալ վրաց ԱԳ նախարարի հետ և հայտնել, թե բռնած դիրքը վատ տպավորություն կթողնի Ֆրանսիայի և Անտանտի վրա: «Լրջորեն հավատալով» այդ խոստմանը, ինչպես ինքը՝ Բեկզադյանն է պնդում, կրկին խնդրում է Կորբեյլին կոլեկտիվ դիմումով ազդեցություն գործ դնել վրացիների վրա, միաժամանակ տեղեկացնելով, թե նույն օրը Կ. Սաբախտարիշվիլին հայտնել է իրեն, որ պետք է գրավոր ներկայացնել առաջարկը, որպեսզի նրանք էլ գրավոր պատասխանեն[31], ինչն արվում է հոկտեմբերի 25-26-ին:

1920 թ. սեպտեմբերի 13-ին ԱԳ նախարարի տեղակալ Տեր-Մինասյանը Բեկզադյանին տեղեկացնում է կառավարության որոշումը՝ Չեզոք գոտու մասին հարցը վճռել մյուս տարածքային հարցերի հետ միասին, որովհետև առանձին լուծումները կարող են խոչընդոտել այլ հարցերի բարենպաստ լուծմանը[32]:

Այդուհանդերձ ռազմաքաղաքական լուծումների որոնումները շարունակվում են, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը Տ. Բեկզադյանի գլխավորությամբ իր վրա է վերցնում Վրաստանի կառավարության հետ հետագա բանակցությունների պատասխանատվությունը՝ փորձելով կառավարության հետ համատեղ այդ դժվարին խնդիրը վճռել և վրաց-հայկական դաշինքի ձևավորումով դիմագրավել թշնամուն, ինչպես և Հայաստանին դարանակալած նոր փորձություններին[33]: Այդ մասին է փաստում Տ. Բեկզադյանի 1920 թ. հոկտեմբերի 26-ի զեկույցը ԱԳ նախարարությանը Վրաստանի պատվիրակության անդամներ Ն. Ռամիշվիլու, Կ. Սաբախտարաշվիլու և Ս. Գ. Մդիվանու հետ, ռազմաքաղաքական դաշինք ստեղծելու վերաբերյալ հոկտեմբերի 25-ին վարած բանակցությունների մասին, որին մասնակցել են նաև ՀՀ պատվիրակներ Ստ. Մամիկոնյանը, Ս. Խաչատրյանը: Ինչպես հայտնում է Տ. Բեկզադյանը, տեղի ունեցած երկու նիստերում էլ վրացական կողմը սկսում է սահմանավեճերից, պահանջներ ներկայացնելով Օլթիի և Արդահանի գավառների նկատմամբ՝ դրանով պայմանավորելով փոխադարձ պաշտպանության հնարավորության խնդիրը: Օգտվելով ՀՀ-ի համար ստեղծված ծանր իրավիճակից, վրաց պատվիրակներն առաջարկում են վերացնել Լոռու չեզոք գոտին, և առանց նախապայմանների Ախալքալաքն ու Ախալցխան ճանաչել Վրաստանի անբաժանելի մասեր: Հարցի

քննարկմանն այս անգամ ներգրավվում է նաև Վրաստանի զորքերի շտաբի պետ Ձախարիաձեն: Տ. Բեկզադյանի հաղորդման համաձայն, Ռամիշվիլին արտահայտվում է ավելի պարզ և հստակ, գտնելով որ վտանգն ընդհանուր է, որ իրենք պետք է աջակցեն Հայաստանին, որ նա կարողանա դիմադրել իր թշնամիներին: Իրենք ցույց կտան թե՛ բարոյական և թե՛ նյութական աջակցություն, գտնելով, որ բարոյապես դա կլինի իրենց պատասխանը Չիչերինին, որ Հայաստանին օգնելու օգտին համակրանքով են արտահայտվել Լոմտատիձեն և Ազգային գվարդիայի պետ Վ. Ջուղելին, որ իրենք հնարավորություն կտան զինակոչի ենթարկել վրաստանահպատակ հայերին, ինչպես նաև տալ նավթ, թույլ տալով արտահանել ռազմական պիտույքներ՝ նույնիսկ ի վնաս Վրաստանի շահերի՝ վտանգելով հարաբերությունները Խորհրդային Ռուսաստանի հետ: Ըստ Բեկզադյանի, Ռամիշվիլին խոստանում է «*բարյացակամ չեզոքություն*», գտնելով որ իրենք ավելին չեն կարող անել և պետք չէ իրենցից ավելին ակնկալել: Ռամիշվիլին հայտնել էր Բեկզադյանին, որ ստեղծված իրավիճակում Ռուսաստանի դեմ իրենք չեն կարող կռվել, որովհետև պայմանագիր ունեն, որը չեն ցանկանում խախտել, իսկ Մ. Քեմալի դեմ կռիվ չեն կարող սկսել, որովհետև Աջարիայում և Ախալցխայում թուրք հպատակներ ունեն, սակայն միաժամանակ վերապահում անելով, որ եթե թուրքերը պատերազմ սկսեն Վրաստանի դեմ, իրենք երեք օրում զորակոչ կսկսեն և կկռվեն[34]: Ըստ Բեկզադյանի, վրացական կողմի մոտեցման մեջ ակնհայտ հակասություններ կային, ինչը ցայտուն արտահայտվեց Մդիվանու ելույթում, որը Ռամիշվիլու խոսքից հետո կտրուկ ավելացրել է, որ ՀՀ հետ զինակցության մասին խոսք լինել չի կարող, մինչև որ սահմանավեճերը չլուծվեն[35], ինչն ընդամենը անցանկալի զինակցությունից խուսափելու դիվանագիտական մանևրում էր հիշեցնում: Ինչպես փաստում է Բեկզադյանը, Ռամիշվիլին միջամտում է և փորձում մեղմել լարվածությունը, սակայն զուր: Բեկզադյանը դա մեկնաբանում էր նրանով, որ վրացական կողմը Հայաստանի դեմ ռուսական վտանգը լուրջ չէր համարում և չէր տագնապում, որ Հայաստանը շուտով կընկնի նրանց ազդեցության տակ և կդառնա «խորհրդային», իսկ Թուրքիայի կողմից էլ իրենք իրենց վտանգված չէին համարում և չէին ցանկանում կռվել նրանց դեմ[36], ինչը վրացական շահերի մեկնակետից հասկանալի պետք է լիներ ՀՀ կառավարության համար: Բեկզադյանի վկայությամբ, Ռամիշվիլին, ելնելով իրենց այն պնդումից, որ արդեն ընդհանուր վտանգ չկա, նույնիսկ հայտարարել էր. «*Վտանգն ու թշնամիները միայն Հայաստանինն են և Վրաստանին այլևս վտանգ չի սպառնում*»: Իսկ դրանից ընդամենը երկու ամիս առաջ Վրաստանն ավելի վտանգի զգացողություն ուներ և օգոստոսին ինքն էր Հայաստանին առաջարկում «*ընդհանուր գործողությունների համաձայնագիր կնքել*»[37]:

Այս զրույցից Բեկզադյանը հանգել էր այն եզրահանգման, որ վրացիներն իրենց հետ չեն զինակցելու և այլևս պետք չէ նրանց վրա հույս դնել, այլ պետք է բավարարվել նրանով, որ վրացիները չխանգարեն իրենց զորակոչին և տրանզիտին՝ դյուրացնելով ապրանքների արտահանումը Վրաստանից և մասնավորապես Բաթումիից, գտնելով որ դա կլինի այն առավելագույնը, որ վերջիններս տրամադիր են անելու՝ դրանով իսկ խախտելով իրենց չեզոքությունը: Ձախարիաձեն, Բեկզադյանի վկայությամբ, տեղեկացրել էր, որ հայերի դեմ կռվում է 18.000-անոց զորք (երեք դիվիզիա), որից երեքական հազարը՝ Օլթիի (նոր 3-րդ դիվիզիան), Մերդենեկի և Իգդիրի շրջանում, մնացածը՝ Կարսի շրջանում, ավելացնելով, որ փաստը ճշտվել է բրիտանական գնդապետ Քլոդ Ստոքսի տվյալներով: Վերջինս նաև տեղեկացրել էր, որ վիճակը ծանր է, իր կառավարությանը հղած հեռագրերից ոչ մեկի պատասխանը դեռ չի ստացել[38], *ինչն աբսուրդի ղորդից էր, սովորական բրիտանական երկերեսանի բառախաղ և սուտ:* Երկար, սակայն ապարդյուն բանակցություններից հետո միայն Բեկզադյանը հարկադրված խոստովանում է, որ «***վրացիների դիրքը պարզ է և բնական իրենց շահերի տեսակետից***»: Չնայած վրացիները դրա հետ մեկտեղ փորձում էին կեղծավորաբար սիրաշահել, այդ նույն՝ 1920 թ. հոկտեմբերի 26-ին, Քիշմիշյանը Ձինվորական նախարարին ուղղված հեռագրում հայտնում էր, որ վրաց կառավարությունը համաձայնել է իրականացնելու հայերի հարկադիր զորակոչ, հաշվի չառնելով հպատակությունը: Քիշմիշյանը ենթադրում էր, որ կարելի է օգտագործել այդ թույլտվությունը առաջին հերթին սպաների նկատմամբ, որոնց եռօրյա ժամկետում Վրաստանի ՆԳ նախարարության հատուկ ջոկատի միջոցով պետք է պարտադրեին մեկնել Հայաստան, ինչն այնուհետև կարող էր վերաբերվել նաև նախկին զինվորներին, և վերջապես մնացած քաղաքացիական բնակչությանը աստիճանաբար, սկսելով ավելի վաղ տարիքից[39]:

Այդ ընթացքում վրացիներն ակտիվանում են Արդահանի շրջանում՝ Չլդըրում և Գյոլում, իրենց գավառապետերին նշանակելով: Այս հարցով Բեկզադյանը արձագանքում է՝ դեռևս 1920 թ. հոկտեմբերի 9-ին հղված հեռագրով գեներալ Քիշմիշյանին հստակ ակնարկելով, որ վրացիների բռնած դիրքը կարող է կապ ունենալ թուրքերի հետ, կամ էլ վերջիններս ձգտում են օգտվել Հայաստանի համար ստեղծված ծանր կացությունից[40]: Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչի կողմից 1920 թ. հոկտեմբերի 10-ին հայտնվում է Սաբախտարաշվիլու հետ ունեցած խոսակցության և Արդահանի գավառում՝ Չըլդրի և Գյոլի շրջաններում վրացական կողմի ակտիվության մասին, պնդելով, թե այդ ամենը «***կապ կարող են ունենալ Թուրքերի հետ և, կամ ուզում են պարզ կերպով օգտվել մեր ծանր դրությունից***»[41]:

Ելնելով պահի թելադրանքից, Բեկզադյանը փորձում է ինչ-որ հակամիջոցներ գտնել և դիմելով Ստոքսին, խնդրում է, որ նրա միջոցով Անտանտի ներկայացուցիչները ճնշում գործադրեն վրացիների վրա, որպեսզի նրանք գան օգնելու հայերին: Սա-

կայն Ստոքսը ասելով, թե Ալ. Խատիսյանը իրեն դիմել է այդ խնդրանքով, հայկական կողմից պահանջում է գրավոր դիմումնագիր: Ստոքսն աջակցելու անորոշ խոստումներ տալով[42], այնուամենայնիվ, Բեկզադյանին հայտնել էր իր համոզվածության մասին, որ վրացիներն իրենց հետ չեն կռվելու և չեն էլ օգնելու, պատճառաբանություն բերելով, թե վրացիք պիտի նավթ ստանան Ադրբեջանից, և իրենց եգիպտացորենի բերքը պետք է հավաքեն Արևմտյան Վրաստանում: Ելնելով Բեկզադյանի զեկույցի ենթատեքստի վերլուծությունից, կարևոր է նշել, որ Ստոքսը մտածված ձգտելով Բեկզադյանին մոլորության մեջ գցել, գաղափար է հրամցրել վերջինիս, թե քանի որ անգլիական կաբինետում երկու հոսանք կա, որոնցից մեկը կտրականապես դեմ է բոլշևիկների հետ համաձայնությանը, իսկ մյուս հոսանքը՝ կողմ, որ նրանք մրցում են միմյանց դեմ, և ոչ մի կողմը դեռ չի հաղթել, ուստի ինքը մնացել է առանց հրահանգների, և առանձնապես պետք չէ հույս դնել տրված խոստումների վրա[43]: Բեկզադյանը կառավարությանը ներկայացնում է վրացիների մտադրությունը՝ իրենց վեճերը հանձնելու արբիտրաժի, որից ելնելով առաջարկում էր արբիտրաժի ներկայացնել երկու կողմերի պահանջների *maximum*-ը և ոչ *minimum*-ը, ինչպես գտնում էին վրացիները[44]:

Ստեղծված ծանր ռազմաքաղաքական իրավիճակում ՀՀ կառավարությունը 1920 թ. հոկտեմբերի 29-ին կրկին փորձում է դիվանագիտական հավատարմատարի միջոցով փոխել դրությունը և հասնել վրացիների հետ զինակցության: Այսպես, դիվանագիտական հավատարմատարին ուղղված 1920 թ. հոկտեմբերի 29-ի հեռագրում ՀՀ ԱԳ նախարարը հայտնելով, որ տաճիկները գրավել են հայկական դիրքերը Սամսատում և Ուչլարում, միաժամանակ գրավելով Վեզինքոյը և Յագնադաղ լեռը, որ արյունահեղ կռիվները շարունակվում են, խնդրում էր դիմել դաշնակիցներին՝ շտապ և իրական օգնություն ցույց տալու, դեսանտ իջեցնելով Բաթումիի շրջանում և ռազմամթերք մատակարարել: ԱԳ նախարարը կարծիք էր հայտնում, որ վրացիք խուսափում են զինակցության հարցից և մտադրություն չունեն կռվելու տաճիկների դեմ: Այդուհանդերձ, նա Բեկզադյանին հանձնարարում է վրացիներին առաջարկել զինակցություն Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի դեմ: ԱԳ նախարարը տեղյակ էր պահում նաև Հայաստանում Վրաստանի լիազոր-ներկայացուցիչ Գեորգաձեի հետ տարված բանակցությունների մասին, որից ելնելով՝ վերջնականապես եզրահանգում, որ վրացիք լուրջ մտադրություն չունեն զինակցելու[45]:

Անհարկի ձգձգումներից հետ, Վրաստանի կառավարությունը 1920 թ. հոկտեմբերի 29-ին դիվանագիտական հավատարմատարին տեղեկացնում է, թե հարցը քննարկելու համար հարկավոր է Հայաստանի գրավոր դիմումագիրը[46]: Բեկզադյանն ի պատասխան հայտնում է, որ նախորդ օրը տեսակցել է Սաբախտարաշվիլուն՝ պաշտոնական պատասխանի համար, և վերջինս պատասխանել է, թե առանց գրավոր նոտայի ինքը դժվարանում է պատասխանել, քանզի չգիտեն՝ ում դեմ է առաջարկվում դաշինքը. թուրքերի՞, թե՞ ռուսների, կամ երկուսի հետ միասին: Բեկզադյանը դրան ի պատասխան հայտնել է, թե ռազմական նախարարը հարցը դրել է պարզ՝ դաշինք ընդդեմ բոլշևիկների՝ ասելով, որ սպասում են վրացիների պատասխանին, սակայն վերջինս վերջնականապես պնդում է գրավոր դիմումագրի պարագան: Բեկզադյանը ԱԳ նախարարին տեղեկացնում էր, որ եթե համաձայն են դրան, թող իմաց տան, չնայած ինքը դա զուր էր համարում[47]:

Այդ օրերին վրացական մամուլը խստորեն դատապարտել էր թուրքական ագրեսիան ՀՀ նկատմամբ, արտաքուստ տպավորություն թողնելով, թե այդ կողմից սպառնացող վտանգը հավասարապես վերաբերում է նաև Վրաստանին, սակայն վրացական իշխանությունների վարքագիծը դրա հակառակն էր վկայում: Ժորդանիան բազմիցս հայտարարել էր, թե չեն կարող իրենց ճակատագիրը շաղկապել Հայաստանի հետ, Թիֆլիսում գաղտնի բանակցություններ վարելով Թուրքիայի ներկայացուցիչների հետ և փոխադարձ հավաստիացումներ տալով միմյանց, և ավելին՝ ստանալով Թուրքիայի քողածածկված թույլտվությունը՝ Վրաստանի կողմից մի շարք վիճարկվող տարածքներ Հայաստանից անդամահատելու վերաբերյալ: Այդ մասին բազմանշանակ պնդում կա Ալ. Խատիսյանի մոտ, որը Կարաբեքիրի հետ ունեցած զրույցից մի դիտարժան մեջբերում է անում. «Դեռ Հայերու դէմ պատերազմական գործողութիւններ սկսելէ առաջ, ըսաւ ան, Անգորայի ներկայացուցիչները, ի դէմս Եուսուֆ Քեմալ բէյի եւ Ալի Ֆուատ փաշայի՝ 1920 թ. ամառը եղան Թիֆլիս և Վրաց կառավարութեան հետ դաշն կապեցին, որու զօրութեամբ Վրաստանը, հայ-թրքական պատերազմ ծագելու պարագային, պէտք է չէզոքութիւն պահէր եւ ատոր փոխարէն պէտք է ստանար Բորչալուի եւ Ախալքալաքի գաւառները եւ Արդահանի շրջանը: Կարաբեքիր նոյնիսկ ցոյց տուաւ ինձ այն քարտէսը, որուն վրայ գծուած էին Վրաստանի սահմանները, համաձայն չէզոքութեան մասին կնքուած դաշնագրի:

Հետագային ես այդ խօսակցութեան մասին պատմեցի Վրաստանի ներքին գործերու նախարար Նոյ Ռամիշվիլիին, որ այդ բոլորը հերքեց»[48]:

Վրաց-հայկական պաշտպանական միության գաղափարը դեռ չծնված, անկենսունակ եղավ, քանզի շահերն էին տարբեր, ինչի մասին իր հայեցակետն ունի Արտ. Բաբալյանը. «մեր կրկնակի դիմումները Վրաստանին մնացին սակայն ապարդիւն:

...մենք՝ վրացիների հետ համաձայնուելով, կարող կը լինէինք Անգորայի կառավարութիւնը մեկուսացած պահել և գիտէինք, որ Սուազի ազգայնական համագումարին վրացի պատուիրակ էլ է եղել:

....վրաց կառավարութիւնը ընդառաջ չգնաց մեր առաջարկներին:

Հայ-տաճկական պատերազմի ընթացքին մեզ համար պարզուեց, որ վրացիները, իրենց հինաւուրց սովորութեան համաձայն, քեմալականների հետ գաղտնի պայման էին կնքած և մեր զինուորական նա-

խարարը, Թիֆլիս մեկնելով, ստիպուած էր սպառնալ վրացիներին, որ հանգիստ մնան և ոչ մի աջակցութիւն ցոյց չտան Տաճկաստանին: Կրկին առաջարկ եղաւ հայ-վրացական դաշինքի մասին, բայց նորէն առանց հետեւանքի»[49]:

Հենց այս հանգամանքները դեռևս 1920 թ. սեպտեմբերին խթանեցին վրացական իշխանությունների ակտիվությունը Զլդբրի և Գյոլի շրջաններում, ուր վրացական զորամասեր մտան, որի հեռահար նպատակներից էր իրենց գերիշխանությունը հաստատել Հարավային Արդահանում: Այս կապակցությամբ Տ. Բեկզադյանը հոկտեմբերի 9-ին վճռական բողոք է ներկայացնում Վրաստանի ԱԳ նախարար Կ. Սաբախտարաշվիլուն, ակնարկելով հնարավոր կապի մասին Թուրքիայի հետ, գտնելով, որ օգտվում են ՀՀ համար ստեղծված ծանր վիճակից, ինչը սակայն վրացական կողմը ժխտում է: Վարչապետ Օհանջանյանը Բեկզադյանից պահանջում է վճռապես բողոքել Վրաստանի իշխանությունների դեմ, հայտնելով, որ այդպիսի քայլերն անթույլատրելի են, և վրացիները պետք է այդ շրջաններից հեռացնեն իրենց վարչակազմի ներկայացուցիչներին[50], հրաժարվեն Զլդբրի բնակիչներին պարտադրել ընդունելու Վրաստանի հպատակություն, ինչը սակայն կտրուկ մերժվում է[51]: Այդ նույն պահանջներն են բարձրացվում ՀՀ Ջինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի և Բեկզադյանի երկուստեք միմյանց ուղարկված հեռագրերում, որոնցում դատապարտվում են Վրաստանի կողմից ձեռնարկվող քայլերը և եզրահանգվում, որ եթե վրացիները ռազմական միջամտություն կատարեն Արդահանի նկատմամբ, ապա իրենք ոչ մի բանի առաջ կանգ չեն առնի, առաջարկելով կատեգորիկ հարցապնդումով դիմել վրացական իշխանություններին[52]: Հոկտեմբերի 13-ին Բեկզադյանը տեսակցում է Սաբախտարաշվիլու հետ, ներկայացնում վրացական զորքերի կողմից Արդահանի շրջանի Զլդբրի և Գյոլի տեղամասերի ապօրինաբար գրավման փաստը, և առաջարկում առանց զենքի դիմելու հարթել վեճը՝ դատարկել գրավյալ տարածքները: Կարճ ժամանակ անց վրաց զորաջոկատը զինաթափվում է, և Ջուրզունայում բարձրացված վրացական պետական դրոշը վայր է իջեցվում[53], Վրաստանն իր զորքերը դուրս է բերում Արդահանից և քայլեր ձեռնարկում միջադեպը հարթելու, որի մասին Տ. Բեկզադյանը հոկտեմբերի 14-ին տեղեկացնում է կառավարչապետ Օհանջանյանին[54]:

Վրացիները, սակայն, այդքան հեշտությամբ չեն հրաժարվում իրենց մտադրությունների իրագործումից, և այս անգամ դա պատճառաբանում են Արդահանի գավառին սպառնացող թուրքական վտանգով, ինչի պատճառով հոկտեմբերի 14-ին կրկին բախվում են Բեկզադյանը և Սաբախտարաշվիլին, սակայն փորձում են գալ համաձայնության, որի առթիվ Բեկզադյանը ներկայացնում է երկու հակադիր առաջարկներ. 1) վրացիները պահում են իրենց զորքերը Հարավային Արդահանում, սակայն երաշխավորում են, որ հետագայում այդ խնդիրը լուծելիս ոչ մի առավելություն չեն ունենալու, 2) նրանք ետ են քաշում իրենց զորքերը, իսկ հայկական կողմն էլ երաշխավորում է, որ հաստատապես բոլոր ջանքերը կգործադրվեն՝ արգելելու թուրքական զորամասերի մուտքը, դրա հետ մեկտեղ վրացիներին հանձնելով Ախալքալաք-Արդահան խճուղին: Վրաց ԱԳ նախարարը կրկին խուսափում է հարցի անմիջական լուծումից, և վրաց զորքերի ներկայությունը Արդահանի այդ շրջաններում համարում նույնքան օրինական, որքան և հայերինը: Խնդիրը լուծելու կողմերի ձեռնարկած քայլերն արդյունավետ չեն լինում, և Բեկզադյանի առաջարկի պաշտոնական արձագանքը լինում է Վրաստանի ԱԳ նախարարի հոկտեմբերի 18-ի նոտան, որում ակնհայտ երևում էր Վրաստանի կառավարության մտադրությունը Արդահանը գրավելու և այնտեղ մնալու ցանկությունը՝ այն համարելով Վրաստանի տարածքի մաս: Նկատի ունենալով այդ շրջաններում կազմավորված ավազակախմբերի գործունեությունը, վրացական կողմը պատճառաբանում էր, որ Զլդբրի ու Գյոլի շրջանների գրավումը վրացական զորքերով և վրացական վարչակազմի հաստատումը բխում է բնակչության շահերից, և այդ առումով կենսական նշանակություն ունի թե՛ Հայաստանի, և թե՛ Վրաստանի համար: Վրացիների պնդմամբ, իբր հենց դա էլ կանխեց Արդահանի գրավումը թուրքական զորքերի կողմից: ԱԳ նախարարին ուղղված 1920 թ. հոկտեմբերի 23-ի գրությամբ Բեկզադյանը փաստելով Սաբախտարաշվիլու հետ ունեցած տեսակցության մասին, հայտնում էր, որ իր կարծիքով, վրաց իշխանությունների նպատակն է ամրապնդվել Արդահանում՝ իբր թե թուրքերի առաջխաղացման դեմն առնելու համար, որ իբր Սաբախտարաշվիլին իրեն հավաստիացրել է, որ ոչ մի ուրիշ նպատակ իրենք չունեն, որ ոչ մի վեճ հայերի հետ զենքով վճռելու դիտավորություն չունեն[55]: Մյուս կողմից Բեկզադյանը, ելնելով մասնավորապես հոկտեմբերի կեսերին ՀՀ համար ստեղծված վիճակից, որոշակի առումով զիջողամիտ էր դարձել՝ աշխատելով Վրաստանի հետ առևտրա-տնտեսական հարաբերություններում ապահովել տրանզիտը, սակայն նաև չարդարացված հույսեր ունենալով՝ *ձևավորելու հայ-վրացական դաշինք ընդդեմ բոլշևիկյան Ռուսաստանի*, միաժամանակ ակնկալելով դաշնակից երկրների աջակցությունը, որոնք սակայն սին են դուրս գալիս: Վրացական իշխանությունները պարզ հասկացնում են, որ հայերի հետ միասին չեն կռվելու, սակայն չեն էլ խանգարի Վրաստանում իրենց զորակոչին և տրանզիտին:

Շուտով հերթը հասնում է Լոռու նկատմամբ ոտնձգությանը, որն հասունանում և իրողության է վերածվում հոկտեմբերի 31-ին: Այդ մասին Սաբախտարաշվիլին չի հապաղում հայտնել Թիֆլիսում ՀՀ հանձնակատարին, փաստելով Կարսի անկման մասին, կարծիք հայտնելով, թե քանի որ ստեղծված իրավիճակում թուրքերը իբր թե կարող են տեղաշարժվել դեպի Ալեքսանդրապոլ՝ վտանգելով Զեզոք գոտին, որտեղից էլ իբր Վորոնցովկայի վրայով շարժվել

դեպի Վրաստան[56], ապա իրենք պարտավորված են գնալ այդ քայլին: Բեկզադյանի բողոքագրերը Վրաստանի կառավարությանը՝ ետ կանգնել Զեզոք գոտի մտնելու մտադրությունից՝ արդյունք չունեցան, *առավել ևս վրացիների համար անդունելի եղավ հայերի հետ զինակցման առաջարկը*[57]: Գործն առաջ չգնաց, և վրացիները տարաբնույթ պատճառաբանություններ ներկայացրին, որ իբր թե նոր իրավիճակում անհրաժեշտություն է առաջացել պաշտպանվելու, և, օգտվելով Հայաստանի ծայրահեղ վիճակից, Թիֆլիսը պաշտպանելու նպատակով սկսեցին զինված ուժեր տեղադրել Լոռու Զեզոք գոտում, որը խթանվեց Զեզոք գոտուց անգլիացիների հեռացմամբ: ՀՀ կառավարությունը փորձեց խնդիրը վրացիների հետ կարգավորել՝ այդ դեպքերից առաջ դիմելով Վ. Բիչի միջնորդությանը՝ Լոռում պահպանելու անգլիական գեներալ-նահանգապետությունը, և մինչև անգլիացիների վերջնական հեռացումը Անդրկովկասից՝ միջոցներ ձեռնարկել խաղաղեցնելու Բորչալուն և Զեզոք գոտին, իսկ վիճելի հարցերը վճռել փոխադարձ համաձայնությամբ, ինչի մասին տեղեկանում ենք դեռ Լ. Եվանգուլյանի կողմից ԱԳ նախարար Ալ. Խատիսյանին ուղարկված գրությունից[58]:

Վրաստանի ԱԳ նախարար Սաբախտարաշվիլին նույնիսկ այդ մասին հոկտեմբերի վերջին հայտնում է Տ. Բեկզադյանին և բրիտանական գնդապետ Ստոքսին, պնդելով, որ երկաթուղու Սանահին-Սադախլո հատվածն անհրաժեշտ է պաշտպանել թուրքերից: Դրա դեմ Բեկզադյանը բողոքում է, հրահանգելով Զեզոք գոտու հանձնակատար Վ. Վալադյանին բողոքել այդ ոտնձգության դեմ: Նույն ոգով արտահայտվել էր նաև գեներալ Մ. Արեշյանը, որը դեռ նոյեմբերի 5-ին Ղարաքիլիսայից հեռագրել էր, որ վրացիները հեծելազոր են ուղարկել Սանահին, իսկ Հայաստանում Վրաստանի ռազմական կցորդ գեներալ Կարալովն անգամ հրահագել էր թույլ չտալ, որ հայերն առանց անցագրի անցնեն, որի հետևանքով Կարալովի և ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանի միջև դիվանագիտական փոխհրաձգություն է սկսվում[59]: Ի վերջո, այս ամենը ավարտվում է նրանով, որ ՀՀ կառավարությունը համաձայնվում է *1920 թ. նոյեմբերի 13-ի համաձայնագրով, ժամանակավորապես՝ երեք ամսով Զեզոք գոտին հանձնել Վրաստանի տնօրինությանը*, և լիազորում Տ. Բեկզադյանին այն ստորագրել, որից օգտվելով, Վրաստանը նորանոր ոտնձգություններ է կատարում Հայաստանի դեմ, չնայած խոստացել էր տվել չոտնահարել տեղացի հայ բնակչության շահերը: Վրաստանը, ոտնահարելով տրված խոստումները, արդեն նոյեմբերի 15-16-ին զորքեր է մտցնում Ձալալօղլի, Բզովդալ, Շահալի, որի դեմ Բեկզադյանը կտրուկ բողոքում է, սակայն հակամարտությունը դեռևս երկար ժամանակ շարունակվում է՝ է՛լ ավելի շիկացնելով վիճակը[60]: Տիգրան Բեկզադյանը 1920 թ. նոյեմբերի 26-ին ևս մեկ բողոքի նոտա է ուղարկում Վրաստանի Հանրապետության ԱԳ նախարարին, նշելով, որ ի պատասխան Զեզոք գոտու հարավային սահմանը վրացական զորքերի անցնելու վերաբերյալ իր նախորդ նոտայի, դեռ նոյեմբերի 22-ին հայտնել էր, թե վրացական կողմը համաձայնվել է ետ կանչել այնտեղ ուղարկված իր հետախույզներին: Այդուհանդերձ, Բեկզադյանը հայտնում էր, որ չնայած ձեռք բերված համաձայնությանը, վրացական զորքերն իրենց կառավարության հրահանգով նոյեմբերի 23-ին անցել են ՀՀ անվիճելի տարածքում գտնվող Շահալի և Փամբակ, գրավելով նաև այլ կետեր: Բեկզադյանը միանգամայն անբացատրելի համարելով Վրաստանի պաշտոնական հավաստիացումները, իր վճռական բողոքն է հայտնում նոյեմբերի 13-ի համաձայնագրի այդպիսի կոպիտ խախտման, ինչպես նաև ՀՀ սուվերեն իրավունքների ոտնահարման դեմ, և պնդում վրացական զորքերն անհապաղ ետ կանչել գրաված կետերից, որպեսզի այն ՀՀ կողմից չդիտվի որպես բացահայտորեն անբարյացակամ մի ակտ, որը նպատակ ունի օգտագործել հարևան հանրապետության ժամանակավոր ծանր դրությունը[61]:

1920 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը ԱԳ նախարարին ուղարկված գաղտնի գրությամբ հայտնում է իր տեսակցության մասին Ն. Ռամիշվիլու հետ, որի ժամանակ խոսվել է, թե արդյոք նա հնարավո՞ր է գտնում Վրաստանի և Հայաստանի ընդհանուր գործակցությունը բոլշևիկների դեմ, որը դրական պատասխան է տվել և ավելացրել, որ բոլշևիկները կենտրոնացրած մեծ ուժեր չունեն, ուստի Հայաստանին ամենից առաջ անհրաժեշտ է լիկվիդացիայի ենթարկել տաճիկների առաջխաղացումը: Բեկզադյանը կրկին անդրադարձել է Վրաստանի կողմից սպասվող օգնության հարցին, սակայն Ռամիշվիլին մի անգամ էլ անորոշ ակնարկներ է արել, սակայն խոստացել ամենայն աջակցություն ցույց տալ զինակոչի և ապրանքների փոխադրության հարցում, իսկ ավելի սերտ գործակցության մասին խոստացել վերջնական պատասխան տալ[62]: Իսկ Սաբախտարիշվիլին Բեկզադյանին հայտնել էր, որ իրենք պատրաստ են աջակցելու ոչ միայն Հայաստանի հպատակներին, այլև վրացահպատակ հայերին զինակոչի ենթարկելու խնդրում: Բեկզադյանը, սակայն, դրանից ենթադրել է, որ վրացիների այս պատրաստակամության մեջ թաղված է մի հետին միտք և, համենայն դեպս, նույնիսկ այդպիսի անհուսալի իրավիճակում առաջարկել է խնդրին մոտենալ զգուշությամբ[63]:

Հոկտեմբերի 21-ին Տ. Բեկզադյանը տեղեկացնում է նաև, որ հանդիպել է Սաբախտարաշվիլու հետ, որի ժամանակ նորից հարց է բարձրացվել զինակոչի մասին, և վերջինս հայտնել է, թե իրենք պատրաստ են աջակցելու ոչ միայն Արդահանի մասով, ՀՀ հպատակներին, ինչպես և վրացահպատակ հայերին զինակոչի ենթարկելու հարցով, խնդրելով ներկայացնել մի հրահանգավորում, որը հանձնարարվում է կազմել Թիֆլիսի միսիայի զինվորական վարչությանը: Բեկզադյանը, սակայն, ենթադրել էր, թե վրացիների այս պատրաստակամության մեջ խարդավալից երկվություն կար՝ առաջարկելով զգուշությամբ մոտենալ խնդրին: Հանդիպման ժամանակ Սաբախտարաշվիլու կողմից կրկին արծարծվում է Արդահանի հարցը, և վերջինս խնդրում է հայկական կողմին տնօրինելու

Արդահան-Ախալքալաքի խճուղին, միաժամանակ պահանջելով երաշխավորություն, թե Արդահանն այնքան ամուր պիտի գրավվի հայկական զորքերով, որպեսզի տաճիկները հնարավորություն չունենան սահմանն անցնելու: Բեկզադյանը հակադարձում է վրացական կողմի այդ պահանջին, ասելով, թե ոչ մի երաշխավորություն չեն կարող տալ, իսկ խճուղուց օգտվելու մասին խոստանում է ուղիղ գծով հայտնել[64]:

Այս առումով այդ իրողություններն ինքնատիպ ձևով է ներկայացրել Լեոն. «Մի շատ խոշոր ցույց էլ հոկտեմբերի սկզբին տեղի ունեցավ Թիֆլիսում: Ահագին բազմություն հավաքվեց Վանքի բակում. Ճոճոան հայրենասիրական ճառերը հաջորդեցին իրար: Ապա բազմությունը սկսեց իր երթը, նախ գնաց եւ կանգնեց Հայաստանի դիվանագիտական միսիայի առաջ, ճառեր ասաց, լսեց Տիգրան Բեկզադյանի խրախուսական եւ հուսադրական խոսքերը: Ապա բազմությունը… համակրական ցույց արեց ի պատիվ վրաց Հիմնադիր ժողովի եւ մի շատ տաք ու համակրական ճառով ողջունվեց նույն ժողովի նախագահի կողմից, որը հայտնեց, թե վրացիները հայերի կողմն են եւ նրանց եղբայրական օգնություն ցույց կտան:

…Այն պատճառաբանվում էր այն մտքով, թե կռվել քեմալականների դեմ՝ նշանակում է կռվել բոլշեւիզմի դեմ, որովհետեւ պարզ է որ այդ երկուսը միացած են: Եվ ահա Հայաստանից եկավ Ռուբեն-փաշան առաջարկելու, որ Հայաստանն ու Վրաստանը միացնեն իրենց ուժերը թուրքերի դեմ: «Եթե մեզ չօգնենք, - ասել էր նա,- մենք, մենակ մնալով, ստիպված կլինենք դիմել բոլշեւիկներին, նրանց բերել մեզ մոտ, եւ այդ ժամանակ դուք կմնաք մենակ»: Համաձայնվել էին բանակցություններ սկսելու: Վրաստանի պատերազմական մինիստրը գնաց Երեւան, բայց այդ ժամանակ, եթե չեմ սխալվում, Տրապիզոն մեկնեց մի այլ ջոջ մենշեւիկ, որ ավելի ձեռնտու պայմաններ ընդունելով Մուստաֆա Քեմալից՝ նրա հետ դաշնագիր կապեց ընդդեմ հայերի: Դաշնակ-մենշեւիկյան դրացիության մի հուզիչ փաստ չէ՞»[65]: Այնուհետեւ Լեոն որպես նմանատիպ անհավատարմության օրինակ բերում է Լոռվա Չեզոք գոտու հետ կապված վրացական դիրքորոշումը, որը վրացական զորքերն իբր թե պետք է ժամանակավորապես գրավեին, սակայն նրանք զբաղեցնելուն պես անհապաղ այն կցում են Վրաստանի տարածքին:

Իհարկե, հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ հաշվարկների արդարացման հիմքերը շատ թույլ էին, քանզի շահերն էին տարբեր, իսկ հայկական պետության շահերը չէին ներդաշնակվում անդրկովկասյան և ոչ մի պետության արտաքին քաղաքական ու աշխարհաքաղաքական շահերի հետ: Բնականաբար հայ-վրացական պաշտպանական դաշինքը մեռելածին դուրս եկավ, և կողմերը հարկադրված էին ամեն մեկը յուրովի վճռել իրենց անկախության և գոյության ապահովման խնդիրները:

Ինչպես վերը նշեցինք, Բ. Լեգրանի հետ ձախողված բանակցություններից հետո Հայաստանը հարկադրված էր որոնել Վրաստանի զինակցությունը, ինչը սակայն լիովին ձախողվեց: Վրաց ազգայնականների

Բորիս Լեգրան

համար Հայաստանի հետ դաշինքը գործնականում անընդունելի եղավ, ինչն ապացուցվեց Արդահանում և Լոռիում տեղ գտած վրացական միջամտությամբ, և դեռ թուրք-հայկական պատերազմի նախօրեին Յուսուֆ Քեմալի և Ալի Դուադի հետ կնքած գաղտնի դաշնագրով[66], ըստ որի վրացիներն առաջնայնություն էին ձեռք բերում Բորչալու-Ախալքալաքի և Արդահանի խնդրում և, հետևաբար, վրացական չեզոքությունը իր մեջ պարտավորվածություն էր պարունակում Թուրքիայի հանդեպ, կամ առավելագույնը, ինչպես նշել է Բեկզադյանը Ռ. Տեր-Մինասյանին հղած 1920 թ. հեռագրերից մեկում. «Վրացիները մեր դեմ չեն կռվի: Համաձայն են մեզ օգնել նյութապես միայն ծածուկ, որպեսզի թուրքերը չիմանան: Բոլշևիկները վստահեցրել են վրացիներին, որ տաճիկները Բաթումը չեն գրավի»[67]:

Այդուհանդերձ, մինչև թուրք-հայկական պատերազմի ավարտը հայկական կողմը փորձել է Վրաստանի հետ դաշինք ձևավորել, նոյեմբերի սկզբներին հարաբերվելով Հայաստանում Վրաստանի ներկայացուցիչ գեներալ Կարալովի հետ, որին բողոք է ներկայացվում Լոռու Չեզոք գոտի մտնելու կապակցությամբ և դժգոհություն հայտնվում վրաց-հայկական դաշինքի ձախողման հարցով[68], որին խուսափողական պատասխան է տրվում: Հարցը փակուղի է մտնում: Դատելով իրադարձությունների զարգացման խորքային գործընթացներից, Խորհրդային Ռուսաստանը, անկախ իր վիճակից, ամենևին էլ չէր պատրաստվում մեկընդմիշտ Անդրկովկասը թողնել թե՛ թուրք-գերմանական, և թե՛ բրիտանա-ֆրանսիական տիրապետության ներքո: Իսկ դա ակնհայտորեն պարզորոշվեց

1920 թ. կեսից հետո, երբ բոլշևիկյան Ռուսաստանը գահավիժելով Կովկասյան լեռներից, իջավ Անդրկովկաս և ուղղակի սպասեց հարմար առիթի՝ այն կրկին վերանվաճելու, այդ թվում և վճռելու Հայաստանի նոր հեռանկարի հարցը՝ թեկուզև խորհրդային կարգերի հաստատման այդ ժամանակվա արդեն աստիճանաբար իրողություն դարձող տարբերակով:

1920 թ. հուլիսի 31-ին Օհանջանյանը տեղեկացնում է Բեկզադյանին, որ ստացել է իրեն ուղարկված հուլիսի 29-ին գրված մասնավոր գաղտնի նամակը, որում խոսվում էր բազմաթիվ հարցերի, այդ թվում նաև՝ Փարիզի հայկական և վրացական պատվիրակությունների գործունեության մասին, որոնց միջև կնքված պայմանագրից ակնհայտ է, որ վրացիք իրենց ստացած ռազմամթերքի փոխարժեքը պարտավորվում էին վճարել հայերին նույն պայմաններով, որոնցով մեզ վճարում էին անգլիացիները: Խնդիր էր դրվում այդ հանգամանքը աչքի առաջ ունենալ և ստանալ վրաց կառավարությունից համապատասխան ստացական[69]:

Դաշինքի ձախողումն օրինաչափ էր, քանզի շահերն էին տարբեր: Վրաստանը պետք է առաջնային համարեր իր շահը, որի պայմաններում հայ-վրացական պաշտպանական դաշինքը մեռելածին դուրս եկավ: Այդ պայմաններում սևրյան-արևմտյան մտասևեռումը ևս ի դերև ելավ: Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց մեկուսացման մեջ, իսկ պաշտպանական դաշինք կայացնելու նպատակով տեղի ունեցած հայ-վրացական բանակցություններն այն ժամանակվա քաղաքական զարգացումների «տրամաբանական զարգացման» հետևանքով ձախողվեցին: ■

[1] Տես Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 193, 293:

Հղումներ

[2] Տես այդ մասին Վիրաբյան Վ. Հ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ, Եր. ԵՊՀ հրատ., 2016, էջ 625-657:
[3] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 12-14, 21-23:
[4] Տես այդ մասին Վիրաբյան Վ. Հ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները…, էջ 626:
[5] Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 22:
[6] Տես մանրամասն Վիրաբյան Վ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները…, էջ 626-629:
[7] Տես Վիրաբյան Վ. Հ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները…, էջ 629-630:
[8] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 31:
[9] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ. 38:
[10] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 218, թ. 103:
[11] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 46:
[12] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 49:
[13] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 56:
[14] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 58:
[15] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 10:
[16] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 10:
[17] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 10:
[18] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 81:
[19] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 81, թ. 4:
[20] ՀԱԱ, ֆ. 276, ց. 5, գ. 191, թ. 37-41:
[21] Սարդարյան Կ., Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում (Ինչպես կործանվեց Հայաստանի Հանրապետությունը), Երևան «Նաիրի» հրատ., 2007, էջ 101:
[22] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 284:
[23] Տես Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր.: «Նաիրի» հրատ., էջ 155:
[24] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 57, թ. 47:
[25] Տես հանգամանալից Վիրաբյան Վ. Հ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր.. ԵՊՀ հրատ., 2015:
[26] Խատիսեան Ալ., Նշվ. աշխ., էջ 266:
[27] Տես Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն. Սալի և մանգաղի միջև. Մասնատում և խորհրդայնացում. Հատոր IV, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2016, էջ 260:
[28] Տես նույն տեղում:
[29] Տես նույն տեղում:
[30] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 48:
[31] Տես նույն տեղում:
[32] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 211, թ.2138:
[33] Տես Վիրաբյան Վ., Հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները 1918-1921 թթ., 625-657:
[34] Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն.). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. Գ. Գալոյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 312-313:
[35] Տես նույն տեղում, էջ 313:
[36] Տես նույն տեղում:
[37] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 83, թ. 7-9:
[38] Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. . էջ 312-313:
[39] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 154, թ. 250:
[40] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 486, թ. 4:
[41] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 147-148:
[42] Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն.). էջ 312-313:
[43] Տես նույն տեղում, էջ 314:
[44] Տես նույն տեղում:
[45] Տես նույն տեղում, էջ 322:
[46] Տես Հայոց պատմություն. Հատոր IV. Գիրք առաջին. Նորագույն ժամանակաշրջան ((1918-1945 թթ.), Եր., «Զանգակ-97», 2010, էջ 260:
[47] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 180-181:
[48] Տես Հայոց պատմություն. Հատոր IV. Գիրք առաջին. Նորագույն ժամանակաշրջան ((1918-1945 թթ.), Եր., «Զանգակ-97», 2010, էջ 260:
[49] Բաբալեան Արտ., Հայաստանի անկախութեան պատմութիւնը եւ այլ յիշատակներ, Գլէնդել, «Նավասարդ» հրատ., 1997, էջ 180-181:
[50] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 147-148: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 3: գ. 486, թ. 287:
[51] Տես Տեր-Մինասյան Ռ., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 241:
[52] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 150-151:
[53] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 15, թ. 23: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 17:
[54] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 636, թ. 28:
[55] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 19, թ. 31-32: «Յառաջ», Երևան, 10.10.1920, N 221, «Ժողովուրդ», Երևան, 10.10.1920, N 169:
[56] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 150:
[57] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 151:
[58] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 175, թ. 67:
[59] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 221, թ. 150, 153: գ. 602, թ. 84-85: ց. 2, գ. 281, թ. 2:
[60] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 422: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 214-215: ֆ. 200, ց. 2, գ. 102, թ. 1-3:
[61] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 398-399:
[62] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 48:
[63] Տես նույն տեղում:
[64] Տես նույն տեղում:
[65] Լեո, «Անցյալից»: Հուշագրություն, Եր., «Շեմ», էջ 408-409:
[66] Խատիսյան Ալ., նշվ. աշխ., էջ 268:
[67] ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 79, թ. 150:
[68] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 84-85:
[69] ՀԱԱ, ֆ. քաղ. գ. 139, թ. 5:

Տորոնտոյի «Արձագանգ» ամսաթերթը Պարույր Սեւակի մասին

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

Տորոնտոյի Հ. Ե. Դ. «Ս. Զաւարեան» ուխտը 1972-1976 թթ. հրատարակել է «Արձագանգ» ամսաթերթը, որի խմբագիրը նախկին կանադահայ, կյանքի վերջին 16 տարին Արագածոտնի շրջանի Ուշի գյուղի բնակիչ, մշակութային նշանավոր գործիչ, ճանաչված ուսուցիչ Մարգար Շարապխանյանն էր (1937-2023 թթ.): Ամսաթերթին աշխատակցել են տորոնտոհայ գաղթօջախի բազմաթիվ ներկայացուցիչներ՝ Օննիկ Շարապխանյանը[1] (1903-1984 թթ.), հանրածանոթ մտավորականներ ու նորահաս երիտասարդներ:

Ամսաթերթի 1972 թ. 1-10-րդ համարները մեքենագրված են, իսկ 11-րդ համարի առաջին էջում տեղեկություն կա այն մասին, որ անցել են գլանատիպ (գրված է՝ «Աֆսէթ») տպագրության: Լույս է տեսել «Արձագանգ»ի 58 համար. բոլոր համարների բնաբանը մեկն է՝ «ԽՕՍՔԸ ԱՌԱՆՑ ԳՈՐԾԻ ՄԵՌԵԱԼ Է», իսկ 1975 թ. 1-ին համարից սկսած՝ կազմի 4-րդ էջում կոչ կա՝ «Հայը հայուն հետ հայերէն կը խօսի»: Ամսաթերթի 58 համարները ներկայացված են 48 կազմով. 8 կազմում՝ երկուական, մեկ կազմում երեք համարներ են միավորված:

Այս ամսաթերթը շահեկանորեն տարբերվում է Սփյուռքի այդ տարիների կուսակցական հրատարակություններից. լինելով ՀՅԴ օրգան՝ ամեն առիթով անդրադարձել է Խորհրդային Հայաստանի ձեռքբերումներին, մշակութային նորություններին, անաչառ քննարկել հայության կյանքի բազմաթիվ կնճռոտ հարցեր, խոսել ներգաղթի ու հայրենի հողին տեր կանգնելու և Հայրենիքին անձնվիրաբար ծառայելու անհրաժեշտության մասին: Ամսաթերթն ուներ առանձին բաժին, որտեղ ներկայացնում էին վերլուծական հոդվածներ հայրենի մամուլից, քննարկում քաղաքական-տնտեսական տարբեր խնդիրներ:

Արամ Հայկազի (Չեքեմյան, 1900-1986 թթ.) Մարգար Շարապխանյանին հասցեագրած նորահայտ նամակներում[2] նշումներ կան այն մասին, որ գրողը հայաստանյան մամուլից կտրոններ է ուղարկել՝ հրատարակելու համար:

Մարգար Շարապխանյանը տիկնոջ՝ տիկին Էլիզի, որդիների՝ Հովհաննեսի և Վազրիկի հետ, 1977 թ. սկսած, պարբերաբար[3] անցնում էր օվկիանոսը, հայրենի երկրի տիրոջ ու պատրաստակամ ծառայի նվիրվածությամբ վայելում Հայաստան երկրում ապրելու բացառիկ երջանկությունը: Ամենահիշարժանը հանդիպումներն էին մարդկանց հետ:

Պարոն Մարգարը շատ լավ գիտեր Պարույր Սեւակի վայելած համաժողովրդական սիրո մասին, կարդում էր նրա գրքերը. Շարապխանյան ամուսինների ընդարձակ գրադարանում պահվում են բանաստեղծի

հրատարակած ու նրա մահից հետո լույս տեսած բազմաթիվ հատորներ:

1971-ի հունիսի 17-ը մերօրյա պատմության ողբերգական էջերից է:

Ողբից ու կատարվածի պատճառահետևանքային կապերի քննությունից պակաս կարևոր չէր Պարույր Սեւակի հիշատակի հավերժացումը:

««Համազգային» հայ կրթական եւ մշակութային միության «Գլաձոր» մասնաճյուղի գործունէութիւնը: 1969-2019» հուշամատյանի[4] 3-րդ էջում տեղեկություն կա 1971 թ. նոյեմբերի 20-ին Տորոնտոյում կազմակերպված հարգանքի երեկոյի մասին՝ նվիրված Պարույր Սեւակին. ելույթ է ունեցել Հակոբ Կարապենցը (Կարապետյան, 1925-1994 թթ.):

«Արձագանգ»ի մի քանի համարներում անդրադարձ կա Պարույր Սեւակի կյանքին, գրական ժառանգությանը և հիշատակին նվիրված ձեռնարկներին:

Ամսաթերթի 1972 թ. 5-րդ համարը նվիրված է բանաստեղծին:

Համարն սկսվում է «Տարի մը ետք ...» խմբագրական հոդվածով. «Պարոյր Սեւակի անսպասելի մահով Հայաստանի եւ Սփիւռքի Հայութեան սրտին մէջ բացուած վէրքը կը կոտտայ (ցավում է – Մ. Խ.) տակաւին...

Տարի մըն է անցած, բայց մեզի այնպէս կը թուի, թէ կարծես երէկ էր, երբ լսեցինք գոյժը իր վաղահաս կորուստին:

... Այժմ՝ տարի մը ետք, դեռ սգալիր, բայց հիացումով կը խոնարհինք իր գործին ու մտաւորական մարդուն առջեւ՝ «Արձագանգ»ի յետագայ կարգ մը էջերը նուիրելով բանաստեղծին»:

Մարգար Շարապիանյան

Ամսաթերթի խմբագրականին հաջորդում է Հակոբ Կարապենցի վերոհիշյալ ելույթի շարադրանքը:

«... Համակ հայութիւն է Պարոյր Սեւակը: Իր ամենաանձնական ու իմաստասիրական երգերից անգամ հայութիւն է բուրում, քանզի իր ամէն բառը, իր ամէն միտքը, իր կերտած ամէն մի պատկերն ու գոյնը թաթախուած է հայկականութեամբ՝ լի Հայոց աշխարհի բոյրով ու թոյրով, երգով ու լացով, հայ մտածումով ու հայ ներշնչումով»,– այս դիպուկ և բազմախոստում առաջաբանով է սկսվում Կարապենցի հոդվածը:

«Նոր բան ասելու համար չի ժխտել հինը: Նորը կառուցելու համար չի քանդել հինաւուրց սիւնը, այլ նախ սովորել է,– գրում է Կարապենցը և մեկնաբանում:– Գնացել է ակունքին, սերտել մեր ոսկեդարը, մտերմացել Նարեկացու, Ֆրիկի ու Քուչակի հետ, տաղ է ասել մեր գուսանների ու աշուղների հետ, Սայաթ-Նովայի խաղերի գունեղ պարտէզն է մտել եւ տարիներ շարունակ հայոց մատենագրութեան ոսկեփոշին ծծել: Այդքանով չի բաւականացել: Շուռ է եկել, տակնուվրայ արել հայ դասական եւ արդի գրականութիւնը, նաւարկել ռուսական գրականութեան ծովում եւ հասել միջազգային ջրեր՝ միտքը թաթախելով արեւմտեան մշակոյթի ոլկեանում»:

Կարապենցը հատուկ վերաբերմունք և խոնարհում ունի Պարոյր Սևակի բանաստեղծական ու գիտական հարուստ ժառանգության նկատմամբ. «Գիտնականի, իմաստասէրի ու բանաստեղծի մի հրաշալի համադրութիւն է Պարոյր Սեւակը: Հին տաղերի ու խաղերի չափն ու կառոյցը ուսումնասիրած մի վարպետ, որը, հինը իւրացնելով, նորն է ասում այնպէս, ինչպէս չի ասել եւ ոչ մի բանաստեղծ:

Որովհետեւ Պարոյր Սեւակը եզակի է:

Ինքնութիւն է, ինքնուրոյնութիւն եւ բացարձակապէս Հայ»:

Հանրահայտ է հայության բացառիկ վերաբերմունքը «Անլռելի զանգակատուն» պոեմի նկատմամբ: Ահա Հակոբ Կարապենցի հուզիչ խոսքն այդ ստեղծագործության մասին. «Որքա՜ն անկատար պիտի լինէր մեր վերջին կէս դարի գրականութիւնը առանց «Անլռելի զանգակատուն»ի, որի մեծութեան առջեւ խոնարհում է միտքը, եւ մեծանում խոնարհների հոգակալած կերպարը: Այդ ղօղանջ չէ, ոչ էլ համազանգ, այլ՝ ամբողջ մի ժողովուրդի համանուագ՝ հայաթոյր ու հայաբոյր, հայալար, հայաշունչ ու հայաստեղծ: Այդտեղ ամէն մի բառ վէմ է, եւ ամէն մի վէմ՝ սիւնաքարը այն հոյաթեւ կառոյցի, որի գմբէթը, երկնքի կրծքին խրած, բարձրանում է զանգակատունը՝ անլռելին, անկորնչելին, անկրկնելին:

Այստեղ բանաստեղծը կանգնել է հայոց դարերի գագաթին, յառել հեռուների խորքը եւ սերտել մագաղաթների տեսանելին ու անտեսանելին: Սկսել է սկիզբից եւ վերջացրել սկիզբով: Մտել խրճիթներից ներս, բռնել ժողովուրդի զարկերակը եւ արեան հարազատ զարկով քանդակել նրա հոգին՝ երբեմն բիրտ, ինչպէս ապառաժ, մերթ քնքուշ, ինչպէս արարատեան զեփիւռ, եւ յաճախ՝ արբշիռ, ինչպէս Հայրենիքի գոյներով յագեցած մի բանաստեղծ:

Եւ որչափ խորացել է քերթողը, այնչափ յստակացել է նրա երգը՝ հասնելով մարգարէական պարզութեան: Եւ որքան Պարոյր Սեւակը մօտեցել է հողին ու մարդուն, այնքան բիւրեղացել է նրա խօսքը՝ դառնալով Մեսրոպեան պատգամ: Եւ առաւելապէս այդտեղ է՝ Հայոց զանգակատան համեստ ու յամառ կամարների տակ, որ նա համադրուել է համայն հայութեան հետ,

ափերի մէջ առել իր բազմատոչոր սիրտը եւ բեկոր առ բեկոր, մասունքի պէս բաշխել ամէնքին, ամէնուր... »:

Այս հոդվածին հաջորդում են Պարոյր Սեւակի «Մայրենի լեզու», «Սերունդների հերթափոխությունը», «Հպանցիկություն» բանաստեղծությունները և կենսագրական տեղեկություններ նրա մասին:

Հակոբ Կետիկյանի «Պարոյր Սեւակի յիշատակին» հոդվածը երախտագետ ու երախտապարտ ընթերցողի խոսք է բանաստեղծի մասին, որի «բանաստեղծութիւնները հաց են՝ հոգին կշտացնող, ջուր են՝ սիրտը զովացնող, շունչ են՝ թոքերը ուռեցնող, գինի են՝ արբեցնող, արիւն են՝ եռացող, արեւ են՝ լուսաշող, սուր շեղբ են՝ նկարագիր կերտող, լոյս կը սփռեն խաւարամիտ մարդոց հոգիներուն մէջ, լոյս բոլորին – «Եղիցի լոյս»»:

«Մտածումներ Սեւակի մասին» խորագրի տակ ամսաթերթի այս համարում հրատարակված են Մարտիրոս Սարյանի (1880-1972 թթ.), Սիլվա Կապուտիկյանի (1919-2006 թթ.), Վահագն Դավթյանի (1922-1996 թթ.), Համո Սահյանի (1914-1993 թթ.) և Մինաս Թեոլեոլյանի (1913-1997 թթ.) խոսքերից հատվածներ Պ. Սեւակի մասին:

Մարգար Շարապխանյանի «Երթ մահաբեր» երկարաշունչ բանաստեղծությունը նվիրված է Պ. Սեւակի հիշատակին և անմահությանը.

Ֆիզիքական մահդ անգութ
Իմաստ չունի մեզի համար
– Ճակատագրի պարզ խաղ մ՚է ան –
Զի մենք գիտենք
Եւ քա՛ջ գիտենք,
Թէ քու հոգին
Ու մանաւանդ՝ քու շեփորած Հայո՛ւ Ոգին
Պիտի տոկայ,
Պիտի սաւառնի Հայրենիքի
Եւ Սփիւռքի ժողովուրդիդ սրտերուն մէջ,
Ու Ոգին այդ անջնջելի
Պիտի դարբնէ նո՛ր Պոէտներ,
Նո՛ր Պարոյրներ,
Նո՛ր Սեւակներ,
Որ պիտի գան շարունակել
Վազքն այդ քու չվերջացած
Ու բոցը քու գաղափարիդ
– Յաւերժ անմար –
Պիտի անոնք փոխադրեն
Երազներու Մե՛ծ կապարին ...
Պարոյր Սեւակ,
Դուն կը մնաս,
Պիտի՛ մնաս,
Անմահապու մահէդ ետք ալ
– Հոգիներուն մէջ քեզ պաշտող –
Պայծա՛ռորէն,
Յաւե՛ր ժորէն,
Ինչպէս էիր,
Երբ դու կայիր[5] ...

«Արձագանգ» ամսաթերթի 1973 թ. 4-րդ համարը վիրված է Սարդարապատի հերոսամարտին, խմբագրականը վերնագրված է՝ «Սարդարապատի հրաշքը»:

«Եթէ կը հաւատանք Սարդարապատին, պէտք է հաւատանք նաեւ նո՛ր Սարդարապատներ արձանագրելու գաղափարին»,– սա է հոդվածի եզրափակիչ տողը:



Հակոբ Կարապենց

Խմբագրականին հաջորդում է Պարոյր Սեւակի «Սարդարապատ» բանաստեղծությունը, որը, Էդգար Հովհաննիսյանի (1930-1998 թթ.) երաժշտությամբ, դարձել է շատ սիրված երգ:

«Արձագանգ»ի 1974 թ. 5-րդ համարում տպագրված է Հայր Եփրեմ Տեր-Ղազարյանի (1920-1993 թթ.) «Պարոյր Սեւակի ծննդավայրին մէջ» հուզիչ ու քնարական շնչով գրված հոդվածը՝ բանաստեղծի ծնողների՝ Ռաֆայել (1892-1975 թթ.) և Անահիտ (1894-1982 թթ.) Սողոմոնյանների հետ հանդիպման մասին:

Արարատի հսկողության տակ ճանապարհը ձգվում է դեպի Սովետաշեն: Պատմողն ու Տեր Գուրգեն քահանան «Պարոյր Սեւակի արկածի վայր»ում հարգում են բանաստեղծի հիշատակը: «Երա՞զ [է], թէ՞ իրականութիւն» երկմտանքը բնորոշում է Հայր Եփրեմ Տեր-Ղազարյանի տեսածն ու զգացածը:

Ահա և բանաստեղծի տունը: Ծանոթանում են տանտերերի հետ. «Պարոյր Սեւակի մայրն է՝ գիւղական հագուստով եւ խելացի աչքերով, որ մեզ վեր կ՚առանջնորդէ: Ահա նաեւ Սեւակի հայրը՝ շէնշող ու կատակասէր: Առանց տատամսումի համբոյր մը կը դրոշմեմ ճակտին՝ ըսելով.

– Այս համբոյրը արտասահմանի հայերից եմ բերել ձեզի եւ Պարոյր Սեւակին:

Սրբազան ամփոփութեամբ կը մտնեմ Սեւակի գրասենեակը:

Յուզումը տարած է զիս տարբեր աշխարհ: Ուրեմն, հո՞ս էր, որ հանճարեղ բանաստեղծը կ՚երկնէր իր հոյակապ ստեղծագործութիւնները:

Սեւակի մասին զանազան հարցումներ կ՚ուղղենք հայրիկին»:

Ամուսինները հյուրասիրում են հյուրերին: «Հաճոյքով կը բոլորուինք սեղանին շուրջ, Տէր հայրը կ՚օրհնէ սեղանը: Կը խօսինք, աւելի ճիշտը կը խօսեցնենք հայրն ու մայրը:

Տէր Գուրգէնը, ըստ հայրենի սովորութեան, կը վերցնէ գինիի բաժակը ու կ՚ըսէ.

– Սիրելի՛ հայրիկ, դու ոչ միայն Պարոյր Սեւակի հայրն ես, այլ[եւ] ամբողջ Հայութեան: Այս բաժակը բարձրացնում եմ ձեր գերդաստանի կենացը:

Բաժակները պարպելէ ետք, մայրը, խօսքի մէջ մտնելով, կ՚ըսէ.

– Մի ցանկութիւն ունեմ: Էս լաւաշ հացերը տար արտասահման եւ հոն բաժնիր նշխարի նման:

– Գեղեցիկ գաղափար է սա,– կ՚ըսեմ,– սիրով կը տանիմ եւ կը կատարեմ քու ցանկութիւնը»:

Ամսաթերթի այս համարում հրատարակված է շատ խոսուն հատված Պ. Սեւակի «Դարակեսի հիմնը» բանաստեղծությունից.

Հարիւր տարին մէկ են ծնւում մեծութիւններն
այս աշխարհի,
Բայց ամէն օր հարիւր մեծ է գալիս աշխարհ,
Ծնւում են մեծ, բայց չեն թողնում, որ դառնան մեծ:
Ու գալու է մի ժամանակ,
Երբ որ պիտի մարդիկ նաեւ մերպէսներին
երկրպագեն

Ո՛չ կուռքի պէս,
Ո՛չ էլ Աստծու,
Այլ ... հերոսի:

Ամսաթերթի 1975 թ. 2-րդ համարում հրատարակված են Պ. Սեւակի «Մեծ ուղտի փոքրիկ ականջում» և «Հորդոր», իսկ 1976 թ. 6-7-րդ միացյալ համարում՝ «Իմ ժողովրդին» բանաստեղծությունները:

Հասկանալի պատճառներով, «Արձագանգ»ի ծավալը և հնարավորությունները սահմանափակ էին: Ամսաթերթը հրատարակվում էր աշխատակիցների ջանքերով և առանց բաժանորդագրության, հիմնականում Տորոնտոյում հանգրվանած հայության, Շարապխանյան ամուսինների ընկերների ու մտերիմների (սրանց թվում էին Արամ Հայկազն ու Հակոբ Կարապենցը) նվիրատվություններով:

Վերջում պարտավոր եմ հավելել՝ տորոնտոյաբնակ հայությունը 2005 թ. մայիսի 20-ին և 2012-ի փետրվարի 26-ին հուշ-երեկոյով ու հուշահանդեսով հարգել է Պարոյր Սեւակի հիշատակը (««Համազգային» հայ կրթական եւ մշակութային միության «Գլաձոր» մասնաճյուղի գործունէութիւնը: 1969-2019»: 159, 212), իսկ բանաստեղծական երեկոներին հաճախ են արտասանել ու արտասանում են բանաստեղծի ստեղծագործություններից:

Պարոյր Սեւակ բանաստեղծի, գիտնականի համբավը վաղուց էր անցել սահմանները և հասել բոլոր հայերի սրտերին: «Արձագանգ»ի օրինակը պարզապես հաստատում է օրինաչափությունը. իսկական արվեստն ամենահաղթ է ու հավերժական:

Խորհրդահայ և սփյուռքահայ բանաստեղծներից ոչ մեկի ստեղծագործությունն «Արձագանգ»ի 58 համարներում ավելի լայն վերլուծական պատկերով ու ծավալով ներկայացված չէ:

Հղումներ

1 «Արձագանգ»ում Օնիկ Շարապխանյանի հրատարակած հոդվածներից երկուսը՝ «Կաղանդ է» (1972 թ., 12-րդ համար) եւ «Գուշակութիւններ» (1973 թ., 2-րդ համար), ներկայացրել եմ «Դրօշակ» ամսագրի 2024 թ. 9-րդ համարում:

2 Մարգար Շարապխանյանի արխիվում պահպանվել են վաթսունից ավելի նամակներ, որոնց հեղինակները մեր մշակույթի ծանոթ անուններից են: Որպես Մարգար Շարապխանյանի «Երկեր»ի կազմող և խմբագիր՝ ծրագրել եմ դրանք ներկայացնել գրքի հինգերորդ հատորում:

3 2007-ին վերջնականապես Ուշի տեղափոխվելուց առաջ նրանք ինն անգամ եղել են Հայաստանի Հանրապետությունում:

4 Մեծածավալ այս հատորն ինձ նվիրել է տիկին Էլիզ Շարապխանյանը: Ջարմանալի է, բայց գրքի հրատարակության թիվը նշված չէ: Ենթադրում եմ՝ պիտի լինի՝ 2020, Տորոնտո:

5 Այս բանաստեղծությունը հրատարակված է նաև «Սփիւռք» (Բեյրութ) շաբաթաթերթի 1972 թ. հունիսի 18-ի՝ Պարոյր Սեւակի հիշատակին նվիրված համարում:

Պարոյր-Սեւակի և նրա տիկնոջ՝
Նելլի Մենաղարաշվիլիի շիրմաքարը

Դիմում՝ լաւ բան մը ընելու

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Ամանորի բարեմաղթութիւններու փոխանակման ատեն բարեկամներէս մէկը արտայայտած էր այն միտքը թէ աշխարհի ներկայ խառվայոյզ վիճակին մէջ ամեն մէկս ի՛նք լաւ բան մը ընէ, որ դրական քայլ մը առած ըլլայ:

Այս ըսածը զիս տարաւ ետ՝ երկրորդական ուսմանս վերջին երկու տարիներուս, – երբ օտար վարժարան կը յաճախէի, քանի որ իմ ազգային վարժարանը չունէր այդ կարգերը, – երբ բակին մէջ կը զրուցէի հայ դասընկերներուս հետ օրուան խառնակ պայմաններուն մասին ու արտայայտեցի նման միտք մը, թէ մեզմէ ամեն մէկուն կ՚իյնայ լաւ վարք մը ունենալ՝ լաւ բա՛ն մը ընել եւ եթէ կարենանք մեզմէ զատ մէկ եւս մեզի ընկերակցնել, մեզմէ ակնկալուած նուազագոյնը մէկը ըրած կ՚ըլլանք:

Այս գրութիւնս կրնար այստեղ կանգ առնել, քիչ մը աւելի երկար յուշագրութեան մը մաս կազմել կամ կրնար շարունակուիլ՝ «լաւ բաներու» թուումով: Սակայն կեանքը անակնկալներով կը յառաջանայ, եւ քանի մը օր ետք դէմ-յանդիման գտնուեցայ կարեւոր խնդրի մը, որուն լուծումը կրնայ ամենէն կարեւոր «լաւ բաներէն» մէկը հանդիսանալ եւ որուն յանձնառուները կրնանք ըլլալ մենք բոլորս, յատկապէս անոնք, որոնք կապ ունին գիր ու գրականութեան, ինչպէս նաեւ կը գործեն հանրային ծառայութեան մէջ:

Այդ լաւ բանը արխիւ պահելու հարցն է:

Ասկէ առաջ արծարծած եմ այս հարցը որպէս հաւաքական պատասխանատուութիւն եւ այստեղ վերստին պիտի չբանամ այ՛դ թղթածրարը:

Այս անգամ կ՚ակնարկեմ անհատակա՛ն արխիւներուն, իսկ դրդապատճառս կու գայ երկու հանգուցեալ գրողներու միջեւ փոխանակուած նամականիէ մը, որուն առնչութեամբ որոշ ստուգումներ ընելու համար ինծի հետ կապ հաստատուեցաւ: Եւ ահա այդ առթիւ է, որ երեւան եկաւ այն տխուր պատկերը, որուն սրբագրութեան համար բա՛ն մը կայ ըլլալիք:

Արդ կը պարզուի այն, թէ արխիւ պահելու սովորութիւն չունինք: Կրնայ ըլլալ շատերու քով սակաւաթիւ կամ հսկայ քանակութեամբ նիւթեր կուտակուած են, բայց որեւէ ձեւով չեն դասաւորուած՝ յաճախ ենթակայ ի վերջոյ անհետանալու: Համեստօրէն մենք մեզի կարեւորութիւն չենք ընծայած, աշխատած ենք ու ծառայած՝ առանց պահ մը մտածելու, թէ որքան ալ մեզի անձնապէս անկարեւոր թուած ըլլայ մեր ըրածը, ան մաս կը կազմէ ոչ միայն մեր կենսագրութեան, այլեւ մեր հաւաքականութեա՛ն պատմութեան, թէկուզ մեր անմիջական համայնքին, բայց նաեւ թերեւս ամբո՛ղջ հայութեան:

Ուստի, յարգելի ու սիրելի գործակիցներ, աշխատակիցներ, ծանօթներ ու անծանօթներ, կը դիմեմ բոլորի՛դ, որ Նոր տարուան ձեր կարեւոր որոշումը՝ լաւ բա՛ն մը կատարելու, վերաբերի ամենէն առաջ ձեր արխիւը ստեղծելու, թէ չէք ստեղծած արդէն, ու զայն

դասաւորելու, որպէսզի եթէ ձեզմէ ետք եկողը, նոյնիսկ ձեր հարազատներէն մէկն ու մէկը, դժուարութիւն չունենայ որոնելու եւ գտնելու ձեր կեանքի այս կամ այն պահուն ըսածը, ըրածը, մէկ դրուագը կամ մանրամասնութիւնը:

Թելադրութիւնս է, որ օրագիր պահէք՝ արձանագրէք թէկուզ մէկ-երկու բառով ձեր ո՛ւր գացած ըլլալը, ի՛նչ ժողովի կամ ձեռնարկի մասնակցած ըլլալը, ի՛նչ յանձնառութիւն վերցուցած ըլլալը, ի՛նչ կարդացած ըլլալը եւ այլն: Դասաւորէք ձեր օրագրութիւնը թուականի կարգով:

Պահէք ձեր ղրկած նամակներուն պատճէնները, ձեր ստացած նամակները՝ ըստ հասցէատէրի ու ըստ թուականի: Երբեմն նոյնիսկ ըստ արծարծուող նիւթերուն: Պահէք ու դասաւորէք նոյն ձեւով ձեր լուսանկարները՝ մատնանշելով վայրը, լուսանկարուած անձերու անունները եւ թուականը: Եթէ կը գրէք, նոյնպէս կանոնաւոր պահէք ձեր գրութիւնները՝ նշելով ո՛ւր լոյս տեսած ըլլալը (գէթ առաջին անգամ), թուականը, այլեւ ի հարկին դասաւորելով ըստ նիւթի:

Եթէ նկարիչ կամ քանդակագործ էք, լուսանկարեցէք ձեր իւրաքանչիւր ստեղծագործութիւնը, ան տակաւին ձեր սեփականութիւնը մնացած ըլլայ կամ արդէն ուրիշներու քով ժամանած ըլլայ: Եթէ երաժիշտ էք, նոյնպէս արձանագրեցէք ու պահպանեցէք ձեր յօրինումները, նոյնիսկ եթէ անոնք ձայնապնակի մը վրայ ալ գոյութիւն ունենան:

Այսօր, հաղորդակցական ներկայ միջոցներով, այնքան դժուար չէ այս բոլորը իրագործելը: Կարեւոր է նաեւ, որ թուղթի վրայ առկայ ձեր արխիւները թուայնացուին ու պահպանուին: Վերջապէս, բոլորին պարագային՝ ապահով ըլլալով, որ արխիւի երկրորդ օրինակ մը ալ գոյութիւն ունենայ:

Այս բոլորը նաեւ հաւաքականութեան քով զետեղելու ու պահելու հարցն ալ՝ ուրիշ, որուն համար նոյնպէս ընելիք ունինք՝ հաւաքաբա՛ր: ■

Անձնուրացութիւն, թէ ժողովրդավարութիւն

Պարգև Աւագեան
Աւարտած է Հալէպի պետ. համալսարանի Երկրաչաբական բաժնի Էլեքդրոն ճիւղը:
Վարած է ուսուցիչի և դաստիարակի պաշտօններ: Հրապարակած է յօդուածներ «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:

Ժողովրդավարութեան մեծագոյն հենարանը մեծամասնութեան տեսակէտի առկայութիւնն ու ի զօրու ըլլալու հանգամանքն է: Իսկ այլ բացատրութեամբ կարելի է բնութագրել անձնուրացութեամբ. յատկապէս երբ որոշում կայացնող օղակի մէջ կը գտնուիս, ու պարտաւոր ես առաջնորդուիլ մեծամասնութեան տեսակէտով: Նոյն իսկ եթէ այդ մէկը քու անձնական մտածողութեանդ եւ համոզումներուդ երբեմն կրնայ հակադրուիլ: Աւելին է երբ այդ որոշումը կայացնող օղակին ներկայացուցիչն ես, յաւելեալ պարտաւորութիւն ունիս պաշտպանելու այն տեսակէտը եւ որոշումը, որուն այդքան ալ դուն կողմ չէիր:

Հաւաքական կեանքը կ'իմաստաւորուի եւ կը ստանայ դիմագիծ ու կը դառնայ միս ու ոսկոր, երբ հոն կը գործէ «մենք»ը փոխան «ես»ի: Հաւաքականութիւնը կը կորսնցնէ իր հմայքը երբ կը պատահի հակառակը, այսինքն գերիշխող կը դառնայ եսը փոխան մենքի: Հաւաքական կեանքին մէջ, ընդունելի չէ՝

երբ կը քննադատես ու հեռու կը մնաս.

երբ կը թելադրես ու չես գործադրեր.

երբ բեմն ես՝ ղեկավար ես ու երբ վարն ես արդէն բացակայ ես:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը դարձած է ոյժ ու ճառագայթող ներկայութիւն շնորհիւ մէկ ու միակ ճշմարտութեան, որ հոն ներկայ է «մենք»ը իսկ ղեկավարը ունի յաւելեալ պարտաւորութիւններ եւ ոչ մենաշնորհումներ:

ՀՅԴն ոչ թիւ է, ոչ ալ թուական.

ՀՅԴն ոչ դիրք է, եւ ոչ ալ կիրք.

ՀՅԴն ոչ գաղափար է, եւ ոչ ալ կաղապար.

ՀՅԴն յանձնառութիւն է եւ զոհողութիւն.

ՀՅԴն մեր իրականութեան եւ նոր պատմութեան ազգային գիտակցութեան խտացումն է եւ հպարտութիւնը:

Զգոյշ եւ զգոյշ

Մեր ընդդիմախօսները թող լրջանան, մեր թշնամիները զգաստանան..

ՀՅԴ Բյուրոյի հայտարարությունը

Աշխարհաքաղաքական ներկա զարգացումների խորապատկերի վրա Հայաստանի շուրջ ձևավորվող անվտանգային սպառնալիքները օրեցօր դառնում են առավել անմիջական և խիստ վտանգավոր:

Ադրբեջանի ղեկավարության հայատյաց, ռազմաշունչ և ծավալապաշտական հայտարարություններն ու քայլերն ավելի ու ավելի սանձարձակ բովանդակություն են ստանում և վերածվում են վերջնագրերի: Ադրբեջանը, օգտվելով աշխարհաքաղաքական անկայունությունից և ունենալով Թուրքիայի անվերապահ ու ամբողջական աջակցությունը, բազմապատկելով իր ռազմական կարողությունները, փորձում է պարտադրել Հայաստանին գնալու կործանարար պահանջների բավարարմանը՝ լինի դա Հայաստանի գործող վարչախմբի համաձայնությամբ կամ նոր պատերազմ սանձազերծելու միջոցով:

Հայաստանի իշխանություններն, իրենց հերթին ահաբեկելով սեփական ժողովրդին վերահաս պատերազմի հնարավորությամբ և այդ պատերազմում անխուսափելի պարտությամբ, լծվել են թուրք-ադրբեջանական տանդեմի անվերջանալի պահանջները հիմնավորելու և բավարարելու ազգակործան գործին: Ըստ այդմ, պատերազմից խուսափելու այս վարչախմբի առաջարկած իբրև թե լավագույն մարտավարության էությունը պարտվողականությունն ու զիջողականությունն է հանուն կարծեցյալ խաղաղության, որի «երաշխավորն» իրականում թուրք-ադրբեջանական տանդեմն է լինելու:

Պատրանքներ չպետք է ունենալ. անպաշտպան խաղաղությունը թվացյալ անվտանգություն է հանձնված թշնամու բարեհաճությանը:

Խաղաղությունը անշրջելի և կայուն կարող է լինել միայն վիճելի հարցերի արդար կարգավորման և ռազմաքաղաքական հավասարակշռության պայմաններում: Հակառակ դեպքում դա կապիտուլյացիա է և նոր պատերազմի սաղմնավորում:

Հայ ժողովրդի և նրա ազգային ուժերի պատմական առաքելությունն է ազատվել կապիտուլյացիա՝ թե պատերազմ կործանարար երկընտրանքից և հաստատել իրական՝ անշրջելի և արդար խաղաղություն: Իսկ մեր անժամանցելի իրավունքներից և կենսական շահերից հրաժարումը բերելու է ոչ թե խաղաղություն, այլ հայկական ինքնության ու հայոց պետականության կորուստ:

Հետագա անդառնալի կորուստներից խուսափելու ու Հայաստանի դիմագրաված գոյութենական մարտահրավերները հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է բեկում մտցնել իրավիճակի մեջ, ձևավորելով նոր որակի իշխանություն և հաստատելով երկրի զարգացման ազգային պետական ուղեգիծ:

Հրատապ անհրաժեշտություն է արմատապես փոխել կառավարության քաղաքականությունը՝ հետևյալ առաջնահերթ ուղղություններով.

ա) Հայկական ինքնության և հայոց պետականության պահպանման օրակարգի շուրջ համահայկական զորաշարժի իրականացում:
Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական ժխտողականությանը նպաստելը, Արցախի ժողովրդի էթնիկ զտումներն ու հայրենազրկումը անհետևանք թողնելը՝ գոյութենական սպառնալիք են հայկական ինքնությանը, Հայաստանի ինքնիշխանությանը և վավերացնում են ուժի դիրքերից հարցեր լուծելու նախադեպը:

բ) Պաշտպանության գործում համաժողովրդական մասնակցություն ապահովելու տրամաբանությամբ համահայկական առաջնահերթ օրակարգ դարձնել բանակի և պաշտպանության ու անվտանգության մյուս համակարգերի հրատապ վերակառուցումը՝ առկա մարտահրավերների հաշվառմամբ:

գ) Որդեգրել անվտանգային նոր ճարտարապետության ձևավորմանը և դիվանագիտական դիրքերի վերականգնմանը միտված որակապես այլ բովանդակություն ունեցող արտաքին քաղաքականություն, ինչը ենթադրում է ռազմավարական հարաբերությունների հաստատում ընդհանուր աշխարհաքաղաքական նպատակներ հետապնդող երկրների և դաշինքների հետ, որոնց անմիջական շահերից է բխում հայկական կենսունակ պետության գոյությունը: Այս մոտեցմամբ ամրապնդել Ռուսաստանի հետ ռազմավարական դաշնակցային հարաբերությունները, Իրանի հետ կնքել ռազմաքաղաքական դաշինք, զարգացնել տարածաշրջանից դուրս այլ ուժային կենտրոնների և Արևմուտքի հետ փոխլրացնող հարաբերությունները:

Հակառակ ներքին ու արտաքին դավադիր ծրագրերի, հայության արժանապատվության և լինելիության պայքարը պետք է շարունակվի:

Կոչ ենք անում ազգային բոլոր ուժերին միավորելու իրենց ջանքերը՝ ապազգային իշխանություններին հեռացնելու, հայ ժողովրդին ու մեր պետականությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու, նոր որակի ազգային իշխանություն ձևավորելու և համահայկական կարողականությամբ Ուժեղ Հայաստան կառուցելու գործում:

Դաշնակցությունը պատրաստակամ է համագործակցել բոլորի հետ, ովքեր կիսում են այս մոտեցումները և պատրաստ են պայքարելու հանուն արժանապատիվ ու անվտանգ Հայաստանի ու Արցախի:

18. 01. 2025

Հունվարի 28-ը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի օրն է

ԴՐՕՇԱԿ